

016:4  
12-31



ՀՈԿՅԱՆՆԵՍ  
ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2011

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
БИБЛИОТЕКА ИМ. САРКИСА И МАРИ ИЗМИРЛЯНОВ  
ОТД. СТАРОПЕЧАТНЫХ И РЕДКИХ КНИГ И ЛИТ.  
ИСКУССТВА**

**SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY OF  
YEREVAN STATE UNIVERSITY  
DEPARTMENT OF RARE, OLD-PRINTED AND ART  
LITERATURE**

**ОВАНЕС БАРСЕГЯН  
БИОБИБЛИОГРАФИЯ**

**HOVHANNES BARSEGHYAN  
BIOBIBLIOGRAPHY**

**ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
ЕРЕВАН - 2011**

**YSU PRESS  
YEREVAN - 2011**

016:4

Բ-37

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎ. ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՆԱՏԻՊ, ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ  
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ

---

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2011

ՀՏԳ 01 : 809.198.1  
ԳՄԴ 91.9 : 81 + 81.2 Հ  
Բ 371

*Նվիրվում է պրոֆ. Հ. Խ. Բարսեղյանի 90-ամյակին*  
*Посвящается 90-летию проф. О. Х. Барсегяна*

Կազմ. և ծնթգ. հեղ.՝ Հասմիկ Հայրապետյան  
Առաջաբ. Վլադիմիր Մաղալյանի  
Ռուս. խմբ.՝ Տիգրանուհի Հակոբյան

Сост. и авт. примеч.: Асмик Аўрапетян  
Предисл. Владимира Магальяна  
Ред. рус.: Тиграну Акоюн

Մասնագիտ. խորհուրդ՝ քաղ. գ. թ., դոց. Աշոտ Ալեքսանյան (տնօրեն),  
Ֆիզմաթ. գ. թ. Հասմիկ Դուրգարյան (բաժնի վարիչ), Արմինե Սարյան (մա-  
մուլի բաժնի աշխատակից)

Բ 371 Հովհաննես Բարսեղյան: Կենսամատենագիտություն /  
ԵՊՀ, Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվ. գրադ.;  
Կազմ.՝ Հ. Գ. Հայրապետյան; Առաջաբանի հեղ.՝ Վ. Ս.  
Մաղալյան; Մասնագիտ. խորհուրդ՝ Ա. Ալեքսանյան և  
նորիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2011. – 100 էջ:

ԵՊՀ գրադարան




S00188241

ՀՏԳ 01 : 809.198.1  
ԳՄԴ 91.9 : 81 + 81.2 Հ

ISBN 978-5-8084-1457-0

© ԵՊՀ Ս. և Մ. Իզմիրլյանների անվ.  
գրադարան, 2011 թ.



## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Կենսամատենագիտությունը նվիրված է հայերենագիտության նվիրյալ, վաստակաշատ համալսարանական, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Յ. Խ Բարսեղյանի 90-ամյակին:

Չայ լեզվաբանության երախտավորի կյանքն ու գործունեությունն ուրվագծող առաջաբանին (հեղ. Վ. Սաղայան) հետևում է մատենագիտական նկարագրությունը, որը բաղկացած է երկու հիմնական բաժնից: Առաջինում առանձին մասնաբաժիններով ներկայացված են Յ. Բարսեղյանի հեղինակած նյութերը՝ մենագրություններ, բառարաններ ու տեղեկատուներ, այլ գրքերում զետեղված նյութեր, խմբագրած գրքեր, զեկուցումներ, հանդեսներում ու թերթերում հրատարակված գիտական և հրապարակախոսական հոդվածներ, գրախոսություններ, բանավեճեր ու հարցազույցներ: Երկրորդ բաժնում անվանի լեզվաբանի մասին հրատարակված նյութերն են՝ սկզբում գրախոսությունները, ապա կյանքը և գործունեությունը լուսաբանող հրապարակումները: Երկու բաժնում էլ գրախոսությունները հղումներով կապվում են գրախոսվող նյութերին: Լրացումներով ու փոփոխություններով վերահրատարակված գրքերը, ինչպես նաև տարբեր պարբերականներում վերահրատարակված հոդվածները հիմնականում ներկայացված են մեկ նկարագրությամբ: Բացառություն են կազմում կրկնվող այն նյութերը, որոնք հրապարակված են և՛ գրքում, և՛ պարբերականում: Նման դեպքերում տրվում են թե՛ մեկի, թե՛ մյուսի տվյալները՝ դրանց միջև առկա կապի հղումով:

Նկարագրությունն ուղեկցվում է նյութի բովանդակությանը վերաբերող ընդարձակ ծանոթագրությամբ, որի միտումն է՝ հնարավորինս օգնել հետազոտողին՝ նախնական պատկերացում կազմելու տվյալ նյութի մասին, և հատկապես այն նյութի, որը, հրապարակված լինելով մամուլում, ձեռք բերման տեսանկյունից երբեմն դժվարանատչելի է:

Նյութերը նկարագրված են ըստ «Տպագիր երկերի մատենագիտական նկարագրության» 7.1-84 պետստանդարտի: Նկարագրությունները համարակալված են, դասավորված ժամանակագրական սկզբունքով, որի շրջանակում ունեն նաև այբբենական ենթադասավորում: Նյութերի բնագրային խորագրերը թարգմանաբար ներկայացված են ռուսերեն: Կազմողի հավելումները տրված են քառակուսի փակագծերով ([ ]):

Մատենագիտությունն ուղեկցվում է լրացուցիչ տեղեկատվությամբ (հայ. և ռուս.)՝ Հ. Բարսեղյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերի ժամանակագրական և վերնագրերի ու նկարագրված պարբերականների այբբենական ցանկերով:

Վերնագրային ցանկում քառակուսի փակագծերով նշված են կազմողի ժանոթագրությունները ինչպես հեղինակային գործառույթի (հեղինակ, կազմող, խմբագիր ևն), այնպես էլ աշխատանքի տեսակի (մենագրություն, հոդված, զեկուցում ևն) կամ դրա՝ այլ հրատարակություններում (հանրագիտարան, ժողովածու ևն) զետեղված լինելու մասին:

Գիրքն ունի նաև հավելվածի բաժին, որտեղ զետեղված են հրապարակված նյութերից քաղված մեջբերումներ ինչպես լեզվաբանի մտքերից, այնպես էլ ուրիշների՝ նրան և նրա գիտական աշխատանքները բնութագրող տողերից: Մեր համեստ կարծիքով՝ սույն հավելվածը կարող է օգտակար լինել հատկապես այն ընթերցողներին, որոնց նպատակն է ձեռք բերել Հովհ. Բարսեղյանի կյանքին ու գիտական գործունեությանը վերաբերող լրացուցիչ նյութեր: Հավելվածի բոլոր մեջբերումները հղումներով կապվում են մատենագիտական ցանկում առկա համապատասխան բնագրերին:

## ОТ СОСТАВИТЕЛЯ

Библиография посвящена 90-летию известного арменоведа, заслуженного сотрудника Ереванского государственного университета, доктора, профессора филологических наук О. Х. Барсебяна.

За предисловием (авт. В. Магальян), представляющим жизнь и научно-педагогическую деятельность признанного армянского лингвиста, следует библиографическое описание, которое состоит из двух основных разделов. В первом - отдельными подразделами представлены авторские материалы Ов. Барсебяна: монографии, словари и справочники, отредактированные им книги, доклады, научные и публицистические статьи, рецензии, дискуссии и интервью. Во втором разделе - рецензии и материалы, освещающие жизнь и деятельность профессора. В обоих разделах рецензии связаны ссылками с рецензируемым материалом. Книги, переизданные с дополнениями и изменениями, как и статьи, переопубликованные в разной периодической печати, в основном представлены одним описанием. Исключение составляют статьи, которые опубликованы и в книге, и в периодической печати: в этом случае представлены ссылки о связи между ними.

Описание сопровождается обширным примечанием, относящимся к содержанию материала с намерением помочь читателю составить представление о данном материале и, в особенности, о том материале, который издан, но труднодоступен.

Материалы описаны по "Библиографическому описанию печатных сочинений" 7.1-84 госстандарта. Описания пронумерованы, упорядочены по хронологическому принципу, внутри которого также представлен алфавитный порядок заглавий. Оригинальные заголовки материалов переведены на русский язык. Авторские дополнения в описании даны в квадратных скобках ([ ]).

Библиография сопровождается разными указателями (арм., рус.): указатель основных дат жизни и творчества О. Барсебяна, алфавитный указатель заглавий, информационный указатель использованной периодики.

В указателе заглавий в квадратных скобках даны примечания составителя как об авторских функциях (автор, составитель, редактор и т.д.), так и о типе работ (монография, статья, доклад, интервью и т.д.) или об их размещении в других изданиях (энциклопедия, сборник и т.д.).

Книга имеет также приложение, где собраны цитаты как из опубликованных трудов лингвиста, так и строк из разных статей, характеризующих жизнь и деятельность Ов. Барсегыана. Данное приложение может быть полезным именно тем исследователям, чья цель найти дополнительные сведения о знаменитом арменоведе. Все цитаты в приложении связаны ссылками с соответствующими оригиналами в библиографическом описании.

Рус. пер. Тиграну Акоюн



**ԲԱՆԱՍ. ԳԻՏ. ԴՐ, ՊՐՈՖ. Զ.Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

- 1920 – ծնվել է հոկտ. 25-ին, Թալինի շրջանի (ներկայումս՝ Արագածոտնի մարզ) Մաստարա գյուղում
- 1935 – ավարտել է Մաստարայի յոթնամյա դպրոցը
- 1938 – ավարտել է Թալին ավանի միջնակարգ դպրոցը
- 1938-1941 – սովորել է ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետում
- 1941 – մեկնել է բանակ
- 1942 – ավարտել է Բաքվի ռազմական հետևակային ուսումնարանը և Թբիլիսիի հրաձգային բարձրագույն դասընթացը
- 1942-1943 – մասնակցել է Զայրենական մեծ պատերազմին՝ որպես հայկական դիվիզիայի վաշտի հրամանատար
- 1943 – Զյուսիսային Կովկասի համար մղվող մարտերում վիրավորվել և զորացրվել է
- 1943-1944 – շարունակել է կրթությունը և ավարտել ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետը
- 1943-1944 – ԶՊՄԻ-ի հատուկ ամբիոնի ռազմագիտության դասախոս
- 1945-1948 – ընդունվել և ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան
- 1946-1948 – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս
- 1948-1958 – ԵՊՀԵՄԻ հայոց լեզվի ամբիոնի դասախոս
- 1952 – բանասիրական գիտությունների թեկնածուի գիտ. աստիճան
- 1955-2004 – ԶԽՍՀ Մին. խորհրդին առընթեր տերմինաբ. կոմիտեի (1992-ից՝ ՀՀ ԲԿՄ Լեզվի բարձ. խորհուրդ) գիտ. քարտուղար
- 1955 – ԵՊՀԵՄԻ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
- 1955-1957 – ԵՊՀՄԻ սկզբնական կուրսագնացների քարտուղար
- 1958 – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
- 1969-1972 - ԵՊՀ կուրսոմիտեի առաջին քարտուղար
- 1969-1976 – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ
- 1970 – ԶԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ
- 1977-1985 – ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան
- 1977-1988 – ԶԽՍՀ ԲԿՄ հայոց լեզվի ուսումնամեթոդական խորհրդի նախագահ
- 1981 – բանասիրական գիտությունների դոկտորի գիտ. աստիճան
- 1984 – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր

- 1985-1990** – ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչ
- 2000-2007** – ՀԽՍՀ ՊԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տի լեզվաբանության մասնագիտական խորհրդի նախագահ: 2007-ից՝ այդ խորհրդի անդամ
- 2010** – Եվրոպական գիտությունների և արվեստների միջազգային ակադեմիայի իսկական անդամ

### **Պարգևատրումներ**

- 1955** – «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալ
- 1964** – «Մարտական ծառայությունների համար» մեդալ
- 1981** – «Պատվո նշան» շքանշան
- 1985** – «Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշան
- 1999** – «Մովսես Խորենացի» մեդալ
- 2001** – ՀՀ նախագահի մրցանակ
- 2003** – Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակ

### **Սենագրություններ**

- 1953** – «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն»
- 1964** – «Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ)»
- 1967** – «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները»
- 1973** – «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»
- 1975** – «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները»
- 1980** – «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը»
- 1988** – Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (ռուս.)
- 1999** – «Ը ձայնավորը և նրա նշանային արտահայտությունը գրական հայերենում (պատմական հնչյունաբանության ակնարկ)»
- 2002** – «Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ» [44 էջ]
- 2004** – «Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ» [102 էջ]

## ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ Д-РА ФИЛОЛОГИЧЕСКИХ НАУК, ПРОФ. О. Х. БАРСЕГЯНА

- 1920 – родился 25 октября в селе Мастара Талинского района (ныне Марз [Область] Арагацотна) Арм. ССР
- 1935 – окончил семилетнюю школу Мастары
- 1958 – окончил среднюю школу Талинского поселка
- 1938-1941 – учился на фак. лингвистики ЕГУ
- 1941 – был призван в армию
- 1942 – окончил Военное пехотное училище г. Баку и Стрелковые высшие курсы г. Тбилиси
- 1942-1943 – участвовал в Великой Отечественной войне как командир роты Армянской дивизии
- 1943 – был ранен в битве за Северный Кавказ и демобилизован
- 1943-1944 – продолжал обучение и окончил фак. лингвистики ЕГУ
- 1943-1944 – преподаватель военного дела на специальной кафедре ЕГПИ
- 1945-1948 – поступил и окончил аспирантуру ЕГУ
- 1946-1948 – преподаватель кафедры армянского языка ЕГУ
- 1948-1958 – преподаватель кафедры арм. языка ЕГЗаочПИ
- 1952 – ученое звание кандидата филологических наук
- 1955-2004 – научный секретарь Терминологического комитета при Минсовета АрмССР (с 1992-ого – Высший совет языка при МВО РА)
- 1955 – доцент кафедры арм. языка ЕГЗаочПИ
- 1955-1957 – секретарь первоначальной партийной организации ЕГЗаочПИ
- 1958 – доцент кафедры арм. языка ЕГУ
- 1969-1972 – первый секретарь партийной организации ЕГУ
- 1969-1976 – заведующий кафедрой армянского языка ЕГУ
- 1977-1985 – декан филологического факультета ЕГУ
- 1977-1988 – председатель Учебно-методического совета арм. языка МВО АрмССР
- 1970 – заслуженный деятель науки АрмССР
- 1981 – ученое звание доктора филологических наук

- 1984 – профессор кафедры армянского языка ЕГУ  
 1985-1990 – основатель-заведующий кафедрой истории армянского языка ЕГУ  
 2000-2007 – председатель Специального совета языкознания Ин-та языка им. Р. Ачаряна, после 2007 – член т.ж. совета  
 2010 – действительный член Международной академии европейских наук и искусств

### Награды

- 1955 – Медаль “За Победу над Германией в Великой Отечественной войне 1941-45 гг.”  
 1964 – Медаль “За боевые заслуги”.  
 1981 – Орден “Знак Почета”  
 1985 – Орден “Отечественной войны II степени”  
 1999 – Медаль “Мовсес Хоренаци”  
 2001 – Премия президента РА  
 2003 – Премия “Ваан Текеян” Культурного общества “Текеян”

### Монографии

- 1953 – “Теория глагола и спряжения современного армянского языка”  
 1964 – “Собственное имя (теоретическо-описательный очерк)”  
 1967 – “Теория пяти падежей Манука Абеяна и ее ранняя и новая критика”  
 1973 – “Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь”  
 1975 – “Теории классификации частей речи армянского языка.”  
 1980 – “Учение о частях речи армянского языка”  
 1988 – “Учение о частях речи армянского языка” [рус.]  
 1999 – “Гласная буква *ը* и ее знаковое выражение в литературном армянском языке (очерк по исторической фонетике)”  
 2002 – “Вопросы орфографии армянского языка в обсуждениях классиков литературы” [44 с.]  
 2004 – “Вопросы орфографии армянского языка в обсуждениях классиков литературы” [102 с.]

## ԱՆՎԱՆԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ

Հայ լեզվաբանության ակնառու ներկայացուցիչ, Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր, Եվրոպական միջազգային ակադեմիայի իսկական անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանը արդեն ոտք է դրել իր կյանքի տասներորդ տասնամյակի շեմին և կրկին շարունակում է իր բուլղրանվեր գործունեությունը: Մեծ է նրա ավանդը հատկապես հայոց լեզվի պատմության և տեսության ուսումնասիրության ասպարեզում: Նրա գիտական հետազոտությունները՝ նվիրված արդի հայերենի ձևաբանության, շարահյուսության, ուղղագրության, ուղղախոսության և եզրաբանության (տերմինաբանության) խնդիրներին, իրենց անուրանալի դերն են կատարել հայերենագիտության զարգացման գործում:

Հովհաննես Խաչատուրի Բարսեղյանը ծնվել է 1920 թ. հոկտեմբերի 25-ին ՀԽՍՀ Թալինի շրջանի (ներկայումս՝ Արագածոտնի մարզ) Մաստարա գյուղում, հողագործի ընտանիքում: Հայրենի գյուղում ստանալով յոթնամյա, իսկ Թալին ավանում՝ միջնակարգ կրթություն՝ 1938 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետ: Առաջին իսկ կուրսից նրա մեջ մեծ սեր ու հակում է առաջանում մայրենի լեզվի և լեզվաբանության նկատմամբ: Սակայն սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և Հովհ. Բարսեղյանը, կիսատ թողնելով ուսումնառությունը, 4-րդ կուրսից կամավոր մեկնում է կարմիր բանակ: Մինչև 1942 թ. հունվարի 15-ը սովորում է Բաքվի ռազմական հետևակային ուսումնարանում և, ավարտելով այն ու ստանալով լեյտենանտի զինվորական կոչում, մեկնում է ռազմաճակատ՝ մասնակցելու մարտական գործողություններին: Նա եղել է վաշտի հրամանատար և իր վաշտով մարտնչել Ղրիմի ռազմաճակատում, ապա 1943 թ. մասնակցել է Հյուսիսային Կովկասի համար մղվող մարտերին: Երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո, 1943 թ. հուլիսի 15-ին զորացրվում է, շարունակում կրթությունը Երևանի պետական համալսարանի նույն ֆակուլտետում և 1944-ին ավարտում այն: Ուսումնառության ընթացքում նա նաև աշխատել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հատուկ ամբիոնում որպես ռազմագիտության դասախոս:

Համալսարանն ավարտելուց մեկ տարի անց՝ 1945 թ., «Հայոց լեզու» մասնագիտության գծով ընդունվում է ասպիրանտուրա և այն ավարտում 1948-ին: 1952 թ., ակադեմիկոս լեզվաբան Գուրգեն Սևակի գիտական ղեկավարությամբ, պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1981 թ. դոկտորական՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1955 թ. նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1984-ին՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1970 թ. Հովհ. Բարսեղյանն արժանանում է նաև ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Հովհ. Բարսեղյանի աշխատանքային և գիտամանկավարժական գործունեությունը հիմնականում կապվում է Երևանի պետական համալսարանի հետ, որի հայոց լեզվի ամբիոնում էլ 1946 թ.-ից (դեռ ասպիրանտուրան չավարտած) սկիզբ է դրվում նրա դասախոսական գործունեությանը: 1948-ից նույն պաշտոնով աշխատում է Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնում: 1958 թ. կրկին տեղափոխվում է Երևանի պետական համալսարան և շարունակում դասախոսական գործունեությունը հայոց լեզվի ամբիոնում, ուր և դրսևորվում են նրա՝ ուսումնագիտական գործի և գիտահետազոտական աշխատանքի հմուտ կազմակերպչի ունակություններն ու կարողությունները: 1969 թ. նա ընտրվում է նույն ամբիոնի վարիչ, որը ղեկավարում է մինչև 1976 թվականը: 1977-1985 թթ. բանասիրական ֆակուլտետի ղեկանն էր, իսկ 1985-1990-ին՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչը:

Հովհ. Բարսեղյանն առաջին հերթին առիներող և մեծ հմայքի տեր դասախոս է՝ հոգով և եռությամբ նվիրված հայրենական գիտությանը: Ավելի քան վեցուկես տասնամյակ հանրապետության բուհերում, առավելապես Երևանի պետական համալսարանում, դասավանդել է լեզվաբանական, հայերենագիտական մի շարք առարկաներ, որոնց թվում՝ «Ժամանակակից հայոց լեզու», «Հայոց լեզվի պատմություն», «Հայոց լեզվի պատմական քերականություն», «Լեզվաբանության ներածություն» և այլ դասընթացներ: Նա իր հարուստ գիտելիքներն ու ժամանակակից լեզվաբանական մտքի նվաճումները հմտությամբ փոխանցել է ուսանողներին ու ասպիրանտներին, դրանով իսկ լուրջ ավանդ ներդրել երիտասարդ մասնագետներ պատրաստելու գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ հայոց լեզվի գծով պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ, մագիստրոսական ու ավարտական աշխատանքներ:

Մեծ է Հովհ. Բարսեղյանի ավանդը հատկապես հայագիտության ասպարեզում: Նա մեր ժամանակների ճանաչված ու առաջատար լեզ-

վաբաններից մեկն է, հեղինակ է շուրջ 10 արժեքավոր մենագրությունների, մի քանի տասնյակի հասնող գիտական հոդվածների: Դրանք հիմնականում նվիրված են հայոց լեզվի ձևաբանության ու շարահյուսության խնդիրներին: Նրա «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953 թ.), «Հատուկ անուն» (1964 թ.), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (1967 թ.), «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» (1975 թ.), «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (1980 թ., նույնը՝ թարգմ. ռուս.՝ 1988 թ.), «Հայերենի ուղղագրության հարցերը հայագիտության և գրականության դասականների քննությամբ» (ունեցել է երկու հրատ.՝ 2002 և 2004 թթ., վերջինը՝ համալրված) մենագրությունները ճանաչվել են իբրև լեզվաբանական գիտության ակնառու նվաճումներ, որոնք զարգացնում ու հարստացնում են ժամանակակից հայերենագիտությունը:

Հովհ. Բարսեղյանի վերը թվարկված աշխատություններից յուրաքանչյուրը վերլուծում և նորովի է մեկնաբանում լեզվաբանության և հայերենագիտության տվյալ ճյուղի հետ առնչվող հիմնախնդիրները: Այդ առումով՝ նրա առաջին՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» մենագրությունը (այն եղել է նրա թեկնածուական ատենախոսությունը), որը նվիրված է հայերենի բայի բազմակողմանի ուսումնասիրությանը, աչքի է ընկնում իր մի շարք նոր դիտարկումներով, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Իսկ նրա «Հատուկ անուն» հետազոտությունը հայերենագիտության ասպարեզում դեռ այն ժամանակ նոր-նոր ձևավորվող հատկանվանագիտության միջգիտաճյուղի հիմքն էր դնում, արժարժում լեզվում գործածվող հատուկ անունների ու դրանց ուղղագրությանը առնչվող բազմաթիվ հարցեր և փորձում տալ դրանց պատասխանները:

Հայ լեզվաբանական գիտության մնայուն արժեքներից են նաև Հովհ. Բարսեղյանի երկարամյա գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփող «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» և «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» մենագրությունները, որոնց հիման վրա էլ նա պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը: Այդ մնայուն աշխատություններում լեզվաբան գիտնականը ներկայացնում է հայերենի (և ոչ միայն) խոսքի մասերի տեսության առաջացման ու զարգացման պատմությունը, որն ընդգրկում է 5-րդ դարից մինչև մեր օրերն ընկած շուրջ 1600-ամյա ժամանակահատվածը, և որտեղ հայերենի խոսքի մասերին առնչվող հարցերը քննվում են հայքերականագիտության և լեզվաբանության հին ու նոր ուղղությունների հետ սերտորեն զուգակցված: Այդ աշխատություններում հեղինակը հա-

մակողմանիորեն ուսումնասիրել և գիտականորեն դասակարգել ու վերլուծել է ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգը, տվել դրանց հիմնական սկզբունքները:

Այսօր երևի շատերն են հիշում 1960-ական թթ. կեսերին հայ լեզվաբանության մեջ ծավալված այն բուռն բանավեճերը, որոնք վերաբերում էին հայերենի հոլովների տարբերակման սկզբունքներին ու թվին հի՞նգ, թե՞ յոթ: Այդ բանավեճերը երկար տևեցին, գումարվեցին մի շարք ակադեմիական գիտաժողովներ ու այլ նիստեր, որոնց իրենց զեկուցումներով ու ելույթներով մասնակցեցին ժամանակի շատ անվանի գիտնականներ, այդ թվում նաև Գովհ. Բարսեղյանը: Այդ բանավեճերի ընթացքում նա կանգնած էր Մ. Աբեղյանի հինգ հոլովի պաշտպանության դիրքերում: Նա իր այդ տեսակետները հետագայում հանգամանորեն ներկայացրել է «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» արժեքավոր աշխատության մեջ: Այստեղ հարկ է շեշտել նաև անվանի լեզվաբանի՝ բանավիճելու արվեստին տիրապետելու և իր տեսակետներն ու սկզբունքները գիտականորեն, կուռ ու տրամաբանված հիմնավորելու կարողությունների մասին: Այդ առումով պետք է նկատել, որ Գովհ. Բարսեղյանի աշխատությունների մեծ մասում առկա է կիրթ և կոռեկտ, գիտական բարձր մակարդակի բանավեճը անցյալի և իր ժամանակի լեզվաբանների հետ: Եվ այդ բարդ խնդիրները նա կարողանում է հասցնել իրենց տրամաբանական հանգուցալուծմանը՝ հետևողականորեն հիմնավորելով ու պաշտպանելով իր տեսակետների ճշմարտացիությունը:

Անուրանալի է նաև Գովհ. Բարսեղյանի ներդրումը հայերենի տերմինաշինության ասպարեզում: Հայերենի եզրաբանության և ուղղագրության հարցերը միշտ էլ եղել են մայրենի լեզվի անաղարտությամբ մտահոգված գիտնականի ուշադրության կենտրոնում: Նա տասնամյակներ շարունակ, սկսած 1955 թ.-ից, լինելով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից, իսկ 1992-ից՝ ՀՀ կառավարությանն առընթեր տերմինաբանական կոմիտեի, ապա՝ Լեզվի պետական տեսչության լեզվի բարձրագույն խորհրդի գիտական քարտուղարը՝ շատ բան է արել ժամանակակից հայերենի գիտատեխնիկական, հասարակական-քաղաքական եզրույթների (տերմիններ) հարստացման ու կանոնարկման ուղղությամբ: Այդ ընթացքում նա հայերենի ուղղագրությանն ու տերմինաբանությանը նվիրված բազմաթիվ առաջարկություններ ու նախագծեր է պատրաստել և ներկայացրել հիշյալ մարմնի հաստատմանը, որոնց զգալի մասի հեղինակը եղել է ինքը: Դրանք նպաստել են հայերենի բառապաշարի հարստացմանը, ուղղագրության, հատկապես հատուկ անունների գրութ-



յան ձևերի կանոնակարգմանը և ուղղագրական մի շարք այլ կանոնների միօրինականացմանը, ինչպես նաև տողադարձի կանոնների մշակմանը:

Յուրի. Բարսեղյանի մեկնաբանություններով ու խմբագրությամբ 1964 թվականից ի վեր պարբերաբար, ամեն անգամ նոր լրացումներով ու հավելումներով, լույս է տեսել «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուն» (նախկինում՝ «Տերմինաբանական ուղեցույց»), որը շուրջ չորս տասնամյակ կատարել է նոր իրավիճակներին հայերենի ներդաշնակեցման և մայրենի լեզվի կանոնակարգման շնորհակալ գործը: Այն խմբագրական աշխատանքով զբաղվողների, ուսուցիչների ու դասախոսների և բոլոր նրանց համար, ովքեր գործ ունեն գրավոր խոսքի հետ, եղել է ուղեցույց և կատարել ուղղորդողի ու լեզվական օրենսդրի դեր: Նշված ուղեցույցի վերջին՝ անցյալի բոլոր որոշումներն արտացոլող և լրացված հրատարակությունն իրականացվել է 2006 թ.-ին՝ կրկին Յուրի. Բարսեղյանի հեղինակությամբ:

Յուրի. Բարսեղյանը մեզանում հայտնի է նաև որպես դպրոցական դասագրքերի հեղինակ: Ամնրցելի են նրա՝ ակադ. էդ. Աղայանի հետ կազմած «Հայոց լեզվի» 5-7-րդ դասարանների (1965-ից) և 4-րդ դասարանի (1970-ից) դասագրքերը, որոնք, մասնագետների կարծիքով, աչքի են ընկնում իրենց ուղղվածությամբ, թեմաների դյուրամատչելիությամբ ու հստակությամբ: Այդ դասագրքերով արդեն չորսուկես տասնամյակ է, ինչ Հայաստանի և նախկին Խորհրդային Միության տարածքի հայկական դպրոցների աշակերտները մայրենի լեզու են սովորում: Յուրի. Բարսեղյանը դեռ այսօր էլ լուրջ օգնություն է ցույց տալիս մեր հանրապետության հայոց լեզվի ու գրականության ուսուցիչներին, որոնք իրենց հետաքրքրող լեզվաբանական ու մեթոդական ամենատարբեր հարցերով շարունակում են դիմել մեծավաստակ գիտնականին և հմուտ մանկավարժին դրանց շուրջ սպառնիչ պատասխաններ ստանալու ակնկալիքով:

Հայ բառարանագրության ասպարեզում ևս մեծ է Յուրի. Բարսեղյանի ներդրած ավանդը: Նա նաև հմուտ բառարանագիր է, որի կազմած «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973 թ.) ժամանակին բարձր է գնահատվել հայագետների կողմից: Այն ընդգրկում է 152 հազար բառային միավոր և, լինելով իր տեսակի մեջ լիակատար ու եզակի մի աշխատանք, մինչև այսօր էլ չի կորցրել այժմեականությունը և ծառայում է իր նպատակին՝ լեզվաբանների համար մնալով սեղանի գիրք:

Յոսի. Բարսեղյանը շուրջ չորս տասնյակ տարի, պրոֆեսորներ Թ. Խ. Հակոբյանի և Ստ. Տ. Մելիք-Բախշյանի հետ, որպես համահեղինակ, մասնակցել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» ստեղծման աշխատանքներին, որի արդյունքում 1986-2001 թթ. հրատարակվել են այդ հանրագիտարանային բառարանի հինգ սովորածավալ հատորները, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 720 տպագրական մամուլ: Իր գործընկերների վախճանվելուց հետո վերջին երկու հատորների աշխատանքների ծանրությունը միայնակ իր վրա է կրել Յոսի. Բարսեղյանը՝ ամենայն բարեխղճությամբ ու բժախնդրությամբ խմբագրելով ու տպագրության պատրաստելով դրանք: Սույն բառարանը բառարանագրության եզակի կոթողներից է, որը մասնագետների կողմից գնահատվել է որպես մշակութային բացառիկ երևույթ: Այն իր մեջ ընդգրկում է պատմական Հայաստանի տարածքի, հատկապես Արևմտյան Հայաստանի բնակավայրերի, ֆիզիկաաշխարհագրական ու պատմամշակութային օբյեկտների մասին բազմաթիվ տվյալներ՝ հին ու նոր անուններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բոլոր տեղանունները՝ դրանց մասին պատմական, աշխարհագրական ու ազգագրական անհրաժեշտ տվյալներով: Եվ պատահական չէ, որ 2003 թ. բառարանն արժանացել է ՀՀ նախագահի, ինչպես նաև Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակներին:

Ներկայումս բառարանի՝ Յոսի. Բարսեղյանի ղեկավարությամբ գիտական աշխատակազմը, ԵՊՀ հայագիտական գիտահետազոտական ինստիտուտի համակարգում, պետական ֆինանսավորմամբ պատրաստում է նոր՝ «Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարանի» հրատարակությունը, որը լինելու է ավելի լիակատար և իր մեջ ընդգրկելու է վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում և հարակից շրջաններում տեղի ունեցած վարչատարածքային, աշխարհաքաղաքական, ժողովրդագրական (ղեմոգրաֆիկ) ու տեղանվանական փոփոխությունները: Իսկ նրա՝ մոտ մեկ միլիոն քարտ պարունակող տեղանունների քարտարանը կարելի է համարել հայագիտության կարևոր շտեմարաններից մեկը:

Այս ամենից զատ՝ պրոֆ. Բարսեղյանն իբրև տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղար մասնակցել է մի շարք պաշտոնական քննարկումների: Նա համալսարանական ու հանրապետական գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել հետաքրքիր զեկուցումներով, մամուլում տպագրել է բազմաթիվ հոդվածներ ու կարծիքներ, մասնակցել հայագիտական բանավեճերի, եղել արտասահմանյան մի շարք երկրներում Բուլղարիա (1967 թ.), ԱՄՆ (1985 թ.), Ռուսաստան (1994 թ.) և այլուր, մաս-

նակցել միջազգային գիտաժողովների, ներկայացրել հայագիտության նվաճումները և նրա զարգացման միտումները: Նրա խմբագրությամբ և առաջաբաններով լույս են տեսել մի շարք գրքեր, որոնց թվում է և Հր. Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» (2002 թ.) արժեքավոր աշխատությունը, որի «Երկու խոսք»-ում նա ներկայացնում է այդ գլուխգործոցի ստեղծման ու կորստից փրկելու պատմությունը:

Գիտամանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ Հովհ. Բարսեղյանը ծավալել է նաև կուսակցական, հասարակական-քաղաքական լայն գործունեություն: Նա 1955-57 թթ. եղել է Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի սկզբնական կուսկազմակերպության քարտուղար, Երևանի պետական համալսարանում տարբեր տարիների ընտրվել է բանասիրական ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղար, իսկ 1969-1972 թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղարը: Հովհ. Բարսեղյանը տարիներ շարունակ եղել է նաև ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հայոց լեզվի ու սումնամեթոդական բաժանմունքի նախագահը: ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում ևս նա երկար տարիներ զբաղեցրել է լեզվաբանության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական միացյալ խորհրդի փոխնախագահի, իսկ 2000-2007 թթ.՝ նախագահի պաշտոնները: Ներկայումս էլ այդ խորհրդի անդամ է:

Հովհ. Բարսեղյանը պատերազմի ու աշխատանքի վետերան է, ճանաչված գիտնական ու առաքինի մարդ, հարգված ու սիրված մանկավարժ, որի ծառայությունները հայերենագիտության զարգացման և որակյալ մասնագետներ պատրաստելու գործում գնահատվել են ըստ արժանվույն. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում (1970 թ.), նա արժանացել է ՀՀ նախագահի (2001 թ.), նաև «Վահան Թեքեյան» (2003 թ.) մրցանակների, պարգևատրվել է «Պատվո նշան» (1981 թ.), «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» (1985 թ.) շքանշաններով ու մեկուկես տասնյակից ավելի տարբեր աստիճանի մեդալներով, որոնց թվում՝ «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» (1955 թ.), «Մարտական ծառայությունների համար» (1964 թ.), «Մովսես Խորենացի» (1999 թ.), և զանազան պատվոգրերով: Վերջերս պրոֆ. Հովհ. Բարսեղյանն ընտրվել է նաև Եվրոպական գիտությունների և արվեստների միջազգային ակադեմիայի իսկական անդամ (2010 թ.):

Անվանի լեզվաբանը իր դարակազմիկ կյանքում անցել է բազում փորձությունների միջով, ականատես է եղել ստալինյան բռնություններին, ապա անցել է Մեծ Հայրենականի բոցերով, հաղթահարել շատ

դժվարություններ՝ իր հոգու խորքում անմար պահելով Սասնա տան կարոտը, հրճվել է Արցախյան ազատամարտի հաղթանակով և այժմ, նոր հազարամյակի շեմին, նոր ավյունով շարունակում իր հայրենավեր գործունեությունը: Նա տպագրության է պատրաստում «Հայերենագիտությունը իմ ուսուցիչների և գործընկերների գնահատմամբ» ժողովածուն, որի մեջ տեղ են գտնելու նաև իր գնահատանքի խոսքերը՝ ուղղված իր ուսուցիչներ Մ. Աբեղյանին, Յ. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Գ. Սևակին և այլոց, ինչպես նաև իր գործընկերներին՝ Էդ. Աղայանին, Գ. Ջահուկյանին և մյուսներին: Դրա հետ մեկտեղ Հովհ. Բարսեղյանը պատրաստում է «Արդի հայերենի գոյականի և հոլովման տեսությունը» մենագրությունը: Դրանք, ինչ խոսք, ներդրում կլինեն հայերենագիտության մեջ:

Հովհ. Բարսեղյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական միստում, որը կազմակերպել էր ԵՊՀ ռեկտորատը, և որն անցկացվեց 2010 թ. մարտի 25-ին բանասիրական ֆակուլտետի նորակառույց շենքի դահլիճում, եղան բազմաթիվ ելույթներ, հոբելյարին հանձնվեցին ուղերձներ, պատմվեցին հետաքրքիր հուշեր, ասվեցին գնահատանքի ու մեծարանքի ջերմ խոսքեր: Դրանցից այստեղ ուզում ենք հիշատակել միայն մեկ արտահայտություն, որ հնչեց ելույթներից մեկում. «Ներկա մեր բոլոր դասախոսների ներկա դասախոսը», - մի գնահատական, որը շատ բնութագրական է Հովհ. Բարսեղյանի պարագայում և մեծ խորհուրդ ունի իր մեջ: Այո՛, Հովհ. Բարսեղյանը ներկայիս բոլոր դասախոսների դասախոսն է ո՛չ միայն ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում. նրա պատրաստած սաներից շատերն այսօր, որպես դասախոսներ ու ուսուցիչներ, աշխատում են հանրապետության գրեթե բոլոր բուհերում և ուսումնական հաստատություններում, դպրոցներում և Սփյուռքում: Շատերն էլ դարձել են ճանաչված գրողներ ու գիտնականներ, պետական-հասարակական ու մշակութային գործիչներ: Նրանք սիրով են հիշում իրենց չափազանց խստապահանջ ու արդարամիտ ուսուցչին, վերհիշում նրա անզուգական դասախոսությունները մայրենի լեզվի պատմությունից ու տեսությունից:

Տողերիս հեղինակը ևս, որպես նրա երախտապարտ սաներից մեկը, ցանկանում է սիրելի դասախոսին ու գիտնականին երկար տարիների կյանք և կիսատ մնացած գործերի իրականացում:

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ  
Բանաս. գիտ. թեկնածու,  
առաջատար գիտաշխատող

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## БИБЛИОГРАФИЯ

Գրքերի ցանկում բնագրերը համարվում են հիմնական աղբյուրներ:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ հարկ է նշել հետևյալը:

1. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

2. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

3. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

4. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

5. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

6. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

7. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

8. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

9. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

10. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

11. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

12. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

13. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

14. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

15. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

16. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

17. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

18. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

19. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

20. Գրքերի ցանկում հարկ է նշել հետևյալը:

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ  
ХРОНОЛОГИЧЕСКИЙ УКАЗАТЕЛЬ  
ТРУДОВ О. Х. БАРСЕГЯНА

ՍԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
МОНОГРАФИИ

1. Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն / ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ին-տ - Ե.: ՀՍՍՌ ՊՂՄԻ հրատ., 1953. - 423 էջ. - Հավել. [բացահայտում] էջ 327-383. - Ամփ. ռուս.՝ 384-411. - Գրկ. ցանկ 412-417:

Теория глагола и спряжения современного армянского языка.

Գրքում քննվում է հայոց լեզվի հետզարգարյան զարգացման շրջանը, որի ընթացքում, լեզվի քերականական այլ հատկանիշների շարքում, փոփոխություններ են կրել մակ բայածևերը. վերացել է ժամանակային և եղանակային բազմիմաստությունը, դրանց քերականական տարբեր իմաստների համար ստեղծվել են առանձին, առավել արտահայտիչ ձևեր: Հեղինակը, դեմ գնալով Մառի և իր ժամանակի մոդեռնիստների տեսակետներին, գտնում է, որ բայածևերի նման փոփոխությունների արդյունքում լեզվի քերականական կառուցվածքը կատարելագործվել է, և հայերենը ստացել է առավել «կուռ, իմաստավորված բնույթ»: Այս տեսանկյունով էլ քննվում են ժամանակակից հայերենի բայական կատեգորիաները, նրանց ձևաբանական դրսևորումները և բայի խոնարհման համակարգը:

2. Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ). - Ե.: Հայպետունմանկհրատ., 1964. - 132 էջ. - Հավել. էջ 107-131:

Собственное имя (теоретическо-описательный очерк).

Գրքում հետազոտվում է հատուկ անունը՝ որպես պատմականորեն անհրաժեշտ լեզվական հասկացություն, ներկայացվում դրա՝ ինքնուրույն, անթարգմանելի լեզվական երևույթ և ժողովուրդների ու նրանց մշակույթի պատմության կարևոր աղբյուր լինելու հատկանիշները, առանձին անձերն ու առարկաներն անվանապես անհատականացնելու, տարբերակելու և կոնկրետացնելու գործառույթները: Տեսականորեն քննելով հատուկ անվան, որպես հասարակական-իրավական արժեք ներկայացնող լեզվական իրողության, ծագման, պայմանական լինելու, տրամաբանական հիմքեր և դրդապատճառներ ունենալու հանգամանքները՝ հեղինակն անդրադառնում է հայերենում դրա դրսևորման իմաստաքերականական առանձնահատկություններին, ուղղագրության, ուղղախոսության և տառադարձության ընդունված կանոններին: Հավելվածում բերված է ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից տեղմիմաբանական կոմիտեի 1958 թ. որոշումներով ամրագրված հատուկ անունների բառացանկը:

3. Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները / Խմբ.՝ Է.Բ. Աղայան; ՀՍՍՀ Լուս. մին.: Ուսուցիչների կատարելագ. ին-տ. - Ե.: Հայաստան, 1967. - 76 էջ:

Теория пяти надежён Манука Абебяна и ее ранняя и новая критика.

Աշխատանքում ամփոփված է հայերենի հոլովական համակարգի շուրջ եղած բանավեճի ողջ պատմությունը: Մամուլից և մասնագիտական գրականությունից հանված և ի մի է բերված Մ. Աբեղյանի՝ հինգ հոլովի տեսությանը վերաբերող նյութը, որի վերլուծությունն ու գիտական մեկնաբանությունները կարող են օգնել հայոց լեզվի մասնագետներին՝ հոլովների վիճելի հարցի էությանն ու պատմությանը ծանոթանալու և եղած տեսակետների մեջ ճիշտ կողմնորոշվելու հարցերում:

4. Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները / ԵՊՀ. - Ե.: Եր. համալս. հրատ., 1975. - 274 էջ:

Теория классификации частей речи армянского языка.

Աշխատանքը նվիրված է հայ քերականագիտության հին և միջնադարյան, նոր և նորագույն շրջանների խոսքի մասերի տարբերակման տեսություններին: Այս տեսանկյունից վերլուծաբար ներկայացված են Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայերեն թարգմանությունը և դրա՝ 5-15-րդ դդ. մեկնությունները, 17-19-րդ դդ. հայերեն լատինատառ քերականությունները, Ա. Այտընյանի «Քննական քերականությունը»: Քննության են առնված նաև հայ լեզվաբանության մեջ խոսքի մասերի իմաստային-տրամաբանական (Ստ. Պալասանյան), իմաստային կամ իմացականական (Ա. Դարիբյան, Գ. Սևակ), շարահյուսական (Գր. Աճառյան), իմաստաբանական բազմաստիճան (Ս. Աբրահամյան, Էդ. Աղայան) դասակարգման սկզբունքները:

5. Հայերենի խոսքի մասերի ուսմունքը / ԵՊՀ: Հայոց լեզ. ամբիոն; Խմբ.՝ Պ.Ե. Շարաբխանյան; Գրախոս՝ Ն.Դ. Մուրադյան. - Ե.: Եր. համալս. հրատ., 1980. - 528 էջ. - Գրկ. ցանկ՝ էջ 515-521; Անձնանուն. ցանկ՝ 522-525:

Учение о частях речи армянского языка.

Աշխատությունը հեղինակի՝ խոսքի մասերի տեսության առաջացմանն ու զարգացման պատմությանը նվիրված լեզվաբանական հետազոտության (տես «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները», 1975) առավել խորացված տարբերակն է: Նրանում ընդգրկված է ոչ միայն 5-րդ դարից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի, այլև Ա. Աբրահամյանի, Գ. Ջահուկյանի և 19-րդ դ. 60-80-ական թթ. այլ լեզվաբանների տեսությունների քննությունը, որի մեջ երևան են գալիս հայ քերականագիտության և լեզվաբանության հին ու նոր ուղղությունների փոխադարձ կապերն ու առնչությունները: Աշխատանքում նաև դասակարգվում և վերլուծվում է ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգը:

6. Учение о частях речи армянского языка / ЕГУ. [Каф. арм. яз.]; Ред.: Э.Р. Амаян, Рец.: Г.Б. Джаукян. - Изд-во Ер. ун-та, 1988. - 434 с. - Библиогр.: с. 419-427 (170 назв.); Указ. лич. имен: с. 428-431.

Հայերենի խոսքի մասերի ուսմունքը:

*Работа посвящена возникновению и истории развития теории частей речи армянского языка. Она охватывает период с V века до наших дней. Вопросы анализируются с учетом связи старых и новых направлений в грамматических учениях и в языкознании. Классифицируются и исследуется система частей речи современного армянского языка.*

7. Ձ ծայնավորը և նրա նշանային արտահայտությունը գրական հայերենում (պատմական հնչյունաբանության ակնարկ) / ԵՊՀ: Հայոց լեզ. պատմ. ամբիոն. - Ե.: Ասողիկ-59, 1999. - 96 էջ, գծապատկ. - Գրկ. ցանկ՝ էջ 94-95 (41 անուն):

Гласная буква *ը* и ее знаковое выражение в литературном армянском языке (очерк по исторической фонетике).

Ուսումնասիրությունը նվիրված է հայերենի պատմական հնչյունաբանության տեսական և գործնական արժեք ունեցող մի կարևորագույն հարցի: Նրանում քննվում է ը ծայնավորի հնչյունական առանձնահատկությունների ու նրա գրաբանական-նշանային արտահայտությունների ողջ պատմությունը՝ գրական հայերենի և հարևան լեզուների փոխկապվածության մեջ:

Նախ համառոտ ներկայացվում են ը ծայնավորի շուրջ եղած կարծիքները, ապա վերլուծաբար տրվում դրա՝ որպես նշույթի տարբերակման պատմությունը՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու հունարենի քերականության հայերեն թարգմանությունից մինչև նոր գրական հայերենում դրան բնորոշ նշանային արտահայտությունները: Այդ համատեքստում խոսվում է ծայնավորների հնչյունափոխության ակտիվացման և ը-ի գործածության դաշտի ընդլայնման, ը-ի սղման և բանաստեղծական արվեստում ունեցած երկվության, նոր գրական հայերենի ուսումնագիտական գրականության մեջ դրա արտասանության և գրության կանոնարկման մասին, շեշտվում նորոյա՝ համակարգչային շարվածքի տպագրություններում ը ծայնավորի արտասանության և գրության ավանդական կանոնների ուսնահարման իրողությունը:

Գրքույկը նախատեսված է լեզվաբանների, բանասերների, լեզվի դասախոսների, ուսուցչության և ուսանողության, ինչպես նաև, գործնական առումով, տպագրական-հրատարակչական գործի բոլոր մասնագետների համար:

8. Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ. - Ե.: Ասողիկ,

2002. - 44 էջ:

2004. - 102 էջ:

Вопросы орфографии армянского языка в обсуждениях классиков литературы.

Ուսումնասիրությունը հայերենի միասնական ուղղագրության մասին վերջին տասնամյակների կրթոտ բանավեճերի համառոտ տեսությունն է: Նրանում,



հայերենի ուղղագրության պատմության ակնարկից հետո, քննվում է միասնական ուղղագրության հիմնահարցը՝ ելակետ ունենալով հայագիտության ակադեմիկոս տեսաբանների և գրականության դասականների (Գ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ե. Չարենց, Պ. Սևակ) մեկնաբանություններն ու եզրակացությունները: Առանձին վերլուծության են ենթարկվում հայերենի ուղղագրության միասնականացման հարցի շուրջ ծավալված նորոթյա բանավեճերը, մեկնաբանվում են որոշ բանավիճողների (Գաբրիել Պասաճյան, Սիմոն Գոլիվյան, Արտաշես Մարտիրոսյան, Վ. Սիրզոյան) մատուցած հրապարակված տեսակետները:

Գրքի 2-րդ հրատարակությունն առավել ծավալուն է լրացված «Հարցադրումներ և կառուցվածքը», «Հարցադրումները՝ հայ-սփյուռք տեսադաշտում», «Սամվել Մուրադյանի զնահատմամբ հարցի ամփոփում» գլուխներով:

Գրքույկը նախատեսվում է ուսուցչության, ուսանողության, հայագետների, լրագրողների և հրատարակիչների, ինչպես նաև «գրել-կարդալ իմացող ամեն մի հայի համար»:

## ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ СЛОВАРИ, СПРАВОЧНИКИ

9. Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան / Խմբ.՝ Ա.Մ. Սուքիասյան. - Ե.: Լույս, 1973. - 979 էջ : Դնռոգ. ցանկ.

Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь.

Բառարանը կազմված է հայոց լեզվի բացատրական, թարգմանական ու մասնագիտական տասնյակ բառարանների, ինչպես նաև գրականությունից ու մամուլից հավաքած բառամթերքի հիման վրա: Պարունակում է բառերի [շուրջ 152000 բառահոդված] տերմինաբանական, բառագործածության և ոճաբանական կարգի բազմաթիվ նշումներ, որոնք հատկապես կարևորվում են տերմինների դեռևս գոյություն ունեցող բազմածությունները տեսանելի դարձնելու և գիտության առանձին ճյուղերի տերմիններն ամբողջականացնելու գործառույթով: Ուղղագրական և ուղղախոսական սկզբունքների հիմքում ընկած են մեսրոպյան ուղղագրությունը (գրության և արտասանության նույնությունը), հայերենի ուսուցման դարավոր ավանդույթները, 1922 թ. ընդունված հայերենի ուղղագրության (ըստ Մ. Աբեղյանի), «Կարոցական ուղղագրական բառարանի» (Ա. Ղարիբյան) սկզբունքներն ու ՀՍՍՀ Սին. սովետին կից տերմինաբանական կոմիտեի համապատասխան որոշումները:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

10. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան = Словарь топонимов Армении и прилегающих областей = Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories / [Դմիտր.] Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախչյան; ԵՊՀ; [3-րդ, 4-րդ, 5-րդ հի. նակ] Գ. Կիլպեկեան բարեգործ. ֆոնդ. - Ե.: Եր. համալս. հրատ. - նկ., քարտեզ. - (Հայագիտական հետազոտությունների մատենաշար):

[Բ.] 1 (Ա-Դ) : [Շուրջ 22000 տեղանուն] / Խմբ. հանձն.՝ Ա.Ա. Համբարձումյան և ուրիշ.; Խմբ.՝ Է.Բ. Աղայան և ուրիշ.; Առջք. և սխեմ.-քարտեզ.՝ Թ. Հակոբյանի. - 1986. - 991 էջ : Առջք. (հայ., ռուս. անգլ.) էջ VII-XXXI:

[Բ.] 2 (Դ-Կ) : [Շուրջ 30000 տեղանուն] / Խմբ. հանձն.՝ Ա.Ա. Համբարձումյան և ուրիշ.; Խմբ. և քարտեզ. կազմ.՝ Թ.Խ. Հակոբյան. - 1988. - 991 էջ:

[Բ.] 3 (Կ-Ն) : [Շուրջ 34000 տեղանուն] / Խմբ. հանձն.՝ Ա.Ա. Համբարձումյան և ուրիշ.; Խմբ. և քարտեզ. կազմ.՝ Թ.Խ. Հակոբյան. - 1991. - 992 էջ:

[Բ.] 4 (Ն-Վ) : [Շուրջ 24000 տեղանուն] / Խմբ. հանձն.՝ Ռ.Մ. Մարտիրոսյան և ուրիշ.; Խմբ.՝ Ստ.Տ. Մելիք-Բախշյան; Աշխ. խմբի ղեկ.՝ Գ. Բարսեղյան. - 1998. - 810 էջ:

[Բ.] 5 (Տ-Ֆ) : [Շուրջ 26000 տեղանուն] / Խմբ.՝ Թ.Խ. Հակոբյան; Լրաց. բաժինը կազմ.՝ Գ.Խ. Բարսեղյան, Ջ.Հ. Եսայան; Գուն. լուսանկ.՝ Հ.Մ. Երանոսյանի, Ս.Գ. Կարապետյանի. - 2001. - 910 էջ: [1] թ. գուն. նկ., [4] թ. ներդ. ք. - Լրաց. բաժին էջ 537-846. - Անվանացանկեր՝ էջ 847-909:

*Բառարանը հանրագիտական է, ունի բովանդակային մեծ շրջանակ. տարածական առումով ընդգրկում է այժմյան և պատմական Հայաստանի տարածքներում (շուրջ 400000 քառ. մ) գործածված տեղանունները, ժամանակագրական առումով հնագույն դարերից մինչև մեր օրերը: Տեղանունների բազմաձևությունից գլխաբառն ընտրվել է՝ ելնելով անվան գործածության այնպիսի հատկանիշներից, ինչպիսիք են՝ տեղանվան բնույթը (քաղաք, գետ վայր, լեռ ևն), գործածման պատմական ժամանակաշրջանը, ծագումը, տեղն ու աշխարհագրական դիրքը, բնակավայրի դեպքում բնակչության ազգային կազմը են: Տեղանվան մասին տրվում են նաև պատմական, աշխարհագրական, բանասիրական, հնագիտական, ազգագրական, տնտեսական և մշակութային հակիրճ տեղեկություններ:*

*Բառահոդվածների հիմնական անունն ընտրվել է՝ նախապատվությունը տալով հայահունչ անուններին, որոնք ներկայացված են ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությամբ և հայկական աղբյուրներում առավել տարածված կամ հայերենում ընդունված ձևերով: Անհրաժեշտության դեպքում տրվում են նաև դրանց հին կամ զրաբարյան ուղղագրությամբ, ինչպես նաև այլազոր կամ այլ լեզուներով ձևերը: Տառադարձային մնացած զուգաձևությունները բերվում են որպես տարբերակներ: Նշված են նաև տեղանունների ռուսերեն և միջազգային տառադարձությունները:*

*Անունների ստուգաբանությունը կատարված է ինչպես բանահյուսական, պատմական և լեզվաբանական աղբյուրների, այնպես էլ բառարանի աշխատախմբի գիտական արշավներից քաղած նյութի հիման վրա:*

*Բառարանը նախատեսվում է Հայաստանի պատմության և մշակույթի ամենատարբեր հարցերով զբաղվող մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի համար: Այն ծրագրված է եղել հրատարակել 4 հատորով, սակայն, նյութի մեծ ծավալի թելադրանքով, լույս է տեսել 5 հատորով: Պատկերազարդ է, ունի քարտեզներ և նկարներ:*

11. Տերմինաբանական ուղեցույց / ՅՍՍՍ ՍիՄ. խոր. առընթեր տերմինաբ. կոմիտե; Խմբ. Է.Բ. Աղայան. - Ե.: Լույս, 1964. - 137 էջ:

Терминологический путеводитель.

Առաջաբանում նշվում է, որ տեղեկատու ուղեցույցի առաջին օրինակն (հեղ. Ս. Ղազարյան) ընդգրկում է լեզվի մասին մինչև 1945 թ. եղած որոշումները, մինչդեռ հետագայում կատարված շատ փոփոխություններ հրապարակման և լուսաբանման կարիք ունեն: Գրքում տրված և մեկնաբանված են տերմինաբանական կոմիտեի՝ լեզվաշինության նորմավորման, օտար բառերի տառադարձության, ուղղագրության և ուղղախոսության, բառապաշարի և տերմինների մշակման մասին ընդունած որոշումները:

Ուղեցույցը «պարտադիր է բոլոր տիպի դպրոցների, ուսումնական հաստատությունների, հրատարակչությունների և պարբերական հրատարակությունների համար»:

12. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու / ՅՍՍՀ մին. խոր. առընթ. տերմինաբ. կոմիտե. -

Ե.: Եր. համալս. հրատ., 1978. - 229 էջ - աղս., հավել.

Ե.: Եր. համալս. հրատ., 1984. - 283 էջ - աղս., հավել.

Ե.: Եր. համալս. հրատ., 1988. - 415 էջ - աղս., հավել.

Ե.: Լեզվագետ, 2005. - 376 էջ - աղս., հավել.

[նույնը] / ՀՀ ԿԳՆ: Լեզվի պետ. տեսչություն: Հայերենի բարձ. խորհուրդ; Գիտ. խմբ. Լ. Միրզոյան. - Ե.: 9-րդ հրաշալիք, 2006. - 383 էջ : Հավել. էջ 298-309. - Տերմինների, բառերի և բառակապգ. ցանկ էջ 310-379:

Справочник по терминологии и орфографии.

Ժողովածուն լրացումներով և փոփոխություններով վերահրատարակվող տեղեկատու է, որտեղ գիտական վերլուծության և համակարգման եղանակով ժամանակագրական կարգով հրապարակված են Լեզվի բարձրագույն խորհրդի [նախկինում՝ տերմինաբանական կոմիտեի] գործող որոշումները, լուսաբանված և հստակեցված են հայերենի լեզվաշինությանը, նորմավորմանը, մաքրությանը, ուղղագրությանը, ուղղախոսությանն ու կետադրությանը վերաբերող հարցերը: Ժողովածուն ունի տեղեկատու բառացանկեր, աղյուսակներ, մաս հավելված՝ լեզվի մասին ՀՀ օրենքից բաղվածքներով:

## ՂԱՍԱԳՐՔԵՐ УЧЕБНИКИ

13. Հայոց լեզու: Ղասագիրք V-VII դասարանների համար / [հմեղ.] Է. Աղայան. - Ե.: Լույս,

[1965-1970]. - 352 էջ:

[1971-1973]. - 272 էջ:

[1974-1975]. - 270 էջ:

[1976-1978]. - 268 էջ:

[1979-1983]. - 272 էջ:

[1984-1989]. - 320 էջ:

[Նույնը]: Դասագիրք V-VII (տասննեկամյա դպրոցի՝ VI-VIII) դասարանների համար: 25-րդ հրատ. / [հմհեղ.] Է. Աղայան; Խմբ.՝ Ս.Ս. Հակոբյան. - Ե.: Լույս, 1990. - 320 էջ:

Армянский язык. Учебник 5-7 классов.

Դասագիրքն ընդգրկում է հայերենի քերականության «Ձևաբանություն» բաժինը: Հաստատված լինելով ՀՍՍՀ լուսավորության նախարարության կողմից այն, որպես դիդակտիկ լեզվաբանության արժեքավոր նյութ, շուրջ 3 տասնամյակ վերահրատարակվել է լրացումներով ու փոփոխություններով և ծառայել սերունդներին պարզ, մատչելի և արդյունավետ եղանակներով ուսուցանելով հայերենի քերականությունը:

14. Հայոց լեզու: Հանրակրթ. դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք / [հմհեղ.] Է. Աղայան. - Ե.: Լույս,

[1970-1992], 1994, 1997. - 160 էջ:

2002, 2004, 2007. - 152 էջ

Армянский язык. Учебник 4-ого класса.

Դասագիրքն ընդգրկում է հայերենի քերականության «Ուղղագրություն» բաժինը: Վերահրատարակվել է շուրջ 20 անգամ:

15. Հայոց լեզու: 5-րդ դաս. համար: 15-րդ հրատ. / [հմհեղ.] Է. Աղայան; Խմբ.՝ Լ.Գ. Սեդրոյան. - Ե.: Լույս. - 1991. - 160 էջ:

Армянский язык. Учебник 5-ого класса.

16. Հայոց լեզու: 5-6-րդ դասարանների դասագիրք: Բարեփոխ. հրատ. / [հմհեղ.] Է. Աղայան; Խմբ.՝ Ս.Վ. Ուռույան. - Ե.: Լույս,

1992. - 320 էջ:

1994, 1997. - 400 էջ:

Армянский язык. Учебник 5-6 классов.

17. Հայոց լեզու: Հանրակրթ. դպրոցի 6-րդ դաս. դասագիրք / Խմբ. Ս. Գյուլբուրդայան. - Ե.: Լույս, 1998. - 207 էջ:

Армянский язык. Учебник 6-ого класса.

## ՆՅՈՒԹԵՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԳՐՔԵՐՈՒՄ МАТЕРИАЛЫ В СБОРНИКАХ И ДРУГИХ КНИГАХ

18. Հայերենի ուղղախոսության հարցերը տերմինաբանական կոմիտեի վերջին որոշումներում // Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր / ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ: [Դր.] 1. - Ե., 1976. - էջ 72-90:

Вопросы орфоэпии армянского языка в последних решениях терминологического комитета.

Լախ ներկայացվում է տերմինաբանական կոմիտեի վերջին 10-15 տարիների գործունեությունը, որն ուղղված է եղել հայերենի նորմավորման, օտար բառերի տառադարձության, ուղղագրության, բառապաշարի ու տերմինների մշակման և ժամանակակից հայերենի ուղղախոսության հարցերին: Քանի որ լեզվի բնականոն զարգացման գործընթացում փոխազդեցություններն անխուսափելի են, և դրանց արդյունքում ցանկացած լեզվում առաջանում են օտարաբանությունների և բառափոխառությունների, ինչպես նաև օտար շեշտադրությամբ ու առոգանությամբ հնչող բառերի զուգաձևեր, միօրինակությունն ապահովելու համար անհրաժեշտ է շարունակաբար վերանայել նախկին որոշումները, մշում է հողվածագիրը և վերլուծաբար ներկայացնում տերմինաբանական կոմիտեի եռաշարք բաղաձայնների ուղղախոսության և փոխատու լեզուներից հայերենում տառադարձված հատուկ անունների մասին սահմանած նոր կանոնները:

Տես նաև հավել.

19. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկու բառակապակցության թարգմանության հարցի շուրջը // Հայերենագիտ. միջազգ. 2-րդ - գիտաժողով (1987թ., 21-23 սեպտ.): Ձեկ. դրույթներ / ՅՍՄՀ ԳԱ: Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ. - Ե., 1987. - էջ 32-33:

К вопросу о переводе двух словосочетаний в "История Армении" Мовсеса Хоренаци.

Զեկուցողը մշում է, որ «Գրական թերթի» 1986 թ. երկու համարներում (հ.հ. 33, 50) առաջարկված է եղել Մովսես Խորենացու «Պատմության» թարգմանական այլ սխալների թվում ուղղել նաև «երգեր ծեռամբ» և «հայոց մեծաց» բառակապակցությունները: Քննելով վերջիններիս թարգմանական առանձին դեպքերը՝ զեկուցողը գտնում է, որ իրականում պետք է հաշվի առնել դրանց բնագրային իմաստը և թարգմանությունը կատարել՝ ելնելով համատեքստից:

20. [Դարավերջյան մտորումներ և խոհեր] / Հովհ. Բարսեղյան // Դարավերջի դիմանկար: Հայ մտավորականների դարավերջյան մտորումներ և խոհեր. - Ե.: Կանչ, 1999. - էջ 85-86, նկ.

Речь Ов. Барсегяна [в кн. "Портрет конца эпохи"].

Հ.Բ.-ն 3-րդ հազարամյակի նախաշեմին խոսում է դարասկզբին կյանք մտած իր սերնդի կրած փորձությունների, նրա ստեղծագործ աշխատանքով վերաշինված և հետո անկախացած հայրենիքի մասին, ապա, իր բարենադրանքները հղելով հայ ժողովրդին, կոչ է անում «աշխարհիկ և հոգևոր մեծատուններին»՝ իրենց գործունեությունը ծառայեցնել ազգային մշակույթի ծաղկեցմանը, ապա հույս հայտնում, որ ի վերջո կիրականանան «Մասիսը պանդխտությունից ազատելու» և աշխարհասփյուռ հայերին հայրենիք վերադարձնելու պատմական առաքելությունները:

Տես նաև հավել.

21. Խմբագրի կողմից : [Առաջաբան] // Մեյթիխանյան Փ.Գ. Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության). - Ե.: Եր. համալս. իրատ., 2001. - էջ V-VIII:

Օրմ րեդակտորա : [Սրեդիսլ. կն. "Տլոարյար Բիբլիսս ս ւմեն արմանյակս սադյադ (նա օսնօր արմանյակս սօզիսս V-XX սս)" Ս.Գ. Մեւտիսանյան].

Յ.Բ.-ն գտնոււմ է, որ շնայաճ այս թեմայով ուսումնասիրութիւնները (նաև բառարանները) այնքան շատ են, որ նման գործի ձեռնարկոււմը կարելի էր համարել հանդգնութիւն, սակայն գրքի վերնագրոււմ առկա «ըստ V-XX դդ. հայ բանաստեղծութեան» արտահայտութիւնն արդեն մտահոգսման ելակետը դարձնում է բանաստեղծական, բառարանը բանաստեղծական խոսքի «բնագրային շքահանդես»: Ըստ նրա այս բառարանի յուրաքանչյուր անուն բառահոդվածը առանձին ուսումնասիրութիւն է լի քննվող անվան մասին բազմապիւլան հայտնութիւններով:

Տես նաև հավել.

22. Երկու խոսք : [Առաջարան] // Աճառյան Յ. Հայ գաղթականութեան պատմութիւն. - Ե.: Զանգակ-97, 2002. - էջ 5-8:

Ըա սլօա : [Սրեդիսլօուե կն. "Իստօրիա արմանյակս սո քեյստա" Գր. Աչարյան].

Նախ նշվում է, որ այս աշխատութիւնը կարող էր և «Երկու խոսք» չունենալ, քանի որ Աճառյանի նման խոշոր գիտնականը մեկնաբանութեան կարիք ուներ խորհրդային այն տարիներին, երբ առաջարան գրվում էր «հեղինակի լեզվաբանական ոչ մարքսիստական, ոչ մտոական տեսակետների «վնասակարարութիւնից» ընթերցողին հեռու պահելու և դրանով իսկ Աճառյանի գրքերի հրատարակոււմը հնարավոր դարձնելու համար միայն»: Այնուհետև, խոսելով մեծ հայագետի աշխատութեան բազմաթիվ արժանիքների մասին, Յ.Բ.-ն շեշտում է, որ այն ունի ժամանակատարածքային լայն ընդգրկում «թե՛ պատմական, թե՛ արդիական լիակատարութիւն», և բացառիկ են նրանից քաղված պատմական դասերը նաև արդի Հայաստանի համար, քանի որ աշխարհասփյուռ հայութեան գլխին կրկին կախված է ձուլվելու վտանգը: Մեծ է նրա արժեքը նաև բնագրային առումով, քանի որ «օգտագործված պատմական գրականութիւնը հիմնականում գրաբար է, գրքի բուն շարադրանքը՝ արևմտահայերենով է՝ հին ուղղագրութեամբ, արևելահայ մամուլի ու գրականութեան, ինչպես նաև Արևելյան Հայաստանում աշխատած վերջին 2-3 տասնամյակների մշակում-գրառումները՝ արևելահայերենով են արևելահայ ուղղագրութեամբ»:

Առաջարանն ավարտվում է երախտագիտութեան խոսքով ուղղված Յ. Աճառյանի անվ. համալսարանի ռեկտոր պրոֆ. Ա. Խաչատրյանին և Բ. Աճառյանին մեծանուն հայագետի անտիպ աշխատութիւնների հրատարակութեան համար:

Նույնը տես 50, նաև հավել.

23. Հայոց լեզվի պատմութեան մի քանի հիմնահարցեր՝ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերութիւնների տեսադաշտում // Հայագիտութեան արդի վիճակը և զարգացման հեռանկարները = Armenian Studies Today and Development Perspectives : Սիջազգ. գիտաժողով (Եր., 15-20 սեպտ., 2003թ.): Զեկ. ժողովածու. - Ե.: Տիգրան Մեծ. - 2004. - էջ 341-344:

Ոոոորյա սրօբլեմա ստօրիս արմանյակս յազա նա սօլե սրնյա սաաոտնօսիոնյա Բարմանյա-Ըուսնօրա.

Զեկուցման 1-ին մասում խոսվում է Հայաստան-Սփյուռք փոխհարաբերութիւններում հայագիտութեան դրական գործունեի մասին: Այդ համատեքստում

նշվում է, որ համաշխարհային ճանաչում գտած «Հայոց լեզվի պատմություն» գիտական նվաճումներն ու ձեռքբերումները, հայերենի պետական լեզու հռչակվելը, հայերենի ազգային գաղափարաբանությունը, հայ դպրությունը Հայաստան-Սփյուռք տարրերակում չունեն, և «հայի ազգային գոյության ամենամեծ ձեռքբերումը հենց ինքը հայոց լեզուն է»: 2-րդ մասը նվիրված է հայագիտության ասպարեզում ունեցած կորուստներին ու չիրականացված ծրագրերին: Ձեկուցողը գտնում է, որ անենացավալին «վերջին երկու տասնամյակների համար ապարդյուն անցած ժամանակի կորուստն է», հայերենագիտական որոշ ճյուղերի սիրողական մակարդակի իջնելը, գրագողությունը, լեզվի նկատմամբ պետական հոգածության բացակայությունը, հայ դպրոցի և ուսուցման բարձրորդի վիճակը ևն: Հիշեցնելով մեծ հայագետ Աճառյանի մտավախությունը Սփյուռքահայության ուշ թե շուտ այլախոս դառնալու մասին զեկուցողը գտնում է, որ «Հայաստան-պանման ապագա ծրագրերի ողջ իրագործման պատասխանատվությունը կրողը Հայաստանի Հանրապետությունն է» իր համապատասխան կառույցներով, իսկ լեզուն ժողովրդին է, և կուսակցականությունը, ուրեմն նաև: Հայաստան-Սփյուռք հատվածայնությունը նրա էությանը խորթ երևույթներ են:

**24. Երկու խոսք :** [Առաջաբան] // Հովակիմյան Աղասի: Եղնիկ գյուղի պատմությունը (պատմագիտական քննություն) / Խմբ.՝ Ն.Ա. Հովակիմյան. - Ե.: Ասողիկ, 2004. - 235 էջ:

Два слова : [Предисловие кн. Агаси Овакимяна "История деревни Егник"].

Արժևորելով Արագածոտնի նախկին Դադալու գյուղին վերաբերող սույն աշխատության տեղեկատվական աղբյուրների առատությունը և առանձնապես կարևորելով Եղնիկի պատմության համար բացառիկ տեղեկատվական արժեք ներկայացնող «Գյուղի ընտանիքների կամերալ ցուցակագրումների» (1931-1886 թթ.) տվյալների օգտագործման իրողությունը գրախոսը բարձր է գնահատում հեղինակի մասնագիտական հմտությունը և գտնում, որ հայոց պատմությունն ամբողջանում է նաև «ամեն գյուղի մասին սույն գրքի պես հանգամանալից ուսումնասիրություն» ունենալով: Այն ներկայացնելով որպես շարունակություն մեր գիտուն ու հայրենասեր նախնիներից մնացած բարի ավանդույթի, որն է՝ հայոց աշխարհի բնակավայրերի՝ տարբեր տեսանկյուններով հանգամանալից քննությունը, Գ.Բ.-ն պատմական անդրադարձ է կատարում նաև պատերազմին, կուսակցական կազմակերպություններին և բռնադատվածներին վերաբերող գլուխների բովանդակությանը:

Նույնը տես՝ 56

**25. «Երևան» տեղանվան ուղղագրությունը գրական արևելահայերենում և արևմտահայերենում // Միջազգ. գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին: Ձեկ. ժողովածու = International Conference dedicated to the 1600<sup>th</sup> Anniversary of the Armenian Letters Creation. Collection of papers = Международная конференция, посвященная 1600-летию изобретения армянской письменности (Ե., 12-17 սեպտ., 2005թ.) / ԳԳ ՊԱԱ. - Ե.: Գիտություն, 2006. - էջ 308-311. - Ամփ.՝ անգլ., ռուս.**

The Orthography of "Yerevan" Toponym in Literary Eastern Armenian and Western Armenian.

Орфография топонима "Ереван" в восточно-армянском и западно-армянском литературных языках.

[Սույնը] // Ձեկուցման դրույթներ. - Ե., 2005. - էջ 88-92:

Աշխարհի բոլոր լեզուներին բնորոշ են գրի և հնչման անհամապատասխանությունը և դրանից եկող դժվարությունները, նշում է զեկուցողը: Նույնիսկ «աշխարհի միասնական լեզու դառնալու հավակնող անգլերենը իր յուրաքանչյուր գրի հնչական ճիշտ արժեքը որոշելու համար մինչև 40 կանոնարկում ունի»: Նույնը վերաբերում է հայերենին, և, ինչպես հավաստում է մեծանուն Յր. Աճառյանը, անվազն տգիտություն կամ միամտություն կլիներ կարծել, թե հայի ու հայերենի ազգային գոյատևման հիմքը մեսրոպյան գրերի հնչական արժեքի նույնությամբ պահպանումն է: Ուստի, ցանկացած բառի, այս դեպքում «Երևան» տեղանվան «հնչական արժեքի փոփոխումը շատ բնական ժամանակի, միջավայրի ու հանգամանքների փոփոխության արդյունք է և ուրիշ ոչինչ»: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ներկայացնում է նշված տեղանվան պատմությունը, քննում և, Յր. Աճառյանի տեսակետները վկայակոչելով, գիտականորեն անհամոզիչ է համարում Երևան-Էրեբունի ստուգաբանությունը: Վերջում դատապարտում է «Երևան» տեղանվան ուղղագրության շուրջ ծավալված բանավեճերը՝ դրանք համարելով «երկու գրական հայերենների ուղղագրական աղմուկ-աղաղակի արդյունք», և ավարտում խոսքը կրկին Յր. Աճառյանի պատգամով, որից հետևում է, որ հայերենի գոյատևումը առաջին հերթին պայմանավորվում է տարածքային սահմանով և պետական հոգածությամբ:

26. Աղայան Էդուարդ Բագրատի : [Կյանքը և գործունեությունը] // Մեր անվանի դասախոսները: 2-րդ մաս / Կազմ. Լ.Պ. Ղարիբջանյան, Ջ.Ք. Գասպարյան. - Ե.: Եր. համալս. հրատ., 2006. - էջ 19-21:

Агаян Эдуард Баграмович : [Краткий очерк жизни и деятельности].

27. Կարծիք Խ. Մնացականյանի «Հայերենի կետադրության հիմնահարցեր» ուսումնասիրության մասին // Մնացականյան Խաչիկ: Շարահյուսագիտական և կետադրագիտական հիմնախնդիրների վերլուծությունը ժամանակակից հայերենում (գիտաքննական հանրամտչելի ձեռնարկ) / [Գավառի պետ. համալս.]; [Դմիտր.] գրախոս. Գ.Ա. Սուբիասյան. - Ե., 2006. - էջ 33-34:

Мнение об исследовании Х. Мнацаканяна "Основные вопросы армянского пунктуации".

Գրախոսը գտնում է, որ, ի տարբերություն այլ գիտնականների, ձեռնարկի հեղինակը ոչ թե անօգուտ ձևով ցուցադրում է իր նախորդների թերություններն ու անհաջողությունները, այլ փորձում է արդյունավետորեն օգտագործել նրանց կողմից առաջադրված տեսությունները՝ «հայերենի կետադրության շենքի հիմնաքարերը, որմնաքարերն ու շաղախը»:



## ՀՈՂԱԾՆԵՐ, ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(թերթերում և հանդեսներում)

СТАТЬИ, РЕЦЕНЗИИ

(в газетах и журналах)

**28.** Վաստակավոր հայագետը (Գուրգեն Սևակի ծննդյան 60-ամյա-  
րը) // Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ. - 1964. - N5. - էջ 95-96:

Заслуженный арменовед (к 60-летию со дня рождения Г. Севака).

*Տես նաև հավել.*

**29.** Պահպանենք և հարստացնենք հայերենի բառազանձը // Սով.  
Հայաստան [ամսագ.]. - 1968.

N 7. - էջ 18-19, 22:

N 8. - էջ 29-32:

Сбережем и обогатим словарный состав армянского языка.

Խոսելով հայերենի բառապաշարի զարգացման պատմությունից և նատ-  
մանշելով հայերենը գիտության ու արվեստների լեզու դարձնող «մեր խորա-  
գետ նախորդների» ազգապահպան գործը՝ հողվածագիրը ցավով է արձանագ-  
րում վերջին հազարամյակում հայերենի գրավոր և բանավոր լեզուների տա-  
րանջատման իրողությունը, որի պատճառներից մեկն էլ եղել է մեծ տարածում  
գտած բարբառախոսությունը՝ լցված բռնի օտարաբանություններով: Սկսած  
խորհրդային տարիներից՝ հայոց լեզուն ու նրա բառապաշարը ծաղկում ապրե-  
ցին, և հայերենի հարստացումը այժմ էլ շարունակվում է, սակայն, առաջին  
հերթին բառաստեղծման, ապա նոր միայն փոխառությունների միջոցով: Հող-  
վածագիրը գտնում է, որ լեզուն ինքն էլ դուրս է մղում օտարը, եթե կարողանում  
է իր զարգացման գործընթացում ստեղծել իրենը, և անտեղի օտարաբանու-  
թյունները լեզվից մաքրելը լեզվի զարգացման բնական ընթացք է: Չնայած  
դրան, սա չի նշանակում, թե «լեզվի զարգացումը մեր կամքից ու ցանկությու-  
նից բացարձակապես անկախ է», մեր միջամտություններն ավելորդ: Այդ գոր-  
ծառնությունները կարգավորվում են տերմինաբանական կոմիտեի որոշումներով:  
Լեզվաշինության մեծ գործի առաջին նախաձեռնողները հայ դասականներն  
էին. սկսած Աբովյանից մինչև Չարենց՝ դավանել են մեկ հիմնական սկզբունք՝  
պահպանել մեր լեզվի ազգային ձևը, հարստացնել նրա բառապաշարը իր սե-  
փական բառակազմական հարուստ միջոցներով՝ չխորշելով նաև անհրաժեշտ  
օտարաբանություններից: Հողվածագիրը դատապարտում է որոշ բանավիճող-  
ների՝ հայերենի տերմինաշինությունը այլ լեզուների տերմինաշինության հետ  
համեմատելու կամ արևմտահայ տերմինաշինությունը արևելահայերենի տեր-  
մինաշինությանը հակադրելու վնասակար ու դատապարտելի փորձերը, քանի  
որ ամեն մի լեզու ունի պատմական զարգացման իր օրինաչափությունները:

*Տես նաև հավել.*

**30.** Ազգայինը և միջազգայինը տերմինի և տերմինաշինության մեջ  
// Լրաբեր հաս. գիտ. - 1971. - N1. - էջ 97-102:

Национальное и интернациональное в терминах и терминологии.

Հողվածը գրվել է Ա. Ոսկանյանի նամակի (ԼՀԳ, 1969, N9) առիթով, որն ուղղված էր Ռ. Իշխանյանի «Հայերենի տերմինաբանության հարցեր» հոդվածի դեմ (ԼՀԳ, 1969, N7): Նամակագիրը կշտամբանքի խոսքեր էր ուղղել տերմինաբանության հարցերով զբաղվող հայ մտավորականների հասցեին, ծայրահեղ համարել տերմինաշինության հետ կապված որոշ սկզբունքներ, որոնք, ըստ նրա, հայերենը դարձնում են «աշխարհից կտրված, իր պատյանում ամփոփված լեզու»: Ի պատասխան նամակագրի՝ Գ.Բ. ն համոզում է, որ գիտական տերմինաբանության, տերմինաշինության ու տերմինագործածության ասպարեզներում դժվարություններ կան ոչ միայն հայերենում, այլև ազգային այլ լեզուներում: Վերջում ավելացնում է, որ, այնուամենայնիվ, գիտական հասկացությունների հիմնական մասի տերմինավորման մեջ չի կարելի չկիրառել տերմինաշինության տեսական սկզբունքները, որոնք պահանջում են գիտական տերմինների միօրինակություն և ընդհանրացում ոչ թե հասկացության կույր պատճենահանման կամ թարգմանության, այլ բովանդակության շրջանակում:

Տես նաև հավել.

31. [Գրախոսություն] // Լրաբեր հաս. գիտ. - 1972. - N9. - էջ 111-114.  
- Գրախոս. գիրք՝ Մուրադյան Ա.Ն. Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում / Պատ. խմբ. Գ.Բ. Ջահուկյան; ՀՍՍՀ ԳԱ: Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ. - Ե., 1971. - 362 էջ:

[Նույնը] // Պայքար (Ուոթերթրոուն). - 1973. - 17-18 փետրվ. - էջ 1, 3:

Рец. на кн.: Мурадян А.Н. Грекофильская школа и ее роль в создании армянского грамматического терминологии.

Հանգամանորեն ներկայացնելով Կիպրոսում կրթված և 1947-ին հայրենադարձված Արուսյակ Մուրադյանի «մեծածավալ և արժեքավոր աշխատության» կառուցվածքն ու բովանդակությունը՝ գրախոսը նշում է, որ նրանում գիտական բարձր մակարդակով համակարգված են հունարան դպրոցի ստեղծած և թարգմանական ճանապարհով հայերենին անցած տերմինները, գնահատված է դրանց պատմական նշանակությունը, բարեխղճությամբ, բանասերի հմտությամբ ու գիտակությամբ սպառիչ պատասխան է տրված թեմային առնչվող բոլոր հարցերին:

32. Հր. Աճառյանը՝ հայոց լեզվի պատմության հետազոտող // Բանբեր Եր. համալս. - 1976. - N3. - էջ 44-52. - Ամփ. ռուս.

Р. Ачарян - исследователь истории армянского языка.

Հողվածը Հր. Աճառյանի ծննդյան 100-ամյակի առթիվ ԵՊՀ-ում կայացած հորեյանական գիտական մատաշրջանում կարդացված զեկուցման հրապարակումն է: Հեղինակը քննվող թեման համարում է աճառյանագիտության ամենահիմնական խնդիրը և գիտականորեն ներկայացնում ու մեկնաբանում Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մոնումենտալ երկհատոր աշխատությունը՝ նշելով, որ դրա մեջ ընդհանրացված է խոշոր հայագետի տերմինաբանության և բարբառագիտության վերաբերյալ 30-ից ավելի մեծածավալ հատորներում արտացոլված լեզվական հարուստ նյութը: Շեշտելով, որ Հր. Աճառյանը, իր հայագիտական ժառանգությամբ ընդհանրապես և հայոց լեզվի պատմութ-

յանը վերաբերող ուսումնասիրություններով մասնավորապես, հայ լեզվաբանության պատմահամեմատական մեթոդի խոշոր ներկայացուցիչն է, հեղինակը խոսում է նաև նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության գիտական մեծ արժեքի մասին՝ նշելով, որ դրա հայերենի քերականական կառուցվածքի պատմահամեմատական քննությանը վերաբերող բաժինները գալիս են լրացնելու հայոց լեզվի պատմության երկհատորյակի բովանդակությունը:

Տես նաև հավել.

**33.** Նոր որոշում ուղղագրության մասին : [«Չակերտների մեջ առնվող անունների հուլովական վերջավորությունների և հոդերի գրության մասին»] // Սով. դպրոց. - 1979. - 1 փետր. - էջ 4:

Новое решение о правописании.

ՀԱՍՂ Մինխորհին առընթեր տերմինաբանական կոմիտեն նշված որոշման նախագիծը դրել էր քննարկման, որի նպատակն էր չակերտների մեջ առնվող անունների գրության երկվություններն ու բացառությունները վերացնելը և ուղղագրության բացարձակ միասնականություն սահմանելը: Հոդվածագիրը վերլուծաբար մեկնաբանում է հրապարակված ելույթների բովանդակությունը, գիտականորեն հիմնավորում կամ մերժում որոշ առաջարկություններ և դիտողություններ, նշում դրանցում առկա երկվությունը, որը գալիս հայերենի կառուցվածքային առանձնահատկություններն անտեսելուց: Այնուհետև վերլուծաբար ներկայացնում է տերմինաբանական կոմիտեի սահմանած որոշումը՝ դրա առավել ճկուն գործածման երկու տարբերակով, որոնք են հիմնական կանոն վերջավորություններն ու հոդերը՝ չակերտների մեջ, և դրանից բացառություններ՝ չակերտներից դուրս այն դեպքերում, երբ ներսում գրելն առաջ է բերում հայերենի համար անսովոր ձևեր կամ դժվարացնում է բնագրի ընկալումը: Ըստ հոդվածագրի՝ չակերտների ներսում դնելը բխում է նաև այսօրվա տպագրական տեխնիկայի պայմանից, որն է՝ խուսափել ավելորդ զծիկից:

Տես նաև հավել.

**34.** Մայրենի լեզվի մաքրության և հարստացման համար // Սով. Հայաստան. - 1982. - 13 մարտի. - էջ 3:

За чистоту и обогащение родного языка.

Որպես տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղար՝ հեղինակը խոսում է այդ հիմնարկի գործունեության օգտակարության մասին, համառոտ ներկայացնում նրա որոշումները, որոնք նպատակաուղղված են հայերենի մաքրությանն ու հարստացմանը:

**35.** Հայագիտության առատ հունձքի վաստակով (ՀԱՍՂ ԳԱ ակադ. էդ. Աղայանի ծննդյան 70-ամյակը) // Լրաբեր հաս. գիտ. - 1983. - N5. - էջ 99-101, նկ.

С богатым вкладом в арменоведение (к 70-летию со дня рождения академика Арм. СССР Э.Б. Агаяна).

Տես նաև հավել.

36. Մեծ կորուստ : [ՍՍՅՍ ԳԱ ք.ա., Վրաց. ՍՍՀ ԳԱ ակադ. Ա. Շանի-ծեի մասին] // Երևանի համալս. - 1987. - 18 ապր. - էջ 2:

Огромная потеря (об акад. Груз. ССР Акаки Шанидзе).

Գրվել է Թբիլիսիի համալսարանի հին վրացերենի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ակակի Շանիծեի մահվան կապակցությամբ: Իր կյանքի 100 տարիներից ավելի քան 80-ը գիտությանը նվիրաբերած «արևաշող Կոլխիդայի արժանավոր որդին», լինելով քարթվելագիտության մի շարք առարկաների հիմնադիր, իր լեզվաբանական բազմաթիվ հետազոտություններով նաև դուրս է եկել վրացագիտության սահմաններից: Հայ լեզվաբանության մեջ նրա հռչակավոր «շարքի տեսության» կիրառումը առիթ դարձավ, որ մեծ վրացագետը իր «Նոր հայացք ժամանակակից հայերենի բայի խոնարհման բնույթի վերաբերյալ» (1963) ուսումնասիրությամբ Վրաստանում դեի հայագիտական դպրոցի հիմքը, որն ունեցավ իր անուրանալի դերը մինչև այսօր էլ շարունակվող հայ-վրացական գիտական կապերի ամրապնդման մեջ:

Տես նաև հավել.

37. Կյանքի լուսավոր ուղի : [Աշխարհ. գիտ. դ-ր, պրոֆ., ՀՀ ԳԱ վաստ. գործիչ Թ.Խ. Հակոբյանի մասին] // Բանբեր Եր. համալս. - 1989. - N3. - էջ 221-223:

Светлый жизненный путь (О заслуж. деят. АН РА, д-ра, проф. геогр. наук Т.Х. Акопяне).

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» ստեղծման մտահղացումը և իր գործընկերների հետ դրա իրականացումը ամբողջությամբ կապված է Թադևոս Հակոբյանի անվան հետ, գրում է հոդվածագիրը, «բայց, ավաղ, հրատարակիչների անտարբերության ու դանդաղկոտության մեղքով նա ամբողջությամբ տպագրված չտեսավ իր շուրջ 40-ամյա տքնաջան աշխատանքի արդյունքը»: Աշխարհագետ գիտնականն իր աշխատություններով վերակենդանացրեց Հայոց աշխարհի հարյուրհազարավոր անմահ անուններ, փրկեց դրանք մոռացվելու վտանգից, «հայ ժողովրդին վերադարձրեց նրա կորսված Հայրենիքը՝ հոգևոր Հայաստանը»:

Տես նաև հավել.

38. Քնորգ Ջաիուկյան (70 տարի) // Բանբեր Եր. համալս. - 1990. - N1. - էջ 233-237, նկ:

Геворг Джаукян (70-лет).

Տես նաև հավել.

39. Գրիգոր Գարեգինյանի լույսի պես մաքուր, լույսի պես ջերմացնող կյանքը : [Մահախոսական] // Բանբեր Եր. համալս. - 1992. - N3. - էջ 202-203, նկ.:

Чистая, как свет, и греющая, как свет, жизнь Григора Гарегиняна.

Տես նաև հավել.

40. Երևանի պետական համալսարանը 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում // Հանդես Եր. համալս. - 1995. - N2. - էջ 15-22:

Ереванский государственный университет в Великоу Отечественноу воине 1941-1945 гг.

ԵՊՀ գիտ. խորհրդի՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակի առթիվ գումարած միասուամ կարդացված զեկուցում է, ուր հեղինակը խոսում է պատերազմին մասնակցած համալսարականների մասին, որոնք իրենց ծանրակշիռ տեղն են ունեցել հատկապես հայկական ազգային գորամիավորումների միջին և բարձր հրամկազմի մեջ և, ուսանողից մինչև ռեկտոր, պատերազմին մասնակցել են քաղաքացիական ու ազգային արժանապատվության բարձր գիտակցումով: Վերջում, նշելով, որ մեծ է եղել պատերազմից վերադարձած համալսարանականների դերը Հայաստանի հետագա գիտական և հասարակական-քաղաքական կյանքում, զեկուցողն ընդգծում է, որ վետերանները, որոնցից «ամենաջահելներն արդեն 70-ի շեմին կանգնած մարդիկ են», այժմ ցավով են նայում բազմակուսակցության անցման գործընթացում հայ ազգային կուսակցությունների գաղափարազուրկ պայքարի վտանգավոր իրողությանը:

41. Ուղղագրական զուգածությունները «ի» նախորդով բաղադրված բարդություններում // Հանդես Եր. համալս. - 1995. - N3. - էջ 43-48:

Параллельные орфографические формы в сложных словах с префиксом «и».

Յողվածում քննվում են «ի» նախորդով այն կայուն հարադրությունները, որոնց մեկ բառային իմաստ ձեռք բերելու գործընթացը սկսվել էր դեռևս գրաբարում: Համաձայնելով է. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984) աշխատության մեջ նշվող այն տեսակետին, թե աստիճանաբար հաղթանակում է վերոնշյալ ձևերի՝ կցականների վերածվելու գործընթացը, հեղինակն այնուամենայնիվ գտնում է, որ «վերլուծական կազմության բաղադրություններից համադրական (կցական) բաղադրությունների անցումը այդպես հեշտ ու սահուն, բառակազմական և, մասնավանդ, ուղղագրական անվիճահարույց ու անշփոթ ընթացք չի ունենում»: Վկայակոչելով գրաբարի, միջին և ժամանակակից հայերենի գրական, բառարանային և այլ աղբյուրներից բերված բաղադրված հարադրական և համադրական բարդությունների իրարամերժ գործածման մի շարք զուգածներ՝ հողվածագիրը գտնում է, որ դրանք հարկավոր է կանոնարկել և ուղղագրական միասնականություն մտցնել: Յողվածի վերջում ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր տերմինաբանական հանձնաժողովի ընդունած որոշումը՝ ի վայր (վար), ի վեր հարադրություններով կազմված բառակապակցությունների և բարդությունների վերաբերյալ:

42. Գրական հայերենի միավորման հարցը և նրա քննությունը Հրաչյա Աճառյանի աշխատություններում // Բանբեր Եր. համալս. - 1996. - N2. - էջ 94-102. - Ամփ. ռուս.

Вопрос объединения ветвей литературного армянского и его решение в трудах Грачья Ачаряна.

Հողվածում քննվում են Հր. Աճառյանի լեզվաբանական ըմբռումները կապված հայերի միալեզվության հիմնախնդրի հետ, ինչպես նաև այլ մտավորականների ու լեզվաբանների (Հ. Մանանդյան, Մ. Նալբանդյան, Մ. Աբեղյան, Գ. Սևակ, Գ. Ջահուկյան ևն) այդ խնդրին առնչվող բանավիճալի տեսակետները: Ընշտվում է, որ խոշոր հայագետի հետազոտություններում 5-րդ դարի հայերենը դիտվում է որպես հնդեվրոպական մայր լեզվից պատմական զարգացմամբ առաջացած մեկ միասնական լեզու՝ իր գրավոր առաջին և ամենակատարյալ տարբերակով (գրական, գրաբար)՝ մեսրոպյան հայերենով, սակայն, որի միասնականությունը 11-րդ դ.-ում արդեն վերացած էր, իսկ 19-րդ դ.-ում բաժանված երկու ճյուղերի՝ արևմտա- և արևելահայերենի: Հողվածագիրը համաձայն է ինչպես Հր. Աճառյանի եզրակացության, այնպես էլ Հովհ. Թումանյանի լավատեսական կանխատեսման հետ, ըստ որոնց հիմնախնդրի լուծման բանալին արևելահայերենի՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածքում գործող միասնական լեզվի գոյության պատմական փաստն է:

**43. Կարծիք «Միսա՞ք, թե՞ Միսակ» նամակի մասին // Հանդես Եր. համալս. - 1996. - N2. - էջ 108-109:**

**Мнение о пусьме «Миса́к, пѐ Мисак».**

Նամակ-բանավեժ է՝ ի պատասխան Ռ. Հարությունյանի «Միսա՞ք, թե՞ Միսակ» նամակում (տես ն.տ. էջ 106-107) արծարծված՝ ուղղագրության միասնականության, տերմինաբանության և տերմինաշինության հարցերին առնչվող մի քանի տեսակետների, որոնք բերվել են Ռ.Ա. Իշխանյանի «600 բառի» և Հ.Ա. Հարությունյանի «Ուղղագրական բառգրքույկի» քննության համատեքստում: Ազնիվ համարելով նամակագրի՝ «ուղղագրական և բացատրական հստակ կողմնորոշող միասնական մոտեցում» որոնելու միտումը՝ Հ.Բ.-ն գտնում է, որ վերը նշված բառարաններում նամակագրի հիշատակած բառերի (դրանց շարքում՝ Միսաք և Միսակ) երկակի գրությունն արդարացի է, քանի դեռ դրանք հանձնարարելի են դպրոցական բառարաններում:

**44. Դարծյալ ուղղագրության մասին // Գիտություն և տեխնիկա. - 1996. - N10-12. - էջ 39-42:**

**Снова о правописании.**

Գրված է նույն անագրում (1996թ., N4-6, N7-9) հրատարակված Գաբրիել Պասմաճեանի (Մոնրեալ) «Միասնական ուղղագրութիւն յօգուտ միասնութեան» հողվածի առիթով: Հ.Բ.-ն նախ անդրադառնում է ուղղագրության պատմությանը: Այդ համատեքստում օրինակ է բերում Հովհ. Թումանյանին, որը դեռևս 1922 թ.-ին դեմ էր դուրս եկել «առանց գիտական լուրջ քննության, հրամանով հին ուղղագրությունը փոխելուն»: «Հովհ. Թումանյանը և նրա պես ուրիշ շատերը առաջարկում էին «ակադեմիական լրջությամբ գիտության վրա հիմնված» բարեփոխության միջոցով միայն հասնել այդ «ցանկալի միօրինակությանը», նշում է Հ.Բ.-ն: Մինչդեռ Գաբրիել Բասմաջյանը, անմիասնակամության մեղքը դնելով խորհրդային իշխանությունների և Մանուկ Աբեղյանի վրա, առանց գիտական լուրջ հիմնավորման, կոչ է անում վերադառնալ դասական ուղղագրության: Հիմնավորելով նախկին ուղղագրության բարեփոխումը և շեշտելով, որ այն նախապատրաստված էր առնվազն 200 տարով, և դարասկզբին արդեն նոր

լեզուն ու նրա ուղղագրությունը համարում էին պատմականորեն առաջացած իրողություն: Գ.Բ.-ն բերում է ուղղագրության, տառադարձության, հատուկ անունների օրինակներ, որոնցով ապացուցում է նման համակարգային փոփոխության անհնարինությունը: Նշելով, որ դասական ուղղագրությանը գրված վերջին 100-ամյակների ցանկացած գրքում առկա է ուղղագրության շփոթը, ուր խառնված են հինն ու նորը, միաժամանակ վկայակոչելով Գր. Աճառյանի, Գ. Սևակի և սրանց հետևողների կարծիքները, որոնք «փորձարկված ու վերահաստատված են արևելահայերենի նոր ուղղագրության ավելի քան 70-ամյա փորձաշրջանով», հողվածագիրը գտնում է, որ «լեզվի հնչյունային սկզբունքով ձևավորված ուղղագրությունը հետ տանելու փորձերը հակապատմական են, ոչ առաջադիմական»:

Տես նաև հավել.

**45.** Գրիգոր Ղափանցյանը՝ լեզվագետ-հայագետ (ծննդյան 110-ամյակի առթիվ) // Պատմա-բանաս. հանդես. -1997 - N 2. - էջ 33-40, նկ.

Григор Капанцян – языковед-арменовед (к 110-летию со дня рождения).

Ուրվագծելով հանրահայտ լեզվաբան-հայագետի կյանքի և գործունեության ամբողջական պատկերը և նշելով նրա ԳԳԱ-ի հիմնադիրներից մեկը լինելու իրողությունը՝ հողվածագիրը վերլուծաբար ներկայացնում է գիտնականի հին և նոր լեզուների ծագումնաբանությանն ու կառուցվածքին վերաբերող, գիտական և աղբյուրագիտական մեծ արժեք ներկայացնող մեծաթիվ հետազոտությունները: Այդ համատեքստում նշվում է, որ գիտնական-հայրենասերի հայերենի բարբառների, գրաբարի, ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի բնագավառներին վերաբերող աշխատանքները խորապես գիտական են և ունեն արդիականություն:

Գողվածագիրը միաժամանակ գտնում է, որ լեզվի ծագման, կառուցվածքի և զարգացման հարցերի տեսական քննության մեջ Գ. Ղափանցյանը տուրք է տվել Ն. Սառի լեզվի «նոր ուսմունքին» և, իր ժամանակի կողմից պարտադրված «միակ թուլատրելի փիլիսոփայության» մարքսիզմի դրույթներից ելնելով, պաշտպանել է տեսական մի քանի սխալ դրույթներ, մասնավորապես, լեզվի վերնաշենքայնության ու դասակարգայնացման, լեզուների խաչավորման վերաբերյալ: Գ. Ղափանցյանի «Հայոց լեզվի պատմություն. հին շրջան» աշխատության մասին խոսելով նշում է, որ հեղինակն «իր վերլուծության ստուգաբանություններով նվազեցնում է մեր լեզվի հնդեվրոպական տարրերը ... նրա հնդեվրոպական հիմնաշենքը, փոքրասիականի համեմատությամբ, համարելով երկրորդական լեզվանստվածք»:

Գողվածագիրը ծանաչված հայագետի օրինակով անհանդուրժելի է համարում այսօրվա «20-րդ դարի հայերենը 15-րդ դարի հայերենի ուղղագրության կանոններով գրել տալու հակապատմական քարոզչություն-հարկադրանքը»:

Տես նաև հավել.

**46.** Պավել Շարաբխանյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) // Ազգ. - 1997. - 29 մարտի. - էջ 6:

Павел Шаранханян (к 70-летию со дня рождения).

Հանգամանորեն ներկայացնելով լեզվաբան գրականագետի կյանքն ու գործունեությունը և խոր ափսոսանք հայտնելով նրա վաղաժամ մահվան համար (1995թ.) հողվածագիրը գունեղ նկարագրությամբ տալիս է «մանկավարժ-ուսուցչապետի», լայնախոհ և արդարամիտ մարդու նկարագիրը:

Տես նաև հավել.

47. Վտանգավոր խաղ մայրենիի հետ // Հայաստան. - 1997. - 15 ապր. - էջ 1-2:

Опасная игра с родным языком.

Հողվածագիրը տազնապում է ուղղագրական հարցերի շուրջ ծավալված բանավեճի համար, որի մասնակիցները երբեմն «այդ գործին ոչ գիտակ, հարցի լրջությունը չըմբռնող, նրա պատմությանը անտեղյակ, երբեմն էլ այն միտումնավոր շրջանցող անհատներ են»: Նա ցավով է նկատում, որ լայնորեն տարածվում է «ով ինչպես կարող է թող գրի» թողտվությունը, որ նաև ոմանք արևմտահայերեն և արևելահայերեն գրական լեզուներն անիրաժեշտաբար միավորելու խնդիրը կամ «մեկ ազգ՝ մեկ լեզու» կարգախոսը հռչակել են հայերենի ուղղագրության լուծման տեսական հիմք, և «փորձեր են արվում արևմտահայերենի չկանոնավորված ուղղագրությունը, «դասական» անվան տակ, պարտադրել արևելահայերենին»: Հակապատմական, հակագիտական համարելով նման միտումները, հողվածագիրը վկայակոչում է տարբեր ժամանակների մեծանուն մտավորականների (Թումանյան, Աճառյան, Ջախուկյան ևն) կարծիքները: Նա անդրադառնում է նաև Լեզվի տեսչության գործառույթներին, նկատելով, որ այն, փաստորեն, դարձել է «օրենսդիր մարմին», և այդ այն պարագայում, երբ իրականում «հանրապետությունում չկա որևէ տեսչություն, այլև նախարարություն, որ օրենսդիր լինի»: Որևէ տեղանուն փոխելն անգամ պահանջում է Ազգային ժողովի որոշում, «մինչդեռ լեզվական ոչ պակաս կարևոր հարցերի լուծման իրավունքը թողնված է այդ տեսչության մասնավորապես նրա՝ լեզվի ու լեզվաբանության հետ կապ չունեցող դեկավարության կամքին»:

48. «Ուղղագրությունը գիտություն է» // Ազգ. - 1997. - 18 հուլ. - էջ 4: "Орфография – наука".

Հողվածը գրվել է ի պաշտպանություն Լ. Հախվերդյանի «Մի շարք արժարծումներ» հողվածի (Ազգ, 1997, 21 հունիսի) և ի դեմս «Ազգի» խմբագրության: Հ.Բ.-ն նախ նկատում է, որ ուղղագրությանը վերաբերող բանավեճի (հին ու նոր) շրջանակում «Ազգի» վերջին երկու տարվա համարներում ցավոք տալվում են «անցյալի անվանի գիտնականների ու գործիչների հասցեին արված ստահող հայտարարություններ, չփաստարկված և վիրավորական բնութագրումներ»: Նման հողվածների վերաբերյալ թերթը երբեք չի հայտնել իր սեփական կարծիքը, մինչդեռ ակադ. Լ. Հախվերդյանի հիշյալ հրապարակումը հանկարծ արժանացել է թերթի «ծանոթագրության», որում խմբագրությունն իր անհամաձայնությունն է արտահայտում ակադեմիկոսի բնորոշումների, հատկապես «ժողովրդին դեպի կիսագրագիտություն տանող (աղետալի) ճանապարհի ջատագովներ» արտահայտության հանդեպ: Հողվածագիրը գտնում է, որ Լ. Հախվերդյանը ուղղագրության հարցերի քննության մեջ էլ իրեն դրսևորում է ոչ թե որպես կուսակցական քարոզիչ, այլ որպես «բարեխիղճ գիտնական»: Մինչդեռ



նրա ընդդիմախոսներին առաջնորդում է ամբոխավարությունը: Փաստորեն «համատարած գրագիտությունից դեպի համատարած կիսագրագիտության շրջան մտնելու վերաբերյալ մեր մեծանուն հայագետների վերոհիշյալ կանխատեսումները իրականանում են», եզրափակում է հոդվածագիրը:

Տես նաև հավել.

49. Խոսք երախտիքի // Երևանի համալս. - 1999. - 5 հոկտ. - էջ 6:

Слово заслыга.

Երևանի պետական համալսարանի 80-ամյակին նվիրված ուղերձ է, որտեղ, խոսելով հայության ուսումնագիտական համազգային կենտրոնի բեղմնավոր գործունեության մասին, հեղինակը հպարտությամբ նշում է, որ «համալսարանում ծաղկած բազմաճյուղ գիտահամակարգում... ավելի քան կես դար ծառայելով հայերենագիտությանը», իրեն բախտ է վիճակվել լինել ունկնդիր համալսարանի հիմնադիր դասախոսների ու նրանց աշակերտած ուրիշ մեծությունների, լինել ընկեր և ժամանակակից համբավավոր ու հռչակավոր շատ հայագետների, երջանկություն ունենալ մոտիկից շփվելու «համալսարանական կրթություն ստացած և հայ գրականությանը... փառք բերած» գրողների հետ: Գ.Բ.-ն նշում է, որ սերունդների համար «համալսարանը եղել է նաև անկախության ու ազատության, ճշմարտության ու արդարության պայքարի ամբիոն, ազգային մտավոր ու հոգևոր արժեքները համամարդկայինի բարձրացնելու հոգեբանության դաստիարակիչ լսարան»:

50. Պատմական և արդիական լիակատարությամբ : [Առաջաբ. Զր. Աճառյանի «Պատմություն հայոց գաղթականության» գրքի] // Հայաստան. - 2002. - 21 հունիսի. - էջ 3:

Историческою и современной полнотою : [Предисловие книги "История армянского беженства" Р. Ачаряна].

Նույնը տես 22, նաև հավել.

51. Վազգեն Գևորգյանը՝ հավերժի ուղեկից // Գրակ. թերթ. - 2002. - 14 հունիսի. - էջ 11:

Вазген Геворкян – спутник вечности.

Գրաբարագետ, բանաստեղծ, թարգմանիչ Վ. Գևորգյանին նվիրված հուշահանդեսում ասված հիշատակի խոսք է, որտեղ հատկապես ներկայացվում է նրա՝ որպես բանաստեղծ-թարգմանչի բեղմնավոր գործունեությունը: Մասնավորապես մեծ գնահատական են տրվում Նարեկացու «Մատյանի», ապա «Տաղերի» թարգմանություններին, շեշտվում, որ դրանցով Վ. Գևորգյանն ինքն էլ դառնում է հանճարի մշտական ուղեկից:

52. Ալեքսան Կիրակոսյանի՝ «Մայրամուտի շենին» հուշագրությունը՝ որպես համազգային միաբանության շեփոր («Մեր անմիաբանությունը մեր անենամեծ թշնամին է») // Ազգ. - 2003. - 7 մայ. - էջ Ա-Դ. - (Խորհրդածություններ):

Мемуары Алексана Куракосяна "На пороге заката" как выраженные общенационального единодушия.

Մեծածավալ գրախոսություն է, որտեղ Ալ. Կիրակոսյանի հուշագրությունը բնորոշվում է որպես ժամանակի թելադրանքով գրված «հայոց պատմության հազարամյակներից փոխանցվող և սրբագրված կանչ»: «Սա մի ողջ ժողովրդի կենսագրություն-պատում է», որտեղ 21-րդ դարի «ոչ միայն պատմականորեն կրկնվող, այլև սաստկացող տագնապները» նկարագրվում են հեղինակի «օգնականների» բանաստեղծների, արվեստագետների և «մարդկության հասարակության պատմությունը բանաձևող կորիֆեյների» հազարամյակների փորձաքննությամբ հաստատված վերլուծությունների ու կոախունների միջոցով: Հանգամանորեն ներկայացնելով հուշագրության թեմատիկ բովանդակությունը, վերլուծելով պատմական իրադարձությունների տարբեր ոլորտներում հեղինակի որպես պետական գործչի ունեցած տեսադաշտը և քննելով թևավոր խոսքի արժեք ունեցող նրա լեզվաոճական բանաձևումները՝ գրախոսն այն համարում է շնորհակալ գործ յուրաքանչյուր հայի համար, քանի որ ունի այսօրվան ու վաղվան ծառայելու իրական արժեք:

Տես նաև հավել.

53. Պարզաբանումներ՝ «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» հին ու նոր որոշումների վերաբերյալ // Գիտելիք. - 2003. - N7. - էջ 1-12:

Разъяснения о старых и новых решениях "Об употреблению прописных букв в сложных собственных именах".

Նախ խոսվում է նախկին 1963 թ. տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշման մասին, որը չնայած կայացել էր չորս շատ հեղինակավոր նախագծերի երկարատև քննարկումից հետո, սակայն 40 տարի շարունակ դրա շուրջ բանավեճերը և մասնակի բարեփոխումները չեն դադարել: Պատճառն այն է, գտնում է հողվածագիրը, որ իրականում «մեծատառը պարտադիր երևույթ չէ, այլ պայմանական միջոց, գրության տվյալ համակարգի պատմական զարգացման հետևանք»: Հատուկ անունների մեծատառով գրությունն ընդգծում է դրանք որպես մտքի հիմնական առարկաներ, հեշտացնում է անձանոթ անվան տարբերակումը, անվանացանկերով տեղեկություններ գտնելը ևն: Նոր ժամանակներում, կապված կյանքի զարգացման հետ, մեծատառերի գործածությունը մեծ ծավալներ է ընդունել և դրանց՝ գրավոր խոսքը հստակեցնելու գործառույթը կորել: Նոր՝ 2003 թ. մարտի 8-ի՝ լեզվի տեսչության ընդունած որոշման նպատակը բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը հեշտացնելն է, գրության մեջ միօրինակություն սահմանելը: Մեկնաբանելով որոշման մեջ առկա նոր կանոնները և հանգամանորեն պարզաբանելով դրանցում առկա բանավիճալի կետերը՝ հողվածագիրն անդրադառնում է նաև 76-րդի Գարբիելյանի սույն որոշման կապակցությամբ հրապարակած նյութին («Հայաստանի Հանրապետություն»), պատասխանում դրանում առաջ քաշված հարցադրումներին:

54. Ալեքսան Կիրակոսյանը՝ 85 տարեկան // Ազգ. - 2003. - 27 օգոստ. - էջ 6:

Александру Киракосяну 85 лет.

Տես նաև 52

55. Պարզաբանումներ՝ «Տողադարձի մասին» որոշման վերաբերյալ // Գիտելիք. - 2003. - N 9. - էջ 5-12:

Пояснения к постановлению "О переносе слова".

Հողվածում քննվում է բանավիճային թեմա դարձած տողադարձի, մանավանդ «ը» գաղտնավանկով վանկատման հարցը: Հողվածագիրը գտնում է, որ բանավիճողների անգլերենով որոշ գրքերի կամ համակարգչային շարվածքի յուրահատկությունները մատնացույց անելը տեղին չէ, քանի որ մեր բառերն ավելի երկար են և համակարգչային շարվածքն ու թղթի խնայողությունն իրենք են պահանջում տողադարձ: Շատերը չեն հետևում պահանջվող կանոններին, չեն գրում նաև գաղտնավանկի «ը» տառը: Մինչդեռ սխալ տողադարձը մույնիսկ գրագետ մարդկանց կարող է շփոթեցնել և արտասանական աղավաղումների աղբյուր դառնալ:

56. Գյուլի օրինակելի պատմություն : [Գրախոսություն] // Հայաստ. Հանրապ. - 2004 - 30 սեպտ., էջ 5. - էջ 5:

Образцовая история деревни [рец.].

Տես 24

57. Գեղամ Վարդանյանի «Վայրի Խաղող»-ը : [Գրախոս.] // Հայաստ. Հանրապ. - 2005. - 9 հունիսի. - էջ 5. - Գրախոս. գիրք՝ Վարդանյան Գ. Վայրի Խաղող: Բանաստեղծություններ. - Ե.: Զանգակ-97, 2002. - 79 էջ:

"Дукии виноград" Гегам Вартаняна.

Նույնը տես՝

Իսկական բանաստեղծ ծնվում են // Օրինաց երկիր. - 2006. - 10-16 մարտի, էջ 10:

Истинным поэтом рождаются.

Գրախոսը բարձր է գնահատում Գ. Վարդանյանի բանաստեղծական արվեստը՝ շեշտը դնելով հատկապես ժողովրդին հուզելու, հրատապ հարցեր շոշափելու և հարցադրումներ առաջադրելու կարողության վրա: Բանաստեղծի խոսքը անկեղծ է, ճշմարտացի, գտնում է նա, մանավանդ որ «նրա բանաստեղծություններից շատերը նաև արցախյան ազատագրական պատերազմի խրամատներում գրված երկեր են»:

58. Հայերենի խոսքի մասերի տեսական հարցերի քննությունը Ա. Աբրահամյանի աշխատություններում // Հայագիտ. հանդես / Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ. - 2008. - N 2-3 (Հավել.). - էջ 36- 41:

Исследование теоретических вопросов частей речи армянского языка в трудах А. Абрамяна.

Հողվածը պրոֆ. Ա. Աբրահամյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութերից է, որտեղ վերլուծաբար ներկայացվում և արժևորվում է հայագետի՝ հայերենի խոսքի մասերի տեսությանը վերաբերող գիտական ողջ ժառանգությունը (աշխատություն, մենագրություն, հողված են):

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ԲԱՆԱԿԵԾԵՐ  
ИНТЕРВЬЮ, ПОЛЕМИКА

59. Գրողը և ժամանակը : [Կլոր սեղանի շուրջ / Գ.Բ. և ուրիշ. (Պ. Զեյթունցյան, Գ. Էմին, Գ. Էդոյան, Ալ. Թովչյան)] // Գրակ. թերթ. - 1980. - 22 օգոստ.

Писатель и время : [Вокруг круглого стола].

Բանավեճի նյութը սովետահայ գրականության զարգացման ժամանակակից փուլն է՝ «ինչպե՞ս է գրականությունն արտահայտում մեր ժամանակը, նրա ամենից էական գծերը և մեր ժողովրդի այսօրվա ազգային կեցությունը» հարցադրումով: Գ.Բ.-ի կարծիքով հայ քաղաքակիրթ մարդը զեղարվեստական երկերում առայժմ չի կարողանում իրեն լիարժեքորեն դրսևորել: Մեր արձակուրդեռևս իշխում են մարդուն ներկայացնելու պատրաստի սխեմաները: Մինչդեռ գիտության, տեխնիկայի առաջընթացը կյանքում արտահայտվում է իր և՛ դրական, և՛ բացասական կողմերով, որն էլ պետք է նկատի գրականությունը:

Տես նաև հավել.

60. Միասնական ուղղագրություն. տեսակետներ, բախումներ, լուծումներ : [Կլոր սեղանի շուրջ / վարող՝ Ժիրայր Ավետիսյան; Տպագ. պատրաստ. Գայանե Անանյան] // Գարուն. - 1997. - N 8. - էջ 34-50:

Единое правописание: взгляды, конфликты, решения : [Вокруг круглого стола / вел Ж. Аветисян; подгом. Г. Ананян].

«Մեկ ազգ, մեկ լեզու, մեկ ուղղագրություն» կարգախոսի կամ հայերենի ուղղագրության միասնականության ուղիների շուրջ բանավեճ է, որին մասնակցում են նոր կամ հին ուղղագրության կողմնակից գիտնականներ, գրողներ, լեզվի տեսչության ներկայացուցիչներ (Գ. Ջահուկյան, Էդ. Ջրբաշյան, Ս. Աբրահամյան, Ս. Կապուտիկյան, Գ. Բարսեղյան, Ա. Մարության և ուրիշ.): Գ.Բ.-ն իր խոսքում նախ նշում է, որ ուղղագրության շուրջ վեճերը նորություն չեն, դրանք ունեն ավելի քան երկուհարյուրամյա պատմություն: Դիմելով «դասական» ուղղագրությանն անցնելու կողմնակիցներին՝ նա նշում է, որ նախ պետք է ճշտել այդ տերմինը: Իրականում «դասական ուղղագրությունը յուրահատուկ է դասական, այսինքն՝ 5-րդ դարի հայերենին» և ոչ մի առնչություն չունի մերօրյա պահանջների հետ: Եթե 5-րդ դարում հայերենն ուներ միասնական ուղղագրություն, ապա 11-րդ դարից այն հետզհետե դարձել է հնչյունական: Նորը հնով փոխարինելու կոչերը համարելով հակապատմական, հետընթաց գործողություն Գ.Բ.-ն ուղղագրական միասնության ճանապարհը տեսնում է հին ու նորի մերձեցման մեջ:

Տես նաև հավել.

61. Բա սա պետություն՞ն է : [Հարցազրույց / վարողներ՝ Անի Եսայան, Դովակ Դովակիմյան] // Երկրապահ. - 2001. - 31 հուլ. - էջ 8, նկ.

Разве это государство? : [Интервью / вел: Ани Есаян, Овак Овакмян].

Գ.Բ.-ն խոսում է երկրի քաղաքական վիճակից, հեռուստատեսությունից, արտագաղթից, «կեղծ և ճիշտ» մուրացկաններից: Անդրադառնալով ուղղագրության

շուրջ ծավալված բանավեճին տարակուսում է, որ լեզվի հարցը փորձում են լուծել ոչ թե լեզվաբանները, այլ քաղաքական գործիչները և, շահարկելով այն, լեզվաքաղաքականությունը վերածում են միջկուսակցական կոիվների: Լեզվաքաղաքականությունն ամենալուրջ ոլորտներից է, և լեզուն չպետք է օգտագործվի սուտ քարոզչության նպատակով: Նաև մերժելի է, որ քարոզչության մեջ ով ինչ լեզվով ուզում խոսում է: Պաշտոնական միջավայրում մանավանդ, անմիջապես, ինչպես համակարգիչը, խոսողը պետք է անջատի իր ազատ խոսքի կոճակը և միացնի «ինքնահսկողությունը», գտնում է Գ.Բ.-ն: Քննադատելով հեռուստատեսային եթերի լեզուն, դրա բացասական ազդեցությունը հայերենի անադարտության վրա՝ նա հիշեցնում է, որ լեզուն դպրոցում են սովորում, ոչ թե եթերով, և ցավով ավելացնում է, որ «դպրոցը քանդեցին»: Ըստ նրա՝ այս ճգնաժամից դուրս գալու ճանապարհն է՝ «պետության կայացում, օրենք, օրինակաւություն, օրենքների հետևողական իրագործում և օրինազանցների խստագույն պատժում»:

Տես նաև հավել.

**62. Աննախադեպ բառարան՝ մեր իրականության մեջ :** [Բարցազրույց / վարեց Անահիտ Գևորգյանը] // Ազգ. - 2002. - 15 մարտի. - էջ 6:

Беспрецедентное явление-словарь в нашей реальности : [Интервью / вела Анаит Геворкян].

Գարցազրույցը «Հայաստանի և հարակից շրջանների տեղամունների բառարանի» մասին է, որտեղ ներկայացվում են դեռևս 1952 թ.-ից սկսած աշխատանքները՝ իրենց ողջ ծավալով ու բովանդակությամբ (136 հազար տեղանվան հետ կապված նյութերի հավաքում գիտարշավների և տարաբնույթ այլ աղբյուրների միջոցով, դրանց ճշտում, համակարգում, քարտազրում և այլն): Բառարանի հսկայական նյութը քարտազրված է եղել մինչև 1970-ական թթ., ասում է Գ.Բ.-ն, աղբյուր են դարձել նույնիսկ լրագրային նյութերը: Եթե փորձ արվեր կազմել օգտագործված գրականության ցանկ, ապա այն կզբաղեցներ մի քանի մամուլ: Եղել են բազմաթիվ դժվարություններ: Դեղինակները, ցավոք, Արևմտյան Հայաստան գնալու թույլտվություն չունեին, վերջին 10 տարիներին նույնիսկ Ղարաբաղ գնալն էր արգելված: Բացի դրանից, բառարանագիրների հավաքած տվյալներն ամփոփված էին ՀՍՍՀ և նրա վարչատարածքային բաժանումների շրջանակում, և հետագա փոփոխությունները հարկադրաբար տեղ են գտել լրացուցիչ հատորում: «Շտապում էինք, որովհետև գիտեինք, որ մարդու կյանքը այսպիսի գործեր ստեղծելու համար բավական չէ», ասում է բառարանի համահեղինակը և, ցավով հիշելով իր գործընկերների բացակայությունը, ավելացնում. «Թեև բառարանն ավարտված է, սակայն հայ տեղանվանագիտական բառարանագրությունը ավարտ չունի»: Մեծ ծախսեր պահանջելու պատճառով բառարանն իրականում ընդգրկել է իրենց հավաքած նյութի մի փոքր մասը միայն, վերջին 3 հատորների իրատարակման մեջ իր երախտիքն է ունեցել «Գյուլբենկյան» հիմնադրամը: Այժմ էլ իրենց ստեղծած քարտային-կաբիները՝ հայ տեղանվանագիտության շտեմարանը, շարունակում է մշակել մնացած նյութերը, որոնք հիմք են դառնալու հանրագիտական հետագա բառարանների համար: Վերջում, խոսելով նաև իր հեղինակած «Հայերեն ուղղագրակա-ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» մասին, նա նշում է, որ այն կազմելիս ինքը եղել է երիտասարդ, և աշխատանքի

ընթացքում համոզվել է, որ տերմինաբանական այդ ժանր գործընթացը հայերենի զարգացման մի առանձին ասպարեզ է, և այսօր, եթե այդ բառարանը վերահրատարակվի, շուրջ 50 հազար բառով կավելանա, քանի որ կան բազմաթիվ հայացված, փոխառված կամ ստեղծած նոր բառեր:

Տես նաև հավել.

**63.** Գրական լեզու և բարբառներ : [Յարցագրույց] // Գրակ. թերթ. - 2002. - 18 հունվ. - էջ 4, նկ.

Литературный язык и диалекты : [Интервью].

Ի՞նչն է խանգարում գրական լեզվի զարգացմանը, ինչու՞ է հայը դժվարանում գրականով խոսել, ի՞նչ հարաբերության մեջ են գրական լեզուն և բարբառները: Ի պատասխան դրանց Յ.Բ. գտնում է, որ չնայած այսօր հայերենի իրավական տեսակետից զարգացման նպաստավոր պատմաշրջան է, սակայն վերջին 10 տարիների համար ցավով պիտի արձանագրել բավականին տեսանելի հետադիմություն: Գրական լեզուն դժվարություններ հաղթահարելու ճանապարհին է: Խանգարող հանգամանքներից են խորհրդային և այսօրվա դպրոցի կրթական որակի տարբերությունը և բարբառախոսությունը: Մամուլն ու գրականությունն այլևս այն դերը չունեն, ինչ նախկինում, քանի որ ընթերցող չկա: Թեև պետք չէ հուսահատություն տարածել, սակայն կա վտանգ բարբառախոս դառնալու: «Հիմա այդ բարբառախոսներից շատերը որևէ կոնկրետ բարբառի կրող չեն: Նրանք ժարգոնների, փողոցային խառնաշփոթ լեզվի կրողներ են»: Եթե՛րում դատապարտելի է բարբառը, խոսակցականը, արդյունքում շուտով մեր գրականը կնոռացվի: Նույնիսկ Սևակին էր տանջում, որ այսօրվա արվեստն ու գրականությունը գավառական են, հիշեցնում է Յ.Բ.-ն և գտնում, որ բարբառները պետք է «փայփայել», բայց ոչ գրական լեզուն երկրորդ պլան մղելու միտումով, քանի որ դրանով երկուսն էլ խորապես կտուժեն:

Տես նաև հավել.

**64.** Հայ ժողովրդի առասպելաբանության կենտրոնը չպետք է մնա օտարի ձեռքում : [Յարցագրույց] // Հայ գիմվոր. - 2002. - 13-20 ապր. - էջ 7, նկ.

Центр армянского мифологии не должен оставаться в чужих руках : [Интервью].

Յ.Բ.-ն բարձր է գնահատում այսօրվա իրական անկախությունն ու ազատությունը, պետականությունը, մարտունակ ու կայացած բանակը և, մասնավորապես, հայերենի՝ պետական լեզու դառնալը: Միաժամանակ գտնում է, որ դժվարը այդ նվաճումները պահպանելն է: Ստորելով Այգային բանակի մասին լեզվաբանն իր 81-ամյա փորձով հանգել է այն ցավոտ իրողությանը, որ «երկրազնդի վրա ամենաթանկ, ամենաբարձր գին ունեցող ապրանքը զենքն է», և «երկիրը պետք է պաշտպանել կյանքը նվիրաբերելով»: Խոսելով Արցախյան շարժման մասին նա իրեն դատում է այն երջանիկների շարքին, ովքեր բախտ են ունեցել տեսնել մեր ազգի ազգային-ազատագրական պայքարը, որով լուծվեց հայ ժողովրդի հազարամյակների երազանքը: Նա նաև համոզված է, որ Արցախին կիցջորդի նաև Նոյյան տապանն իր վրա վերցրած լեռան ազատագրումը: Խոսելով Ազգային բանակում հայերենի դրվածքի մասին լեզվաբանը

գտնում է, որ ռազմական գրականությունը լեզվաբանորեն անմշակ է, և հույժ կարևորվում է նորոթյա ռազմական բառարանի ստեղծումը:

Տես նաև հավել.

65. Չարամիտ զագրախոսություն : [ / Դնիեղ.՝ Ն. Ադալյան, Ա. Այվազյան և ուրիշ.]

// Գրակ. թերթ. - 2004. - 30 ապր. - էջ 3:

// Առավոտ. - 2004 - 21 մայ. - էջ 6:

Злоумышленное сквернословие [ / Соавт.: Н. Адалян, А. Айвазян и др.].

Գրվել է «Իրավունք» թերթի «Շետաքնություն» հավելվածի (ս/թ NN 5-6) մի հրապարակման (հեղ.՝ Սոնա Տիգրանյան) առիթով, որը 5 տարի առաջ տպագրված է եղել Լոս-Անջելեսի «Ասպարեզ» թերթում: Հայ 11 մտավորականներից կազմված հեղինակային խումբը դատապարտում է հողվածագրին Վարդես Դետրոյանի ամերիկաբնակ տիկնոջը ամուսնու սպանության մեջ մեղավորներ փնտրելիս Գրանտ Մաթևոսյանի հիշատակին «ցեխ չպրտելու» փորձի համար:

66. Ես էլ ուսանող եմ եղել : [Հարցազրույց / վարեց Գ. Ալավերդյանը] // Խարիսխ. - 2004. - մայ. - էջ 3, գուն. նկ.

И я был студентом : [Интервью / вела Г. Алавердян].

Հ.Բ.-ն խոսում է իր ուսանողական տարիներից, որոնք առաջին հերթին հիշվում են որպես պատերազմի արհավիրք, հարազատ ու սիրելի մարդկանց կորուստ և հետո միայն անձնական կյանք: Վերհիշում է իր պատերազմական գործունեությունը՝ Բաքվում լեյտենանտի կոչում ստանալը, Նավթուղու ռազմական բարձրագույն դպրոցում սովորելը չավարտած վաշտի հրամանատարի կոչումով Դրիմի, Կերչի ռազմաճակատներում կռվելը, երեք անգամ վիրավորվելը ևն: Անդրադառնում է նաև իր դասախոսական գործունեությանը, որն սկսել է Երևանի պետական համալսարանից:

Տես նաև հավել.

67. «Կորուստները կարող են անդառնալի լինել», եթե միջոցներ չձեռնարկենք լեզվապահպանության և լեզվաշինության համար : [Հարցազրույց] // Հայաստ. Հանրապ. - 2010. - 10 մարտի. - էջ 5:

“Потери могут быть безвозвратными”, если не принимать меры для сохранения и строения языка : [Интервью].

Նույնը տե՛ս

«Հայոց լեզուն մեր ազգային ինքնության պահպանման ամենազորեղ կռվանն ու միջոցն է» : [Հարցազրույց / վարող՝ Լիլիթ Կյուրեղյան] // Իրավունքը de facto. - 2010. - 16-18 մարտի. - էջ 10:

“Армянский язык самый сильный аргумент и средство сохранения национальной самобытности” : [Интервью / вела Лилит Кюрегян].

Ձանգվածային լրատվության միջոցներով այսօրվա լեզվական զարգացումների հետևող բազմավաստակ գիտնականն ու մանկավարժը [Հ.Բ.-ն] մտահոգված է ներկայի լեզվավիճակով և դրա վատթարացումը կապում է օ-

րենսդիր մարմնի՝ տերմինաբանական կոմիտեի լուծարման իրողության հետ: Այսօր Հայաստանում լեզվաշինությունն առաջ է գնում տարերայնորեն, առանց հատուկ պետական ծրագրի և քաղաքականության, գտնում է նա: Լեզվի տեսչությունը չունի բավարար ֆինանսավորում, չունի ո՛չ գիտական, ո՛չ մասնագիտական, ո՛չ գործառույթային և ո՛չ իրավական հնարավորություններ: Նա գտնում է, որ ելքը հստակ ու հասցեական իրավասություններ ունեցող և լեզվաքաղաքականությանն ուղղված գործունեությամբ մարմնի ստեղծումն է:

Տես նաև հավել.

## ԽՄԲԱԳՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ РЕДАКТИРОВАННЫЕ ИМ ТРУДЫ

68. Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության նախագծեր / ՀՍՍՌ Մինսոպետին կից տերմինաբ. կոմիտե. - Ե.: Հայպետուսմանկիրատ., 1957. - 18 էջ:

Проекты об употреблении прописных букв в сложных собственных именах.

69. Մուլչնիկ Ի.Պ., Ռեֆորմատսկի Ա.Ա. Հայերենագիտական առարկաների ծրագրեր: Ծրագիր լեզվաբանության ներածության / Թարգմ.՝ Գ. Ավագյան; Եր. պետ. հեռ. մանկ. ին-տ, 1957. - 47 էջ:

Мучник И.П., Реформатский А.А. Программы арменоведческих предметов преподавания. Программа введения в языкознание.

70. Ասատրյան Մ.Ե. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր: Գ. 1: Ներածություն, խոսքի մասեր, գոյական անուն, կապ / [Զմխմբ.] Ռ.Ա. Իշխանյան; ԵՊՀ. - Ե.: Եր. համալս. հրատ. 1970. - 392 էջ. - Գրկ. ցանկ՝ էջ 386-387:

Асатрян М.Е. Вопросы морфологии современного армянского языка. Т.1. Введение, части речи, существительное, связка.

71. Երևանի պետական համալսարան: (Հոդվածների ժողովածու: 50-ամյակի առթիվ) / [Զմխմբ.] Գ.Ի. Ադամյան և ուրիշ. - Ե.: Եր. համալս. հրատ., 1970. - 210 էջ:

Ереванский государственный университет. (Сборник статей. К 50-летию).

72. Հայերենագիտությունը 60 տարում : [ժող.] / ԵՊՀ; Ներած.՝ Է.Բ. Ադայանի; Գրախոս.՝ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ին-տ. - Ե.: Եր. համալս. հրատ., 1981. - 200 էջ:

Арменистика за 60 лет : [сб. статей].



**73. Սկրուչյան Է.Լ.** Հայոց լեզվի պատմության գործնական պարապմունքների ձեռնարկ / ԵՊՀ. - Ե., Եր. համալս. հրատ., 1985. - 287 էջ; Հմբուգ. էջ 286:

*Мкртчян Э.А.* Пособие для практических занятий по истории армянского языка.

**74. Արրահամյան Ս.Գ.** Հայերենի կետադրություն: Ուս. ձեռնարկ. - Ե.: Հակոբ Մեղապարտ, 1992. - 42 էջ:

Ե.: Լույս, 1999, 2002, 2004. - 74 էջ:

*Абраамян С.Г.* Пунктуация армянского языка. Уч. пособие.

**75. Մեյրիխանյան Փ.Գ.** Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության) = Dictionary of Biblical and Armenian Saint Names: (According to V-XX Century Armenian Poetry) / ԵՊՀ: Հ. լեզվի ամբիոն. - Ե., Եր. համալս. հրատ. - 2001. - 576 (XLII+532) էջ:

*Мејтиханян П.Г.* Словарь Библии и имен армянских святых (на основе армянской поэзии V-XX вв).

**76. Աճառյան Հ.** Հայ գաղթականության պատմություն = The History of Armenian Diaspora / Տեքստը պատրաստ. Բ. Աճառյան; [Հմբուգ.] Հ. Ավետիսյան; Հր. Աճառյանի անվ. համալս. - Եր.: Ձանգակ-97, 2002. - 766 էջ, [12]թ. նկ.

*Ачарян Р.* История армянского бегенства.

## Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

О Г. Х. БАРСЕГЯНЕ

### ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ РЕЦЕНЗИИ НАУЧНЫХ ТРУДОВ

77. Օհանյան Հ. «Հատուկ անուն» : [«Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ)»] // Սով. մանկավարժ. - 1965. - N 8. - էջ 85-89.

Оганян А. "Собственное имя" (теоретическо-описательный очерк).

Գնահատելով հատուկ անունների ուսումնասիրության գործնական արժեքը հատկապես տառադարձության, ուղղագրության և ընդհանրապես մեծատառերի գործածության յուրացման ու ամրապնդման գործընթացում գրախոսը աշխատանքի կարևոր արժանիքներից մեկն է համարում նաև Տերմինաբանական կոմիտեի տարբեր տարիների ընդունած որոշումներն ի մի բերելը: Նա նաև բարձր է գնահատում հեղինակի նուրբ դիտողականությունը, լեզվաբանական անհրաժեշտ պատրաստվածությունը, լեզվական երևույթները ճշտորեն նկատելու, արժեքավորելու և դասդասելու հմտությունը, ճիշտ եզրահանգումներ անելու կարողությունը:

78. Իշխանյան Ռ. Աշխատություն Աբեղյանի լեզվաբանական տեսության մասին : [«Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները»] // Երեկոյան Երևան. - 1968. - 18 հունիսի. - էջ 3 :

Ишханян Р. Исследование о лингвистической теории Абегяна : [“Теория пяти падежей Манука Абегяна и ее ранняя и новая критика”].

Գրախոսը նախ հիշեցնում է, որ հայ լեզվաբանության մեջ ամենամեծ վեճերը եղել են ժամանակակից հայերենի հոլովային համակարգի շուրջ, ըստ որոնց՝ տարիներ առաջ ձևավորվել էր քերականական 2 տեսակետ (5 հոլովի և 7 հոլովի): Ապա, անդրադառնալով Հ.Բ.-ի աշխատությանը, նշում է, որ այն լուսաբանում է շուրջ 60-ամյա այդ բանավեճը և, մասնավորապես, դրա Աբեղյան-Մալխասյանց շրջանը: Գրախոսը նկատում է, որ հեղինակին հաջողվել է գիտական խորությամբ ու լեզվական փաստերով ներկայացնել ժամանակակից հայերենի քերականական պատկերը և համոզիչ դարձնել Աբեղյանի տեսության վերականգնման անհրաժեշտությունը:

Տես նաև հավել.

79. Աղպաշեան Պարոյր: Իր տեսակին մեջ եզակի բառարանի մը հրատարակութեան առթիւ : [«Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»] // Շիրակ (Բեյրութ). - 1974. - N 6. - էջ 54-59:

*Агбашьян Паруыр.* По поводу публикации единственного в своем роде словаря : [“Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь”].

*Եւույնը տես*

Յովհաննէս Բարսեղեան: «Հայերէն ուղղագրական-ուղղախօսական տերմինաբանական բառարան» (Ե., 1973թ) // Աղպաշեան Պ. Արևմտահայ գրողներու լեզուամտածողութիւնն ու բառապաշարային շերտավորումները / Խմբ. Ե. Քասունի. - Պեյրուք, 2006. - էջ 142-148:

Ованес Барсегян. “Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь”.

Գրախոսը բառարանագրության, բառարանագիտության պատմության և բառարանների գիտական ուղղվածության շրջանակներում անդրադառնում է Գ.Բ.-ի «երկարամեայ, քրտնաջան, լուրջ ու գիտական մակարդակով աշխատութեան մը արդիւնք» գրքին և այն բնորոշում որպէս 40 հազար օրինակով հրատարակված և շուտ սպառված «լայնապարփակ, ծաւալուն ու հաստափոր բառարան», որը «ինքնին պերճախօս երեւոյթ է», քանի որ նմանօրինակ բառարանը հրատապ անհրաժեշտություն էր արդի հայերենի համար:

*Տես նաև հավել.*

80. Մարգարյան Ալ. Դիտողություններ մի բառարանի վերաբերյալ : [«Հայերեն ուղղագրական-ուղղախօսական, տերմինաբանական բառարան»] // Սով. գրակ. - 1974. - N 12. - էջ 125-129:

*Маркарян Ал.* Замечания по поводу одного словаря : [“Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь”].

Գրախոսությունը ծայրահեղ քննադատական է: Չի նշվում բառարանի և ոչ մի արժանիք: Գրախոսը նախ գտնում է, որ բառարանի հեղինակը փորձել է հետևել ռուս լեզվաբանների օրինակին, սակայն եթե նրանց նույնատիպ բառարանը հենված է իր նախորդների և ռուս ակադեմիական բառարանային բնագորային վկայություններով հարուստ քարտարանի գիտական հենքի վրա և ունի արդեն 13 հրատարակություն, ապա գրախոսվող բառարանը զուրկ է նման խորքային հիմքից, և Հ. Բարսեղյանն օգտվել է ընդամենը մի քանի բառարաններից (հիմնականում Ստ. Սալխասյանցի): Քննադատը համաձայն չէ բառարանի առաջաբանում հեղինակի կողմից որոշ բառեր «հնացած և բարբառային» համարելու և դրանք որպէս նման բառահոդվածներ ներկայացնելու սկզբունքին: Գրախոսն ի վերջո գալիս է եզրահանգման, որ աշխատանքը չի ծառայում իր նպատակներին ուղղագրական, ուղղախօսական, տերմինաբանական գործառույթներին, և «այն, դժբախտաբար, բառարանագրական ցածր մակարդակով կազմված, գիտական կուռ սկզբունքից զուրկ բառարան է»:

81. Իշխանյան Ռ., Սուքիասյան Ա. Նոր ուսումնասիրություն խոսքի մասերի վերաբերյալ : [«Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները»] // Սով. մանկավարժ. - 1977. - N 9. - էջ 93-95:

Ишханян Р., Сукиасян А. Новое исследование о частях речи : ["Опыт классификации поддиалектов и говоров Араратского диалекта"].

Աշխատանքը զնահատվում է որպես հայ լեզվաբանության մեջ խոսքի մասերի տարբերակմանը վերաբերող համադիր ուսումնասիրություն, որտեղ մի կողմից ներկայացվում են դրանց խմբավորման եղանակները, մյուս կողմից քննվում դրանց տարբերակման վերաբերյալ հրապարակված տեսական աշխատությունները: Ընդգրկելով 5-րդ դարի վերջերից մինչև մեր ժամանակաշրջանի հայ քերականագետների ըմբռումները՝ աշխատանքում գիտականորեն քննվում են ինչպես հայ հին և միջնադարյան քերականություններում եղած տեսակետները (ներառյալ Ա. Այտընյանի «Քննական քերականության» հակիրճ և համոզիչ մեկնությունը), այնպես էլ նոր և նորագույն շրջանը՝ արեղյանական համակարգը մասնակի կամ ամբողջությամբ մերժող տեսություններով: Չնայած գրախոսները համաձայն չեն հեղինակի՝ հակաարեղյանականներին մտոական համարելու տեսակետին, սակայն բարձր են գնահատում նրա՝ «առանց պիտակավորումների, միայն փաստերի հիման վրա և տրամաբանական ապացույցների օգնությամբ բանավիճելու հիանալի ծիրքը»:

Տես նաև հավել.

82. Գնահատում են մասնագետները (Ռ. Իշխանյան, Զ. Բարթիկյան, Ա. Մադոյան, Ա. Սուքիասյան) : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ.1»] // Գրքերի աշխարհ. - 1986. - 21 դեկտ. - էջ 2, նկ.

Оценивают специалисты (Р. Ишханян, Р. Бартикян, А. Мадоян, А. Сукиасян) : ["Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1"].

Հայագիտության համար մեծ կարևորություն ունեցող Տեղանունների բառարանը զնահատվում է որպես հայ և համաշխարհային բառարանագրությանը պատիվ բերող մի անմախաղեպ երևույթ, որի հեղինակների անունները կհավերժանան հայ բառարանագրության մյուս երախտավորների շարքում:

Տես նաև հավել.

83 Գովհաննիսյան Պ.Գ. Կոթողային աշխատություն : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ.1»] // Երևանի համալս. - 1987. - N1. - էջ 18-20:

Ованесян П. Монументальный труд : ["Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1"].

Գրախոսը գտնում է, որ նշված «բառարանն իր վիթխարի ծավալով, իր ընդգրկված լայն ծրագրով ուշագրավ երևույթ է հայ մշակույթի պատմության մեջ և իր տեսակի մեջ առաջին փորձն է՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանուններն ի մի բերելու, դասակարգելու և գիտականորեն ուսումնասիրելու ուղղությամբ»: Բառարանի հիմքը աշխատախմբի շուրջ քսանամյա տքնաջան աշխատանքով ստեղծած և ավելի քան 100 հազար տեղանուն պարունակող քարտարանն է, որի մեջ օգտագործվել են տարբեր ազգությունների պատմա-

կան տարբեր ժամանակաշրջանների բազմաթիվ սկզբնաղբյուրներ, պարբերական մամուլ, արխիվային և ծեռագիր նյութեր, տեղեկատու գրականություն, հին ու նոր քարտեզներ: Այն ևս գիտական մեծ արժեք ունի և կդառնա հայագիտական փոքր, բայց կարևոր կենտրոն: Բառարանի ստեղծման նախնական փուլը (1952-1965 թթ.) սկսվել է հեղինակների Հայաստանի և նրա հարևան երկրների բոլոր շրջանները կատարած գիտարշավներով: Հանգամանորեն ներկայացնելով բառարանի ընդգրկած նյութի բազմապլանային բովանդակությունը՝ գրախոսը կարծիք է հայտնում, որ այն ոչ միայն ուղեցույց ձեռնարկ է հայագետների և ընթերցող լայն հասարակության համար, այլև կարևոր նշանակություն ունի կովկասագիտության, բյուզանդագիտության, իրանագիտության և Սերժավոր Արևելքի երկրների պատմության ու պատմական աշխարհագրության համար:

**84. Պատմական տեղանունների վերածնունդը :** [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ.1»] // Երևանի համալս. - 1987. - 14 փետր.

Возрождение исторических топонимов : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1”].

Ներկայացվում է բառարանի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, բովանդակային ընդգրկումը, խոսվում առաջիկա տարիներին տպվելիք հաջորդ հատորների և, մասնավորապես, լրացուցիչ (5-րդ) հատորի մասին, «որի մեջ գետեղվելու են նրանում ընդգրկված բոլոր տեղանունների՝ լճերի, գետերի, քաղաքների, վանքերի, լեռների և այլնի խմբավորված ցուցակներն ըստ առանձին անվանումների և վարչատարածքային միավորների»: Վերջում «հեղինակներին օգնելու նպատակով թերթը դիմում է բոլոր ընթերցողներին ու մասնագետներին իրենց դիտողություններն ու առաջարկություններն ուղարկել խմբագրություն, ... որոնք նկատի կառնվեն կամ կտպագրվեն բառարանի լրացուցիչ 5-րդ հատորում»: Գրախոսությանն ուղեկցում են բառարանի հեղինակային խմբի և 1-ին հատորի լուսանկարները:

**85. Երեմյան Ս. Ծանրակշիռ ավանդ :** [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ.1»] // Սով. Հայաստան (ամսագ.). - 1987. - №6. - էջ 33-34:

Еремян С. Внушительный вклад : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1”].

Չողվածագիր ակադեմիկոսը, տեղանունների բառարանը դասելով հայ «մյուս աննախադեպ բառագրքերի» շարքում, գտնում է, որ այն իր նյութաշատությամբ, բազմազան ու բազմաբնույթ աղբյուրներով, ինքն էլ դարձել է հայ ժողովրդի ու նրա հայրենիքի ընդհանուր պատմության հուսալի աղբյուր: Նրանում առկա հազարավոր անուն-հոդվածներից ամեն մեկն առանձին ամբողջական ուսումնասիրություն է: Բառարանի ընդգրկած ժամանակն առեղծ է հնագույն ժամանակներից մինչև ներօրերը: Ակնհայտ է, որ դա հեղինակներից պահանջել է նյութի բազմապլան ու մանրագմին հետազոտության «ոսկերչական աշխատանք»: Խոսելով տեղանունների անուն-հոդվածների և դրանց ստուգաբանությունների մասին՝ նա նշում է, որ դրանք ընտրված են գիտական բարեխղճությամբ:

յամբ, նկատի է առնված դրանց հայահնչյուն լինելը, հնությունը, հիշատակման հաճախականությունը, սկզբնաղբյուրների արժանահավատությունը:

Տես նաև հավել.

**86. Գաբրիելյան Դ.Կ.** Մեծ ավանդ հայ մշակույթի գանձարանում : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: 3.1»] // Սով. մանկավարժ. - 1987. - N7. - էջ 71-74:

*Габриелян Р.К.* Большой вклад в сокровищницу армянской культуры : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1”].

Բարձր զնահատելով ցանկացած ժողովրդին պատիվ բերող մշված բառարանը՝ գրախոսը քվարկում է գիտականորեն հազեցված այդ մայր բառարանի արժանիքները, ընդգծում նրանում առկա նյութի լայն ընդգրկումը, գիտականությունն ու հավաստիությունը, մեծ մշանակություն տալիս տեղանունների ստուգաբանությանն ու ճշտմանը, ուրախալի համարում, որ մեծ տեղ է տրված մշակութային ժառանգությանը, որի շնորհիվ ընթերցողը կարող է հարուստ տեղեկույթ ստանալ ինչպես կրթական օջախների, բուժական հիմնարկների, մամուլի ու հրատարակչությունների, այնպես էլ մշանավոր մարդկանց մասին:

Տես նաև հավել.

**87. Գիլբրուդաղեան Ս.** Հանրագիտարան-բառարան : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: 3.1»] // Արև (Կահիրե). - 1988. - 14 հունվ.

*Гюлбудагян С.* Энциклопедия-словарь : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 1”].

**88. Օհանյան Արմինե:** Ասկյարը գլուխը քարովն է տվել: Երեխայի իրավունքների ուսնահարում Հայոց լեզվի դասագրքի (4-րդ դաս.) միջոցով // Օրագիր. - 1999. - 16 հունվ. - էջ 5:

*Оганян Арминэ.* Врагу не пожелаешь. Ущемление прав ребенка учебником армянского языка.

Դողվածում սուր քննադատության է ենթարկված է. Աղայանի և Դ. Բարսեղյանի հեղինակած հայոց լեզվի դասագիրքը (4-րդ դաս., 1998 թ.): «Առաջին բառերից մեկը «նահատակն» է, և դա 11-ամյա երեխան է, որին պարտադրում են սովորել այդ գրքով», գրում է հողվածագիրը և, բերելով «բարդ ու խրթին սահմանումների» օրինակներ, գտնում, որ քերականական կանոններն ու լեզվական վարժությունները խոսում են դասագրքի անհեթեթության մասին: «Այս ամենը կարողալուց հետո, անգամ եթե սեփական մտավոր կարողություններիդ նկատմամբ թերահավատ չդառնաս, ապա անպայման կկասկածես գիրքը ստեղծողների ու հաստատողների մտավոր ունակությունների վրա», եզրափակում է գրախոսը:

**89. Գաբրիելյան Դ.Կ.** : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: 3. 3, 4»] // Բանբեր Եր. համալս. - 1999. - N2. - էջ 206-208:

*Габриелян Г.К.* : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 3, 4”].

*Նույնը հմտա՝ տես*

*Գաբրիելյան Դ.Կ.* Կեսդարյա աշխատանքի ծնունդ // Առավոտ. - 1999. - 15 ապր. - էջ 8:

*Габриелян Г.К.* Результат полувекового труда.

Խոսելով տեղանունների բառարանի ստեղծման նախկին փորձերի մասին և նշելով հայոց տեղանվանագիտության հիմնադիր Մովսես Խորենացուց և այլ պատմիչներից որպես ժառանգություն մնացած փոքրաթիվ աղբյուրները՝ գրախոսը գտնում է, որ ԵՊԳ-ի պրոֆեսորների հեղինակությամբ հրատարակված սույն բառարանն «իր ծավալով (շուրջ 700 հրատ. մասով) ու բովանդակությամբ նմանը չունի», այն «հայ մշակույթի կարևոր արժեքներից է, զգալի ներդրում մեր մշակույթի գանձարան»։ Ներկայացնելով բառարանի արժանիքները նյութի հետազոտման խորությունն ու բազմակողմանիությունը, բազմապլան և բազմաբովանդակ տեղեկություններով (պատմական, աշխարհագրական, բանասիրական ևն) հարուստ լինելը, գիտական բարձր մակարդակը՝ հողվածագիրն այն համարում է հանրագիտարանային։ Այս բառարանն ունի ոչ միայն ծանաչողական մեծ արժեք, այլև հայրենասիրական դաստիարակչական նշանակություն, քանի որ նրանում հատուկ ձևով տեղ է տրված տեղանունների հետ առնչվող ազգային-ազատագրական պայքարին, գտնում է գրախոսը։ Նյութի ընտրությունը կատարվել է արդյունավետորեն. տարբեր աղբյուրների իրարամերժ տեսակետներից ընտրվել են առավել հավաստի, կասկածանքի տեղիք չտվող տարբերակները։ Շատ այլ արժանիքների կողքին նշվում է նաև առանձին աշխատախմբի քանքերով կազմված ծավալուն քարտարանը, որի միայն մի մասն է ընդգրկված հրատարակված բառարանում և որը կարող է համարվել «հայագիտության կարևոր օջախ»։

**90. Նազարյան Խաչիկ.** Բացառիկ բառարան : [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Դ. 5»] // Ազգ. - 2002. - 1 մարտի. - էջ 6:

*Назарян Хачик.* Редкий словарь : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 5”].

«Անգերագնահատելի» համարելով «հայ իրականության մեջ նմանը չունեցող բազմահատորանոց պատկերազարդ հանրագիտական բառարանի» տեսական և կիրառական նշանակությունը՝ գրախոսը ներկայացնում է դրա ստեղծման պատմությունը, խոսում հեղինակային խմբի երկարամյա տրամաջան աշխատանքի, ստեղծված քարտարանի հայագիտական արժեքի մասին:

**91. Կիրակոսյան Ալեքսան:** Գիտամշակութային մեծագույն սխրանք [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Դ. 5»] // Հայաստ. Հանրապ. - 2002. - 14 մարտի. - էջ 5:

*Киракосян Алексан.* Величайший научнокультурный подвиг : [“Словарь топонимов Армении и прилегающих областей. Т. 5”].

Տեղանունների բառարանը աննախադեպ գործ է հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի պատմության մեջ, որն ստեղծողների թիկունքում կանգնած են եղել դասական հայագիտության երախտավորները, գրում է հոդվածագիրը: «400 դադ. քառ. կմ և 136 հազար տեղանուն» ընդգրկող համապարփակ այս գործի համար կպահանջվեին ինստիտուտներ և գիտական կենտրոններ, մինչդեռ դրա ողջ ծանրությունն ու պատասխանատվությունն իրենց վրա են վերցրել և իրականացրել երեք հայագետներ: Մանրամասնորեն խոսելով բառարանի արժանիքների մասին և բարձր գնահատանքի ու երախտիքի խոսքեր հղելով նրա հեղինակներին՝ գրախոսը մասնավորապես առանձնացնում է «բազմավաստակ լեզվաբան, մեր դպրության անխոնջ մշակ, բանաս. գ.դ., պրոֆ. Գովհ. Բարսեղյանին», որն իր գործընկերների վախճանվելուց հետո ստիպված է եղել «վերջին հատորների հրատարակությունը ամբողջապես վերցնել իր ուսերին» և որի համար ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ է գործն հասել ավարտին:

Տես նաև հավել.

**92. Ստեփանյան Պերժ:** Ավարտվեց «Տեղանունների բառարանի» լույսընծայումը // Հայաստ. Հանրապ. - 2002. - 14 մարտի. - էջ 5. - (Ուշագրավ հրատարակություն):

*Степанян Перч.* Завершилась публикация “Словаря топонимов”.

Տեղանունների ստուգաբանության և բառարանագրության պատմության շուրջ համառոտ ակնարկից հետո գրախոսը գտնում է, որ «դարերի ընթացքում ոչ մի հայ և օտար գիտնականի չհաջողվեց ավարտին հասցնել տեղանունների բառարան ստեղծելու շնորհակալ, միաժամանակ, անչափ դժվարին գործը»: Այնուհետև, անդրադառնալով առանձին հատորների տպագրման պատմությանը, նա ներկայացնում է այն մեծ և «հոգեմաշ գործը», որ սկսած 1949 թ.-ից ձեռնարկել է նախկինում ասպիրանտների, հետագայում խոշոր հայագետների հեղինակային խումբը: Այդ համատեքստում խոսվում է նաև բառարանի քարտազրման, հրատարակչական աշխատանքներին մասնակցած և աջակցած անձանց ու կազմակերպությունների մասին: Ընդգծելով բառարանի գիտական հսկայական արժեքն ու մեծ պահանջարկը և նշելով առաջին երկու հատորների 30 հազարական օրինակով հրատարակվելու փաստը՝ նա մասնավորապես անդրադառնում է 3-5-րդ հատորների սահմանափակ տպաքանակին (հազարական) և հույս հայտնում, որ հետագայում բառարանը կվերահրատարակվի:

**93. Մուրադյան Սամվել:** Հայաստանի տեղանունների կոթողային բառարանը // Հայոց աշխարհ. - 2002. - 16 մարտի. - էջ 14:

*Мурадян Самвел.* Монументальный словарь топонимов Армении.

Աննախադեպ երևույթ համարելով «750 հրատարակչական մամուլ կամ մոտ 5000 մեծադիր տպագրական էջ կազմող այդ հինգհատորյակը»՝ գրախոսն ափսոսանք է հայտնում, որ, կապված խորհրդային կարգերի փլուզման հետ, շատ տեղանունների կրած փոփոխությունները նոր վիճակով չեն բնութագրվել բառարանում: Պատմության ընթացքում մեր տեղանունները նեոգափոխվել են զավթիչների կողմից կամ տրվել ուրիշների, ահա թե ինչու, «հեղինակային խումբը... խնդրի կարևորության խոր ըմբռնումով և բառարանի գիտակցությունը ապահովման մտահոգությամբ նպատակահարմար է համարել, հենվելով ...



սկզբնաղբյուրների վրա..., յուրաքանչյուր գլխաբառի կողքին դնել ոչ միայն տեղանվան ռուսերեն և լատիներեն տառադարձումները, այլև տալ միևնույն տեղանվան բոլոր հայտնի փոփոխակները», գրում է հոդվածագիրը:

Տես նաև հավել.

**94. Սարգսյան Վաչագան:** Մեր մեծ լեզվի համեստ մշակը : [Բարցազրույց «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի» (2006թ.) մասին / վարեց Սահակյանուշ Սահակյանը] // Եթեր. - 2006. - 24 օգոստ. - էջ 3:

*Саркисян Вацаган.* Скромный деятель нашего великого языка : [Интервью о кн. "Справочник по терминологии и орфографии" (2006) / вела С. Саакян].

«9-րդ հրաշալիք» շաբաթաթերթի ծրագրային մասին հիմնադիր, գլխ. խմբագիր, «Լեզվագետ» կենտրոնի տնօրեն Վ. Սարգսյանը, խոսելով Գ. Բարսեղյանի կազմած «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի» (2006թ.) մասին, մատնանշում է դրա մեծ կարևորությունը բոլոր խմբագրությունների, թարգմանիչների, բուհ ընդունվողների և, ընդհանրապես, հայերենով հետաքրքրվողների համար, քանի որ այն ընդգրկում է 1956-2006թթ. Հայերենի բարձրագույն խորհրդի և տերմինաբանական կոմիտեի որոշումները հայերենի ուղղագրության, ուղղախոսության վերաբերյալ:

Տես նաև հավել.

#### ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ

**95. Բարսեղյան Հովհաննես** Խաչատուրի : [Կյանքի և գործունեության համառոտ ակնարկ]

// Հայկական համառոտ հանրագիտարան: Չորս հատորով: Գ. 1. - Ե.: ՀԽՂ գլխ. խմբ., 1990. - էջ 503:

// Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան: Երկու հատորով: Գ. 1. - Ե.: Հայկ. հանրագիտ. հրատ., 2005. - էջ 219:

// Կենսագրական հանրագիտարան / ԵՊՀ. - Ե.: ԵՊՀ հրատ., 2009. - էջ 155-156:

Барсегян Ованес Хачатурович : [Краткий очерк жизни и деятельности].

**96. Պողոսյան Նորայր:** Հովհաննես Խաչատուրի Բարսեղյան (ծննդյան 90-ամյակի առթիվ)

// Բանբեր Եր. համալս. (Հայագիտություն). - 2010. - N131.1. - էջ 74-77:

// Բանբեր Եր. համալս. (Բանասիրություն). - 2010. - N131.2. - էջ 78-81:

*Погосян Нораір.* Ованес Хачатурович Барсегян (к 90-летию со дня рождения).

Պրոֆ. Գովհ. Բարսեղյանի կենսագրության համառոտ շարադրանքից հետո հողվածագիրն անդրադառնում է նրա որպես գիտնական-լեզվաբանի 65-ամյա գործունեությանը և համակարգված ձևով ներկայացնում հայագիտության մեջ նրա ունեցած գիտական մեծ վաստակը: Նախ տրվում է լեզվաբանի երկու տասնյակ մենագրությունների և գիտական բազմաթիվ հոդվածների բնութագրական գնահատականը: Մասնավորապես նշվում է, որ հայերենագիտության մեջ նոր ձևավորվող միջգիտաճյուղի հատկանվանագիտության հիմքը դրվել է նաև Գ. Բարսեղյանի «Դատուկ անունը» մենագրության շնորհիվ, և որ նրա հեղինակած աշխատություններից շատերը, առնչվելով գիտական բանավիճային թեմաներին, նպաստել են դրանց հանգուցալուծմանը: Հիշատակվում են նաև նրա և Է. Ադայանի համահեղինակությամբ կազմված «Հայոց լեզու» (4-րդ, 5-7-րդ դաս. համար) դասագրքերը, որոնք իրենց մեթոդական ուղղվածությամբ և նյութի մատուցման հստակությամբ մի քանի տասնամյակ եղել են հանրակրթական դպրոցների ուսումնական ձեռնարկներ: Բարձր գնահատական է տրվում լեզվաբանի՝ որպես Լեզվի բարձրագույն խորհրդի երկարամյա գիտական քարտուղարի՝ ժամանակակից հայերենի նորմավորման, տերմինաբանության և ուղղագրության կանոնարկման ասպարեզում ունեցած մեծ ավանդին, որը տեսանելի է նրա խմբագրությամբ և մեկնաբանություններով պարբերաբար հրատարակվող «Տերմինաբանական ուղեցույցի» լեզվական-օրենսդիր արժեքով: Խոսելով Գ.Բ.-ի բառարանագրության ասպարեզում ունեցած գիտական մեծ ավանդի մասին, հողվածագիրն ընդգծում է, որ ԳԳ նախագահի մրցանակի արժանացած Հայաստանի տեղանունները մեկնաբանող 5-հատորյա բառարանի «վերջին 2 հատորների տպագրության ծանրությունը գործընկերների վախճանավելուց հետո միայնակ իր վրա է վերցրել Գ. Բարսեղյանը»: Այդ մեծածավալ աշխատության և ներկայումս դրա մոտ մեկ միլիոն տեղանունային նկարագրություն պարունակող քարտադարանը, որպես հայագիտական հետազոտությունների արժեքավոր շտեմարան, արդիականացվում է և նրա ղեկավարությամբ պատրաստվում հրատարակության «Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան» անունով: Հողվածագիրը խոսում է նաև Գ.Բ.-ի գիտամանկավարժական, հասարակական-քաղաքական, կուսակցական գործունեության, ինչպես նաև վաստակած կոչումների և պետական բարձր պարգևների մասին:

**97. Փիրումյան Տաթևիկ:** «Ղասախսունների դասախոսը» 90 տարեկան է // Երևանի համալս. (պշտթ.). - 2010 - N 3 (մարտ). - էջ 12, նկ.

*Пирумян Татевик. Преподавателю преподавателем 90 лет.*

Հաղորդագրություն է ԵՊԳ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված մեծարժան ցերեկույթի մասին, որը նվիրված էր «մեծանուն մանկավարժ, լեզվաբան, գիտնական Գովհ. Բարսեղյանի 90-ամյակին»: Լեզվաբանի նախկին սաներ և այժմ գործընկերներ Ա. Ավագյանի, Լ. Եզեկյանի, Ա. Սարգսյանի, Ռ. Սաքապետոյանի և այլոց պատմած հուշերում երևան է գալիս ոչ միայն իր վաստակով ու գործունեությամբ ԵՊԳ-ում և առհասարակ լեզվի ու լեզվաբանության մեջ խորհրդանիշ դարձած, խստապահանջ ու արդարամիտ, հայերենի մաքրության ու պահպանման գործում մշտաբոլոմ մարտիկ մանկավարժն ու գիտնականը, այլ նաև ախորժալուր ծայնով «Թառուլան-թառուլան» երգող, պարզ ու զգացմունքային մարդը:

**98. Կարդանյան Զավեն:** Հանրաճանաչ գիտնականն ու մաստարացին // Առավոտ. - 2010 - 8 մայ. - էջ 10:

*Вартамян Завен.* Известный ученый из Мастары.

Յ.Բ.-ի ծննդյան 90 և գիտամանկավարժական գործունեության 65-ամյակի առթիվ գրված փոքրիկ ակնարկ է, որի հեղինակը՝ Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի վաստ. մանկավարժը, իր և մյուս համագյուղացիների անունից հպարտությամբ նշում է, որ Մաստարան շատերի, նույնիսկ սփյուռքահայերի (օրինակ՝ Բեյրութի «Ձարթոնք» թերթի խմբ.: Պարույր Աղբաշյանի) համար ճանաչելի է դարձել «գիտության հրաշալի մշակ», նաև «լավ անձնավորություն» Յ. Բարսեղյանի շնորհիվ:

**99. Զաքարյան Գևորգ, Գրիգորյան Ռևիկ:** Հայագիտության մերօրյա հսկան: Հովհաննես Բարսեղյան (90-ամյակ) // Ազգ. - 2010. - 2 նոյ. - էջ 4, նկ.:

*Закарян Геворг, Григорян Ревик.* Современный туман арменоведчества. Ованес Барсегян (90-летие).

*Նույնը հնճու՛ տես*

**Զաքարյան Գևորգ:** Ականավոր գիտնականը և ազնիվ քաղաքացին (Հովհ. Բարսեղյան-90) // Հայրենական (Արմավիր). - 2010. - ք. 13. - 1-15 հուլիսի. - էջ 3:

// Հայաստ. Հանրապ. - 2010 - 28 հոկտ. - էջ 4 (N201):

*Закарян Геворг.* Выдающийся ученый и истинный гражданин (Ованес Барсегян - 90).

Ակնարկում, Յ. Բարսեղյանի կենսագրական փաստերի արձանագրմանը զուգահեռ, տրված են նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող դրվագներ, որոնց միջոցով ավելի ցայտուն և տեսանելի է դառնում մեծահռչակ լեզվաբանի նկարագիրը սիրված դասախոսն ու համալսարանի նվիրյալը, «հմացության հանրագիտարան հայագետը», հայրենիքի համար մարտնչած վաշտի հրամանատարն ու ճշմարտության համար մարտնչող անհատը, «Թալինի խաչատուր Աբովյան» տիտղոսակիրը, մարտական և աշխատանքային շքանշանների ու պետական բարձր պարգևների արժանացած քաղաքացին: Ակնարկում ընդգծվում են նաև մեծավաստակ գիտնականի մարդկային բարձր հատկանիշները:

*Տես նաև հավել.*

# ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

## Յ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ազգայինը և միջազգայինը տերմինի և տերմինաշինության մեջ [հոդ.]	30
Ալեքսան Կիրակոսյանը՝ 85 տարեկան [հոդ.]	54
Ալեքսան Կիրակոսյանի՝ «Սայրամուտի շեմին» հուշագրությունը՝ որպես համազգային միաբանության շեփոր [զրխս.]	52
Աղայան Էդուարդ Բագրատի [զրքում]	26
Աննախաղեպ բառարան՝ մեր իրականության մեջ [իրգզր.]	62
Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V-XX դարերի հայ բանաստեղծության) [խմբ.]	75
Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն [մենագ.]	1
Բա սա պետություն՝ն է [իրգզր.]	61
Բաղդրայլ հատուկ անուններում մեծատառերի գործածություն նախագծեր [խմբ.]	68
Գեղամ Վարդանյանի «Վայրի Խաղող»-ը [զրխս.]	57
Գյուղի օրինակելի պատմություն [զրխս.]	56
Գրական լեզու և բարբառներ [իրգզր.]	63
Գրական հայերենի միավորման հարցը և նրա քննությունը Հրայրյա Աճառյանի աշխատություններում [հոդ.]	42
Գրիգոր Գարեգինյանի լույսի պես մաքուր, լույսի պես ջերմացնող կյանքը [հոդ.]	39
Գրիգոր Ղափանցյանը՝ լեզվագետ-հայագետ [հոդ.]	45
Գրողը և ժամանակը [բնվճ.]	59
Գևորգ Ջահուկյան (70 տարի)	38
Ղարավերջյան մտորումներ և խոհեր [զրքում]	20
Ղարձյալ ուղղագրության մասին [հոդ.]	44
Ես էլ ուսանող եմ եղել [իրգզր.]	66
Երկու խոսք [Առջբ. («Եղնիկ գյուղի պատմությունը»)]	24
Երկու խոսք [Առջբ. («Հայ գաղթականության պատմություն»)]	22
«Երևան» տեղանվան ուղղագրությունը գրական արևելահայերենում և արևմտահայերենում [զեկ.]	25
Երևանի պետական համալսարան [հոդվ. ժող.], [խմբ.]	71
Երևանի պետական համալսարանը 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում [հոդ.]	40
Ը ձայնավորը և նրա նշանային արտահայտությունը գրական հայերենում (պատմական հնչյունաբանության ակնարկ) [մենագ.]	7
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր [խմբ.]	70
Իսկական բանաստեղծ ծնվում են [զրխս. («Վայրի Խաղող»)]	57
Խմբագրի կողմից [առջբ. («Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան»)]	21
Խոսք երախտիքի [ԵՊՀ 80-ամյակի առթիվ] [հոդ.]	49

Կարծիք Խ. Մնացականյանի «Հայերենի կետադրության հիմնահարցեր» ուսումնասիրության մասին [գրքում].....	27
Կարծիք «Միսա՞ք, թե՞ Միսակ» նամակի մասին [հոդ.].....	43
Կյանքի լուսավոր ուղի [հոդ. (Թ.Խ. Հակոբյանի ման)].....	37
«Կորուստները կարող են անդամնալի լինել», եթե միջոցներ չձեռնարկենք [լեզվապահպանության և լեզվաշինության համար [իրգզր.].....	67
Հայ զարթոթականության պատմություն [խմբ.].....	76
Հայ ժողովրդի առասպելաբանության կենտրոնը չպետք է մնա օտարի ձեռքում [իրգզր.].....	64
Հայագիտության առատ հունձքի վաստակով (Էդ. Աղայան - 70) [հոդ.].....	35
Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան.....	10
Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան.....	9
Հայերենագիտական առարկաների ծրագրեր: Ծրագիր լեզվաբանության ներածության [խմբ.].....	69
Հայերենագիտությունը 60 տարում [խմբ.].....	72
Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները [մենագ.].....	4
Հայերենի խոսքի մասերի տեսական հարցերի քննությունը Ա. Աբրահամյանի աշխատություններում [հոդ.].....	58
Հայերենի խոսքի մասերի ուսմունքը [մենագ.; հայ., ռուս.].....	5, 6
Հայերենի կետադրություն: Ուս. ձեռնարկ [խմբ.].....	74
Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ [մենագ.].....	8
Հայերենի ուղղախոսության հարցերը տերմինաբանական կոմիտեի վերջին որոշումներում [գրքում].....	18
Հայոց լեզվի պատմության մի քանի հիմնահարցեր՝ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների տեսադաշտում [զեկ.].....	23
Հայոց լեզվի պատմության գործնական պարապմունքների ձեռնարկ [խմբ.].....	73
Հայոց լեզու: դասագիրք V-VII դասարանների համար.....	13
Հայոց լեզու: Հանրակրթ. դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք.....	14
Հայոց լեզու: Հանրակրթ. դպրոցի 6-րդ դաս. դասագիրք.....	17
Հայոց լեզու: 5-րդ դաս. համար.....	15
Հայոց լեզու: 5-6-րդ դասարանների դասագիրք.....	16
«Հայոց լեզուն մեր ազգային ինքնության պահպանման ամենազորեղ կռվանն ու միջոցն է» [իրգզր.].....	67
Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ) [մենագ.].....	2
Հր. Աճառյանը՝ հայոց լեզվի պատմության հետազոտող [հոդ.].....	32
Մայրենի լեզվի մաքրության և հարստացման համար [հոդ.].....	34
Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները [մենագ.].....	3
Մեծ կորուստ [ՎՍՄԳ ԳԱ ակադ. Ա. Շանիձեի մասին].....	36
Միասնական ուղղագրություն. տեսակետներ, բախումներ, լուծումներ [բնվճ.].....	60
Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկու բառակապակցության թարգմանության հարցի շուրջը [զեկ.].....	19
«Մուրադյան Ա.Ն. Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի երականական տերմինաբանության ստեղծման գործում» [գրխս.].....	31

Նոր որոշում ուղղագրության մասին [հոդ.].....	33
Չարամիտ զագրախոսություն [բնվճ].....	65
Պահպանենք և հարստացնենք հայերենի բառագանձը [հոդ.].....	29
Պավել Շարաբխանյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) [հոդ.].....	46
Պատմական և արդիական լիակատարությամբ [առջք. («Պատմություն հայոց գաղթականության»)] .....	50
Պարզաբանումներ՝ «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» հին ու նոր որոշումների վերաբերյալ [հոդ.].....	53
Պարզաբանումներ՝ «Տողադարձի մասին» որոշման վերաբերյալ [հոդ.].....	55
Վազգեն Գևորգյանը՝ հավերժի ուղեկից [հոդ.].....	51
Վաստակավոր հայագետը (Գուրգեն Սևակի ծննդյան 60-ամյակը) [հոդ.].....	28
Վտանգավոր խաղ մայրենիի հետ [հոդ.].....	47
Տերմինաբանական ուղեցույց.....	11
Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու.....	12
Ուղղագրական զուգածությունները «ի» նախդրով բաղադրված բարդություններում [հոդ.].....	41
«Ուղղագրությունը գիտություն է» [հոդ.].....	48

## Հ.Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

### ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<b>«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»</b> Ավարտվեց «Տեղանունների բառարանի» լույսընծայումը [Պ. Ստեփանյան].....	92
Բացառիկ բառարան [Խ. Նազարյան] .....	90
Գիտամշակութային մեծագույն սխրանք [Ա. Կիրակոսյան].....	91
Գնահատում են մասնագետները [Ռ. Իշխանյան, Հ. Բարթիկյան, Ա. Մադոյան, Ա. Սուքիասյան] .....	82
Ծանրակշիռ ավանդ [Ս. Երեմյան].....	85
Կեսդարյա աշխատանքի ծնունդ [Հ.Կ. Գաբրիելյան].....	89
Կոթողային աշխատություն [Պ.Հ. Հովհաննիսյան].....	83
Հայաստանի տեղանունների կոթողային բառարանը [Ս. Մուրադյան].....	93
Հանրագիտարան-բառարան [Ս. Գիլբրուդադեան].....	87
Մեծ ավանդ հայ մշակույթի գանձարանում [Հ.Կ. Գաբրիելյան].....	86
Պատմական տեղանունների վերածնունդ .....	84
<b>«Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»</b> Դիտողություններ մի բառարանի վերաբերյալ [Ալ. Սարգսյան].....	80
Իր տեսակին մեջ եզակի բառարանի մը հրատարակութեան առթիւ [Պ. Աղպաշեան].....	79
Յովհաննէս Բարսեղեան: «Հայերէն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան» [Պ. Աղպաշեան].....	79
<b>«Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները»</b> Նոր ուսումնասիրություն խոսքի մասերի վերաբերյալ [Ռ. Իշխանյան, Ա. Սուքիասյան].....	81

«Հատուկ անուն» [գրխս՝ Յ. Օհանյան].....	77
«Հայոց լեզու (դասագիրք 4-րդ դաս. համար)» Ասկյարը գլուխը քարովն է տվել: Երեխայի իրավունքների ոտնահարումը Հայոց լեզվի դասագրքի միջոցով [Ա. Օհանյան].....	88
«Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» Աշխատություն՝ Աբեղյանի լեզվաբանական տեսության մասին [Ռ. Իշխանյան].....	78
«Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու» Մեր մեծ լեզվի համեստ մշակը [Վ. Սարգսյան].....	94

### ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ականավոր գիտնականը և ազնիվ քաղաքացին (Հովհ. Բարսեղյան-90) [Գ. Ջաքարյան] .....	99
Բարսեղյան Հովհաննես Խաչատուրի [գրքում] .....	95
«Դասախոսների դասախոսը» 90 տարեկան է [Տ. Փիրումյան].....	97
Հայագիտության մերօրյա հսկան (Հ. Բարսեղյան - 90) [Գ. Ջաքարյան, Ռ. Գրիգորյան].....	99
Հանրաճանաչ գիտնականն ու մաստարացին [Ջ. Վարդանյան].....	98
Հովհաննես Խաչատուրի Բարսեղյան (ծննդ. 90-ամյակի առթիվ) [Ն. Պողոսյան].....	96

# АЛФАВИТНЫЙ УКАЗАТЕЛЬ ЗАГЛАВИЙ

## ТРУДЫ ОВ. БАРСЕГЯНА

Агаян Эдуард Багратович [в кн.] .....	26
Алексану Киракосяну 85 лет [ст.].....	54
Арменистика за 60 лет [ред.].....	72
Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь.....	9
“Армянский язык самый сильный аргумент и средство сохранения национальной самобытности” [интвр.].....	67
Армянский язык. Учебник 4-ого класса.....	14
Армянский язык. Учебник 5-ого класса.....	15
Армянский язык. Учебник 5-6 классов.....	16
Армянский язык. Учебник 5-7 классов.....	13
Армянский язык. Учебник 6-ого класса.....	17
Беспрецедентное явление-словарь в нашей реальности [интвр.].....	62
Вазген Геворкян – спутник вечности [ст.] .....	51
Вопрос об единении ветвей литературного армянского и его решение в трудах Грачья Ачаряна [ст.].....	43
Вопросы морфологии современного армянского языка [ред.].....	70
Вопросы орфографии армянского языка в обсуждениях классиков литературы [мнгр.].....	8
Вопросы орфоэпии армянского языка в последних решениях терминологического комитета [в кн.].....	18
Геворк Джаукян (70-лет) [ст.].....	38
Гласная буква <i>ղ</i> и ее знаковое выражение в литературном армянском языке (исторический очерк по фонетике) [мнгр.].....	7
Григор Капанцян – языковед-арменовед [ст.].....	45
Два слова [прдсл. (“История деревни Егник”)].....	24
Два слова [прдсл. (“История армянского беженства”)].....	22
“Дикий виноград” Гегама Вартамяна [рец.].....	57
Единое правописание: взгляды, конфликты, решения [полем.].....	60
Ереванский государственный университет в Великой Отечественной войне 1941-1945 гг. [ст.].....	40
Ереванский государственный университет (сб. статей) [ред.].....	71
За чистоту и обогащение родного языка [ст.].....	34
Заслуженный арменовед (к 60-летию со дня рождения Г. Севака) [ст.].....	28
Злоумышленное сквернословие [полем.].....	65
И я был студентом [интвр.] .....	66
Исследование теоретических вопросов частей речи армянского языка в трудах А. Абраамяна [ст.].....	58
Истинным поэтом рождаются [рец. (“Дикий виноград”)].....	57



Исторической и современной полнотой [прдсл. ("История армянского беженства")]	50
История армянского беженства [ред.]	76
К вопросу о переводе двух словосочетаний в "Истории Армении" Мовсеса Хоренаци [докл.]	19
Литературный язык и диалекты [интпрв.]	63
Мемуары Алексана Киракосяна "На пороге заката" как выражение общенационального единодушия [рец.]	52
Мнение об исследовании Х. Мнацаканяна "Основные вопросы армянской пунктуации" [в кн.]	27
Мнение о письме «Միւս՝ք, քի՛ն Միւսիւն» [ст.]	43
Мурадян А.Н. Грекофильская школа и ее роль в создании армянской грамматической терминологии [рец.]	31
Национальное и интернациональное в терминах и терминообразовании [ст.]	30
Некоторые проблемы истории армянского языка на поле зрения взаимоотношений Армения-Диаспора [докл.]	23
Новое решение о правописании [ст.]	33
Образцовая история деревни [рец.]	56
Огромная потеря (об акад. Груз. ССР Акаки Шанидзе) [ст.]	36
Опасная игра с родным языком [ст.]	47
"Орфография – наука" [ст.]	48
Орфография топонима "Ереван" в восточно-армянском и западно-армянском литературных языках [докл.]	25
От редактора [Прдсл. ("Словарь Библии и имен армянских святых")]	21
Павел Шарпаханян (к 70-летию со дня рождения) [ст.]	46
Параллельные орфографические формы в сложных словах с префиксом «ի» [ст.]	41
Писатель и время [полев.]	59
Пособие для практических занятий по истории армянского языка [ред.]	73
"Потери могут быть безвозвратными", если не принимать меры для сохранения и строения языка [интпрв.]	67
Пояснения к постановлению "О переносе слова" [ст.]	55
Программы арменоведческих предметов преподавания. Программа введения в языкознание [ред.]	69
Проекты об употреблении прописных букв в сложных собственных именах [ред.]	68
Пунктуация армянского языка. Уч. пособие [ред.]	74
Р. Ачарян - исследователь истории армянского языка [ст.]	32
Разве это государство? [интпрв.]	61
Разъяснения о старых и новых решениях "Об употреблении прописных букв в сложных собственных именах" [ст.]	53
Речь Ов. Барсегяна [в кн. ("Портрет конца эпохи")]	20
С богатым вкладом в арменоведение (Э.Б. Агаян - 70) [ст.]	35
Сбережем и обогатим словарный состав армянского языка [ст.]	29

Светлый жизненный путь [о Т.Х. Акопяне] [ст.].....	37
Слово заслуга [к 80-летию ЕГУ] [ст.].....	49
Словарь Библии и имен армянских святых (на основе армянской поэзии V-XX вв) [ред.].....	75
Словарь топонимов Армении и прилегающих областей.....	10
Снова о правописании [ст.].....	44
Собственное имя (теоретический описательный очерк) [мнгр.].....	2
Справочник по терминологии и орфографии.....	12
Теории классификации частей речи армянского языка [мнгр.].....	4
Теория спряжения глагола современного армянского языка [мнгр.].....	1
Теория пяти падежей Манука Абегамяна и ее ранняя и новая критика [мнгр.].....	3
Терминологический путеводитель.....	11
Учение о частях речи армянского языка [мнгр.] [арм., рус.].....	5,6
Центр армянской мифологии не должен оставаться в чужих руках [интвр.].....	64
Чистая, как свет, и греющая, как свет, жизнь Григора Гарегиняна [ст.].....	39

## ОБ ОВ. БАРСЕГЯНЕ

### РЕЦЕНЗИИ НАУЧНЫХ ТРУДОВ

#### **“Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь”**

Замечания по поводу одного словаря [Ал. Маркарян].....	80
Ов. Барсегян. “Армянский орфографический-орфоэпический, терминологический словарь” [П. Агбашьян] [в кн.].....	79
По поводу публикации единственного в своем роде словаря [П. Агбашьян].....	79

#### **“Армянский язык. Учебник 4-ого класса”**

Врагу не пожелаешь. Ущемление прав ребенка учебником армянского языка [А. Оганян].....	88
--	----

#### **“Теории классификации частей речи армянского языка”**

Новое исследование о частях речи [Р. Ишханян, А. Сукиасян].....	81
---	----

#### **“Словарь топонимов Армении и прилегающих областей”**

Большой вклад в сокровищницу армянской культуры [Р.К. Габриелян].....	86
Величайший научнокультурный подвиг [А. Киракосян].....	91
Внушительный вклад [С. Еремян].....	85
Возрождение исторических топонимов.....	84
Завершилась публикация “Словаря топонимов” [П. Степанян].....	92
Монументальный словарь топонимов Армении [С. Мурадян].....	93
Монументальный труд [П. Ованесян].....	83
Оценивают специалисты [Р. Ишханян, Р. Бартикян, А. Мадоян,	

А. Сукиасян].....	82
Редкий словарь [Х. Назарян] .....	90
Результат полувекового труда [Р.К. Габриелян].....	89
Энциклопедия-словарь [С. Гюлбудагян] .....	87
<b>“Собственное имя (теоретическо-описательный очерк)”</b>	
[А. Оганян].....	77
<b>“Справочник по терминологии и орфографии”</b>	
Скромный деятель нашего великого языка [В. Саркисян].....	94
<b>“Теория пяти падежей Манука Абеяна и ее ранняя и новая критика”</b>	
Исследование о лингвистической теории М. Абеяна [Р. Ишханян] .....	78

## О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ

Барсебян Ованес Хачатурович [в кн.].....	95
Выдающийся ученый и истинный гражданин (Ов. Барсебян - 90)	
[Г. Закарян].....	99
Известный ученый из Мастары [З. Варманян].....	98
Ованес Хачатурович Барсебян (к 90-летию со дня рожд.) [Н. Погосян].....	96
Преподавателю преподавателей 90 лет [Т. Пирумян].....	97
Современный титан арменоведчества (Ов. Барсебян - 90)	
[Г. Закарян, Р. Григорян].....	99

# ՊԱՐԲԵՐԱՎԱՆՆԵՐԻ ԱՅՐԲԵՆԱՎԱՆ ՑԱՆԿ АЛФАВИТНЫЙ УКАЗАТЕЛЬ ПЕРИОДИКИ

ԱԶԳ = Azg [= Азг] (օրթ.)

1997 (29.03)

1997 (18.07)

2002 (1.03)

2002 (15.03)

2003 (7.05)

2003 (27.08)

2010 (2.11)

Stu 46, 48, 52, 54, 62, 90, 96

ԱՌԱՎՈՏ [= Аравот] (օրթ.)

1999 (15.04)

2004 (21.05)

2010 (8.05)

Stu 65, 89, 97

ԱՐԵԷ [= Арев] (Կահիրե) (շրթթ.)

1988 (14.01)

Stu 87

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ: Հաս. գիտություններ = Вестник Ереванского университета. Общест. науки

1976 (N 3)

1989 (N 3)

1990 (N 1)

1992 (N 3)

1996 (N 2)

1999 (N 2)

2010 (NN 131.1; 131.2)

Stu 32, 37, 38, 39, 42, 89, 98

ԳԱՐՈՒՆ [= Гарун]: Գրակ.-գեղ., հաս.-քաղ. անկախ ամսագ.

1997 (N 8)

Stu 60

ԳԻՏԵԼԻՔ [= Гумелик]: Ուս.-կրթ. և գիտ.-մեթոդ. հանդես աշակերտների և ուսուցիչների համար

2003 (N7), 2003 (N9)

Stu 53, 55

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ [= Гумютюн ев техника (Наука и техника)] (ամսագ.)

1996 (N10-12)

Stu 44, 53

ԳՐԱՎԱՆ ԹԵՐԹ [= Гракан терт (Литературная газета)]: Հայաստանի գրող.  
միութ. շրթթ.

1980 (22.08)

2002 (18.01)

2002 (14.06)

2004 (30.04)

Stu 51, 59, 63, 65

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀ = Гркеру ашхар: Օրգան ՀՍՄՀ հրատպետկոմի և գրքատրնների  
հանրապ. կամավոր ընկ. (շրթթ.)

1986 (21.12)

Stu 82

ԵԹԵՐ [= Етәр]

2006 (24.08)

Stu 94

ԵՐԵԿՅԱՆ ԵՐԵՎԱՆ = Ерекоян Ереван: Օրգան ՀԿԿ եր. քաղկոմի և  
աշխատավորների դեպուտատների երքաղսովետի (օրթ.)

1968 (18.06)

Stu 78

ԵՐԿՐԱՊԱՀ [= Екрана] (ամսթ.)

2001 (31.07)

Stu 61

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ: Գիտահմֆորմ. հանդես = Ереванский университет.  
Научно-информ. журнал

1987 (N1)

Stu 83

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ [= Ереванский университет] (պշտթ.)

1987 (14.02)

1987 (18.04)

1999 (5.10)

2010 (N 3)

Stu 36, 49, 84, 97

ԻՐԱՎՈՒՆԹՐ de facto [= Иравунж de facto]: Հաս.-քաղ. թերթ

2010 (16-18.03)

Stu 67

ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ = Вестник общественных  
наук / ՀՍՄՀ ԳԱ

1971 (N1)

1972 (N9)

1983 (N5)

Stu 30, 31, 35

- ԽԱՐԻՍԽ [= Харисх]: Գեղ., մշակութ., երիտ. ամսգ.  
2004 (05) Stu 6
- ՀԱՅ ԶԻՆՎՈՐ [= Ай зинвор]: ՀՀ ՊՆ պշտթ.  
2002 (13-20.04) Stu 64
- ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵԱ = Арменоведческий журнал = Journal for Armenian Studies / Խ. Արով. անվ. ՀՊՄՀ  
2008 (N 2-3, Հավել.) Stu 58
- ՀԱՅԱՍՏԱՆ [= А́йастан]: Հաս., քաղ., մշակութ. թերթ  
1997 (15.04)  
2002 (21.06) Stu 47, 50
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ [= А́йастанի А́нրաբетություն] (օրթ.)  
2002 (14.03)  
2004 (30.09)  
2005 (9.06)  
2010 (10.03)  
2010 (28.10) Stu 56, 57, 67, 91, 92, 96
- ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ [= Айоц ашхар] (օրթ.)  
2002 (16.03) Stu 93
- ՀԱՅՐԵՆԱԿԱՆԶ [= А́йренаканц]: Հաս., քաղ., մշակութ. թերթ (Արմավիր)  
2010 (1-15.07) Stu 96
- ՀԱՆՂԵԱ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ: Գիտախնդիր. լրատու = Журнал Ереванского университета. Науч.-информ. бюллетень  
1995 (N 2)  
1995 (N 3)  
1996 (N2) Stu 40, 41, 43
- ՇԻՐԱԿ [= Ширак]: Ամսագիր գրականության եւ արուեստներու = Shirak an Armenian monthly/ Թեքեյան մշակութ. միութ. - Պեյրուք (Լիբանան). - ժ՛ տարի  
1974 (N 6) Stu 79
- ՊԱՅՔԱՐ [= Па́йка́р]: Ազգ., քաղ. եւ գրակ. օրաթերթ = Baikar. Armenian Daily Newspaper. - Ուրթերթոուն (ԱՄՆ)  
1973 (17-18.02) Stu 31

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ = Историко-филологический журнал / ՀՀ ԳԱԱ

1997 (N 2)

Տես 45

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [= Советакан ցրаканутյոն (Советская литература)]: Գրակ.-գեղ., տես.-քննադ. ամսագ.: Օրգան ՀՍՍՀ Գրող. միութ. վարչ.

1974 (N 12)

Տես 80

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ = Советакан Ժրոց: Օրգան ՀՍՍՀ Լուս. մին. և լուս., բարձ. դպրոցի ու գիտ. հիմնարկների աշխատողների արհմ. հանրապ. կոմիտեի (ՀԲԲԲ.)

1979 (1.02)

Տես 33

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ = Советакан Аւաստան (Советская Армения) = Sovetakan Hayastan (Arménie Soviétique) : Հաս., գրակ.-գեղ. ամսագ., օրգան սփյուռքահայութ. հետ մշակութ. կապի կոմիտեի

1968 (N 7), 1968 (N 8), 1987 (N 6)

Տես 29, 85

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ [=Советакан Аւաստան] (օրթ.): Օրգան ՀԿԿ, ՀՍՍՀ Գերագ. սովետի և Մին. խորհրդի

1982 (13.03)

Տես 34

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ = Советакан манкаварձ (Советский педагог). ՀՍՍՀ լուս. մին. տես., մանկավարժ.-մեթոդ. ամսագ.

1965 (N 8), 1977 (N 9), 1987 (N 7)

Տես 77, 81, 86

ՏԵՂԵԿԱԳԻՐ: Հաս. գիտություններ = Известия. Общест. науки / ՀՍՍՌ ԳԱ

1964 (N 5)

Տես 28

ՕՐԱԳԻՐ [Орагир] (օրթ.)

1999 (16.01)

Տես 88

ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ = Orinats yerkir [Оринац еркир]: «Օրինաց երկիր» կուս. պշտթ.

2006 (10-16.03)

Տես 57

**ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԲՆԱԳՐԵՐԻՑ**

**ЦИТАТЫ ИЗ ОРИГИНАЛОВ**



## Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄՏՔԵՐԻՑ

### Հայրենիք, քաղաքականություն, մշակույթ, սեր

«Քսաներորդ դարը, ինչպես մարդու, այնպես էլ երկրագնդի համար, որքան հրաշագործ արարումների, նույնքան էլ մարդասպան ու երկրակործան դար եղավ: Այսուամենայնիվ, իրեն և բնությունը կործանել սկսած մարդը դեռ լավատեսությունը չի կորցրել» [54]:

«Երրորդ 1000-ամյակում հայի գործը շատ հեշտ չի լինելու: Պատմականորեն չլուծված են մնում Մասիսը պանդխտությունից ազատելու, ապա նաև քաղաքակրթության ավերածությունների դեմն առնելով՝ հայահավաքման գործընթաց սկսելու և իրականացնելու պատմական առաքելությունները» [20]:

«Աշխարհի մարդկությունը չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ հայ ժողովրդի առասպելաբանական կենտրոնը՝ Նոյյան տապանն իր վրա վերցրած լեռը մնա ուրիշի ձեռքում: ... Ես նաև համոզված եմ, որ Արցախի ազատագրմանը հաջորդելու է մեր պահանջատիրական հարցերի լուծումը» [64]:

«Հուսանք, որ գալիք 1000-ամյակի սկզբներին, երբ քաղցն ու աղքատությունը վերացած կլինեն մեր երկրից, աշխարհիկ և հոգևոր մեծատունները կմտածեն նաև հայ ժողովրդին ու նրա պատմությունը վայել համալսարաններ, մշակույթի և կրթության օջախներ կառուցելու մասին» [20]:

«Նվաճումները առ ոչինչ կդառնան, եթե մենք չիմանանք մի բան. որ ձեռք բերելը երբեմն այնքան դժվար է, որքան դրանք պահպանելը» [64]:

«Կառավարող կուսակցութեան մեծարգո այրեր, ձեր սեփական ժողովուրդին և մեզ մի՛ կերակրեք ահաբեկչութեան ու քաղաքացիական կռիւի սպառնալիքներով, մի՛ դառնացնեք մեր ծերութիւնը: Ձէ՞ որ վաղուց է ասված՝ եթե Աստվածն անգամ կործանում է, ապա՝ հայը շինում է» [40]:

«Երկիրը պաշտպանում են ոչ թե փողոցային ցույցերով ու կուսակցական քարոզչութիւններով, այլ կյանքը նվիրաբերելով: ... Հայրենիքը պաշտպանելու ճանապարհը անցնում է արջան միջով» [64]:

«Պատերազմում անմահանում է ամեն մի քաջ, իսկ հերոսանում են երջանիկ անհատները միայն» [40]:

«Նուշխիսկ մահերի ընտրութեան մեջ պատերազմը անարդար ու չարամիտ է: Ոչ միայն տանում է պատանուն ու զավակի ծնունդը դեռ չտեսած փեսային, այլև հաճախ մորը զրկում է իր մինուճար որդուց, իսկ երբեմն էլ ամբողջ տոհմը որձակոտոր է անում» [40]:

«Հայրենական պատերազմից տուն դարձողները՝ գեներալ թե զինվոր, մտավորական թե հողի ու գործարանի աշխատավոր, իրենց հետ բերեցին ընդմիշտ խաղաղ ապրելու ցանկութիւնն ու ոգի, «դասակարգային թշնամու» հետ բարեկամացած, ամեն մտավոր բռնութիւնն իրենցից թոթափած, եթե ոչ աստվածապաշտ, ապա աստվածավախ դարձած: Եկան գիտակցած լինելով, որ մարդկանց իրարից տարբերողը մաշկի գույնն է, մինչդեռ միացնողը արջան կարմիրն է, որ անցնում է սրտի միջով, սնում է նաև ուղեղն ու միտքը» [40]:

«Անցել են միակուսակցական բռնութեան տարիները, մենք ունևորի և աղքատի հակադրման հնացած գաղափարախոսութեամբ Եվրախորհուրդ ներկայանալու իրավունք չունենք» [24]:

«Կուսակցականութիւնը՝ 20-րդ դարում ապրած ամեն մի հայաստանցու, այլև՝ ամեն մի հայի, այսօրվա բարդույթն է» [54]:

«Մենք չենք կարող անտարբերութեամբ նայել այն իրողութեանը, թե ինչպէս բազմակուսակցականութեան պատը փոշիացնում է Հայաստանի կուսակցական ուժերը, թե ինչպէս հայերենի «կուսակցական սկզբունքայնութիւն» կայուն բառակապակցութիւնը գնալով վեր է ածվում «անսկզբունք կուսակցականութիւն» անգաղափար մտայնութեան, թե ինչպէս Հայաստանի ու հայ ժողովրդի համար արյուն թափած ու բազում զոհեր տված ազգային կուսակցութիւնների ղեկն անցնում է տկար ու գաղափարազուրկ մարդկանց ձեռքը, թե ինչպէս երիտասարդութեան հայրենասիրական, բարոյական և ազգային դաստիարակութեան գործն այսօր անհեռանկար խարխափում է հանրապետական բազմակուսակցական անգաղափար գզվուտութի մեջ» [40]:

«Բառարանները գրվում են մարդուն՝ աշխարհի անիմանալին իմանալի, անհասականալին հասկանալի դարձնելու համար: Հետևաբար բառարանը բանասիրական մի ստեղծագործութիւն է, որի և նրա ընթերցողի միջև երրորդ անձի գոյութիւնը բոլորովին ավելորդ է» [21]:

«Բառարանի և ընդհանրապես խմբակային աշխատանքների հեղինակների անունները հաճախ մոռացվում են, գործն է մնում: Հիմա քանի՞ մարդ գիտի մեր սքանչելի Հայկազյան բառարանի հեղինակներին, որ երկու հատորով է լույս տեսել, բայց տասներեքն էլ Ս. Ղազար կղզում, նյութը հավաքած, մնում են: Մեր բառարանի [«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»] վրա գրված է՝ Հակոբյան և ուրիշներ, այնպէս որ՝ ես այդ ուրիշներից եմ: Եվ դա ոչ զարմանալու բան է, ոչ էլ՝ գայրանալու: Այդպիսին է գիտութիւնների ճակատագիրը, կարևորը աշխատանքն է» [62]:

«Իմ կարծիքով Հայ քաղաքակիրթ մարդը առայժմ անհրաժեշտ մակարդակով և ծավալով չի արտահայտվում գեղարվեստական երկերում:... Մեր գրականությունը (արձակը) դեռևս չի ազատվել մարդուն պատրաստի սխեմաների սահմաններում ներկայացնելու թուլությունից»[59]:

«Գրականությունն է միավորողը և ոչ թե գիտությունն ու գիտական ծրագրերը, քանզի գրականությունն է եղել և կա Հր. Աճառյանի ասած՝ «լեզվի տարածման միջոցների՝ դպրոցի, լրագրություն, թատրոնի, երգի ու վեպի» հիմքը: Սակայն այն էլ իմանանք, որ լեզուն ոչ թե Հայաստանն ու նրա հողն ու ջուրն են ստեղծում, այլ այդ հող ու ջրի վրա ապրող Հայաստանցին, ինչպես որ «ազգային ուժեղ գրականությունը» ոչ թե Լոռին է ստեղծում, այլ նրա զավակը՝ Մեծ Լոռեցին» [42]:

«Աստվածաշնչյան անհիշելի և առասպելական ժամանակներում էր, որ մարդկային կյանքի տևողությունը հարյուրամյակներով էին հաշվում: Բայց այն օրվանից, երբ Եվան կերավ Աստծու արգելած պտուղը, և մարդը վունդվեց դրախտից, նրա կյանքի տևողությունն սկսեցին տասնամյակներով հաշվել» [54]:

«Ծիծաղն ու լացը, ընդհանրապես, միևնույն ակունքից են գալիս: Ծիծաղ է հարուցում այն, ինչ անսովոր է, և մեջը վտանգ չկա, իսկ եթե կա վտանգ, անսովորը հարուցում է սարսափ» [66]:

«Ամենահզոր, ամենամեծ սերը, դժբախտաբար, միշտ ի չիք է լինում» [66]:

«Սերը որոնում է, անվերջ որոնում: Սիրո մեջ ամենակարևորը հավատարմությունն է և ազնվությունը: Կինը տան պատիվն է, տղամարդը՝ փառքը» [66]:

## Լեզու, ուղղագրութուն, լեզվաքաղաքականութուն

«Լեզուն ունի իր զարգացման պատմական ընթացքը, օրինաչափությունները... և դաժան է, ոչ մի հեղինակության առջև չի ստրկանում» [29]:

«Լեզվի բառապաշարը մարդու՝ հաղորդակցմամբ իրականացվող հասարակական գործունեության անմիջական արտացոլումն է: ... Լեզվի բառապաշարի արագընթաց զարգացումը պահանջում է համազգային ուղղորդություն և հոգատարություն մեր լեզվի բառազանձի նկատմամբ» [29]:

«Բանակաշինութունը միայն զենքով ու տեխնիկայով չէ, այլ նաև լեզվով» [64]:

«Հայոց լեզուն մեր ազգային ինքնության պահպանման ամենագորեղ կռվանն ու միջոցն է» [67]:

«Հայերենը կարող է գոյատևել և իր լեզվաբանական ու ներքին լեզվական հարցերը լուծել միայն իր մայր հայրենիքում, իր կերտած պետության հոգածությամբ և նրա զբաղեցրած տարածքային սահմաններում միայն» [25]:

«Հայերենի համար իրավական տեսակետից զարգացման ավելի նպաստավոր պատմաչրջան, քան այսօրվանն է, երևի երբեք չի եղել» [63]:

«Մեր խորագետ նախորդները հայերենը դարձրին գիտության ու արվեստների լեզու: ... Նույնպիսի հպարտությամբ մենք չենք կարող խոսել մեր բանավոր լեզվի մաքրության ու ճոխության, մեր գրական հին լեզվի ժողովրդականության, գրական ու բանավոր լեզուների փոխադարձ հարազատության ու համապատասխանության մասին» [44]:

«Լեզվաշինական ճիշտ քաղաքականությունը շատ կարևոր նախապայման է լեզվի մաքրության ու հստակության, նրա համակարգի ազգային կերպարանքի պահպանման՝ սրանով պայմանավորված՝ լեզվի ուսուցումը հեշտացնելու համար» [44]:

«Աշխարհում չկա լեզու, որ գրավոր դառնալուց հետո իր գրի ու սրա հնչման միջև անընդհատ առաջացող փոփոխություններից ծագած դժվարությունները հեշտությամբ հաղթահարած լինի: Այսօր աշխարհի միասնական լեզու դառնալու հավակնող անգլերենը իր յուրաքանչյուր գրի հնչական ճիշտ արժեքը որոշելու համար մինչև քառասուն կանոնարկում ունի: ... Հայերենն, ուրեմն, բացառություն է՝ կարող լինել: Կարծել, թե մեսրոպյան գրերի հնչական արժեքը նույնությամբ պահպանելով է պայմանավորված եղել հայի ու հայերենի ազգային գոյատևումը, եթե տգիտություն է, ապա խաբեություն է, եթե խաբեություն է, ապա միամտություն է» [25]:

«Մխիթարյանները քաջ գիտեին, որ լեզուն և նրա ուղղագրությունը համակարգային են, և այդ համակարգայնության խախտումը իր՝ լեզվի առանձնահատկությունն ու էությունն է և ոչ թե անհատների կամքի արտահայտություն» [44]:

«Լեզվի հնչյունային սկզբունքով ձևավորված ուղղագրությունը հետ տանելու փորձերը հակապատմական են, ոչ առաջադիմական» [44]:

«Դասական ուղղագրության սկզբունքներն ավելի շատ խախտված են արևմտահայերենում» [44]:

«Տարբեր բարբառային հիմքերի վրա բարձրացած գրական հայերեններում, գրաբարի մեսրոպյան գրերի հնչույթային արժեքը յուրովի, հաճախակի էլ կամայական փոփոխությունների ենթարկելով՝ դրանցում ուղղագրական միասնություն չես ստեղծի» [25]:

«Ոմանք ամենայն լրջությամբ փորձում են մարդկանց հավատացնել, թե որոշ անհատների ջանքերով հայերենի տերմինաշինության ասպարեզում տարվում է մաքրամոլության քաղաքականութիւն», [մինչդեռ] (հավելումները այստեղ և այսուհետև մերն են) «օտար բառերի ու տերմինների թարգմանութիւնը, անհարկի օտարաբանութիւնների դեմ պայքարելը յուրաքանչյուր լեզվի բառակազմական ու տերմինաշինության ներքին օրինաչափութիւններից բխող կանոն է» [29]:

«Հայերենի բառային և ձևաբանական կառուցվածքը լայն հնարավորութիւններ են ընձեռում՝ ազատորեն փոխառութիւններ կատարելու, ...[և] մեր գրական լեզուն օտարաբանութիւնների դիմել է միայն ստիպված պարագայում, այսինքն՝ երբ չի կարողացել սվլյալ օտար բառը ճշգրիտ կամ հաջող թարգմանել» [29]:

«Ոչ մի դարում սեփական բառակազմական միջոցներով ստեղծված, սվլյալ լեզվի գրությանն ու արտասանությանը, իր ժողովրդի մտքին ու հիշողությանը հարազատ բառերն ու տերմինները երբեք չեն խանգարել այդ ժողովրդի առաջադիմությանը» [29]:

«Անհրաժեշտ, պարտադիր փոխառութիւնը մտավորականի և ժողովրդի կամքից վեր է, նա իր բնական ճանապարհով գալիս է, դառնում սովորական, գրական փոխառութիւնից մտնում է ժողովրդի լեզու, և դրանից հետո դուրս մղելու անհրաժեշտութիւնը ո՛չ մտավորականն է զգում, ո՛չ ժողովուրդը» [62]:

«Գիտության, մշակույթի աստիճանի բարձրացած, քաղաքակիրթ ժողովրդի լեզուն չի կարող օտար աղբյուրներից չօգտվել» [62]:

«Լեզվական փոխազդեցութիւնները անխուսափելի են, և այդ ճանապարհով առաջացած փոփոխութիւններն էլ լեզվի

բնականոն զարգացման դրսևորումներից մեկն են: Սակայն լեզվի համակարգայնությունը անխաթար պահելու, նրա բառակազմական ու ձևակազմական օրինաչափությունները, գրության ու արտասանության կանոնները շեղումներով ու բացառություններով չլքնելու և սրանց հետևանքով տվյալ լեզվի ուսուցման ճանապարհին նորանոր դժվարություններ չստեղծելու համար միշտ գիտակցված ու զգուշավոր վերաբերմունք է պետք օտար փոխառությունների նկատմամբ» [18]:

«Օտարաբանությունների հարուցած դժվարությունները բազմաբնույթ են: ...Երկարատև ու հզոր ազդեցությունների դեպքում երբեմն փոխառություններին հաջորդում են նաև օտար հնչյունների, բառերի օտար շեշտադրության ու առոգանության փոխանցումներ» [18]:

«Այսպես կոչված միջազգային տերմինաբանությունը... այժմ միասնական աղբյուր չունի: Այսօր չեք գտնի մի քանի տասնյակ գիտական տերմիններ, որոնք լեզվականորեն համալիարհային ընդհանրություն ունենան: ...Միջազգային տերմինաբանության հարցն այսօր ոչ այնքան լեզվաչինական, գիտագործնական հարց է, որքան լեզվական դիվանագիտության հարց» [29]:

«Փոխանակ գրքեր ու հոդվածներ գրելու բառակազմական լեզվական հմտությունների մասին, ...մաքրամոլության խրտվիլակի դեմ դրոշ պարզած մի քանի աղմկարարների թելադրանքով, մեր մասնազետներն ու տերմինաշինարարները զբաղված են տեսականորեն լուծված կամ բնավ չլուծվող մանր վեճերով: ...Ձեն դադարում արևմտահայ տերմինաշինությունը արևելահայերենի տերմինաշինությանը հակադրելու վնասակար ու դատապարտելի փորձերը» [29]:

«Անհատները կանոններ են սահմանում միայն և ոչ թե կանոններով լեզվի կառուցվածքի կամայական վերափոխում» [33]:



«Աշխարհի ամենազարգացած լեզուներն անգամ իրենց բառային միջոցներով այսօր չեն բավարարում գիտական տերմինաբանության պահանջները» [30]:

«Մենք պետք է մեր բարբառները փայփայենք, ... բայց երբ գրական լեզուն հակադրում ենք բարբառին և գրականի գեղեցկությունը, համաժողովրդական լինելը և այլն երկրորդ պլան ենք մղում, դրանով ո՛չ բարբառը և, առավելապես, ո՛չ գրական լեզուն բան չեն շահում» [63]:

«Անհրաժեշտ է լեզվի տեսչության փոխարեն ստեղծել հստակ ու հասցեական իրավասություններ ունեցող մի մարմին, որի գործունեությունը ուղղված լինի լեզվաքաղաքականության հռչակմանը, մշակմանը, լեզվապահպանությանը, ... վերահսկողությանը» [67]:

«Նոր ուղղագրությունը հնի փոխարինելու կոչերը հակապատմական, հետընթաց գործողության կոչեր են: ... Ուղղագրական միասնության կարելի է հասնել ոչ թե հետընթացով, այլ հին ու նոր ուղղագրությունների մերձեցման, մասնավորապես դեպի առաջ գնացող փոխդիջումների ճանապարհով» [60]:

«Առաջին հերթին մեր մտավորականությունը, ապա ողջ հասարակությանն անհրաժեշտ է օրինապահ լինել նաև լեզվական կանոնների պահպանման հարցում, այլապես իդեալական որոշումն անգամ չի կարող լեզվի մաքրություն պահպանման տեսակետից գործնական արժեք ունենալ» [18]:

«Լեզվի մաքրությունը պետք է հասնել ոչ թե տոնակատարությունների, այլ ամենօրյա հետևողականության, տքնաջան աշխատանքի միջոցով» [67]:

## Հովհ. Բարսեղյանն ու ըրիչները մասին

[Հրաչյա Աճառյան]

«Հր. Աճառյանի հայագիտական ժառանգությունն ընդհանրապես, իսկ հայոց լեզվի պատմությանը նվիրված ստեղծագործությունները՝ մասնավորապես, իրենց ծավալով ու նյութի ընդգրկման խորությամբ զարմացնում են գիտական աշխարհին և ակամա հարց առաջացնում, թե ի՞նչն էր այդ տիտանական աշխատանքի ոգևորության աղբյուրը: Այլ կարգի բազում հանգամանքների մեջ, իբրև այդ հարցի ուղիղ պատասխան, անվարան կարելի է ասել՝ այդ աղբյուրը Աճառյանի վառ հայրենասիրությունն էր: Իր ժողովրդի պաշտամունքն ունեցող գիտնականի մոտ այդ պաշտամունքը փոխվեց նրա լեզվի մշակույթի և ողջ պատմության պաշտամունքի, և ինչպես յուրաքանչյուր մտածող, Աճառյանն էլ, երբեք չնույնացնելով դրության տեր անհատներին ու պաշտոնատար անձանց, սրանց վարվելակերպն ու վարքագիծը հասարակության և ժողովրդի հետ, հաղթահարեց իր ստեղծագործական աշխատանքի այս կարգի բոլոր հոգեբանական խոչընդոտները և դարձավ սովետական շրջանի բանասիրության վիթխարի մեծություններից մեկը» [32]:

«Եթե մինչև Աճառյանի աշխատությունների հրապարակ գալը դեռևս կարող էին կասկածներ լինել հայերենի ցեղակցական կապերի այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ հայերենապարսկերեն, հայերեն-խեթերեն, հայերեն-փոյուզերեն, հայերեն-ուրարտերեն, հայերեն-կովկասյան լեզուներ ծագումնաբանական կապերի հարցերը, ապա նրա աշխատություններով ըստ էության վերանում են այդ վեճերը, և բավականին համոզիչ ու փաստարկված է դառնում հայերենի հնդեվրոպական ինքնությունը լեզվաճյուղ լինելու Հյուսիսային տեսությունը» [32]:

«Գաղթօջախների ուժացման և նորերի գոյացման պայմաններում Հր. Աճառյանը մշտապես գտնվել է պատմական իրադարձությունների հետևից գնացողի, իր գրառումները անընդհատ լրացնողի և թարմացնողի դերում: ... Նա այդ թեմայի առաջին ամբողջական ուսումնասիրողն է, որի քննությունը, ինչպես լեզվաբանական ասպարեզում, այստեղ էլ հեռու է ազգայնական, կրոնական, կուսակցական, հարեանահովանավորչական կողմնակալ կաշկանդումներից» [22, 50]:

«Բացառիկ է «Պատմութիւն Հայոց գաղթականութեան» [Հ. Աճառյան] գրքից քաղված պատմական դասերի դերը Հայաստանի պատմության արդի փուլի համար: ... Հեղինակի յուրայինների և այլոց գործի գնահատման չափանիշները, ազգային, իրավական ու բարոյական լինելուց բացի, նաև համամարդկային են»: «[Աշխատությունը] եզակի աղբյուր է նաև բնագրային առումով, Հայերի գրաբանության տեսանկյունից... Նույն բառը... կարող ենք գտնել... 3-4 ուղղագրությամբ: Ով փորձի գրանք միասնականացնել (թեկուզ և դասականով), մեղանշած կլինի պատմականության դեմ, ... անտեսած կլինի մեծանուն Հայագետի այն տասնամյակների տառապանքները, որ նա կրել է հին ուղղագրությունից նոր ուղղագրությանն անցնելու իր ողիսականում» [22, 50]:

«Կորստից փրկված է Հ. Աճառյանի ևս մեկ գլուխգործոցը. մինչդեռ գաղթական Հայի փրկության համար, քանի դեռ նա Հայրենիք չի վերագարձել, լուսավորչական Հայ մնալու և մայրենի լեզուն չմոռանալու բարի խորհրդից բացի, պայծառատես Աճառյանը անգամ ուրիշ ճանապարհ չի տեսնում» [22, 50]:

#### [Գրիգոր Ղափանցյան]

«Ղափանցյանը ժամանակի հետ քայլող հայրենասեր գիտնական էր: Նա չէր կարող սառնասրտությամբ հեռվից դիտել, թե ինչպես, չարաշահելով հայ-արմեններիս եկվոր լինելու հնդեվրո-

պաբանական տեսությունը, մեր հայրենիքի մեծ մասը բռնազավթած երեկվա քոչվոր ավարառու ցեղերը, արդեն պետականության հասած, 1930-40-ական թթ. փորձում էին բռնազավթել ու հայաթափ անել նրա՝ կիսանկախության հասած փոքր մասը՝ Խորհրդային Հայաստանը ևս: ... Այս տեսանկյունից ... խիստ արդիական ենք համարում նրա հայացքները հայ բարբառների և ժամանակակից գրական հայերենի երկու ճյուղերի զարգացման պատմական ընթացքի, արդի վիճակի ու դերի և սրանց ապագայի վերաբերյալ: Գր. Ղափանցյանի համար հայ բարբառները թե՛ նախագրաբարյան, թե՛ գրաբարյան և թե՛ հետգրաբարյան ժամանակաշրջաններում հայոց լեզվի կարևոր, երբեմն կամ տեղ-տեղ միակ տարբերակն են, նրա պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրը [45]:

«Ղափանցյան գիտնականի գիտական ժառանգության մասին քննադատություններ շատ եմ կարդացել ու լսել, բայց Ղափանցյան մարդու և գիտնական-դասախոսի մասին ոչ մի չարախոսություն լսած չկամ: Նրան ոչ ոք հայրանունով չէր դիմում, նա մեզ համար միայն ընկեր Ղափանցյան էր: Բայց առաջին իսկ դասախոսություններից մենք գիտեինք նրա «լուսահոգի հոր՝ Այվազի» անունը, որին նա առիթը բաց չէր թողնում երախտագիտությամբ հիշելու և վերհիշելու: Ղափանցյանի խստահայաց ու խոժոռադեմ արտաքինի տակ մենք տեսնում էինք նրա՝ մանկան պես պարզ ու միամիտ, մանկան պես բարի ներաշխարհը, զգում էինք նրա՝ որպես իսկական գիտնական ուսուցչի կրած խաչի ծանրությունը» [45]:

[Գևորգ Զահուկյան]

«Ընդունված է ասել՝ բանաստեղծ ծնվում են, գիտնական՝ դառնում: Բայց բոլոր մեծերի, այդ թվում Գ. Զահուկյանի կյանքի օրինակով անվարան կարելի է ասել՝ ամեն իսկական արհեստ ու արվեստ, շնորհք ու մտավոր կարողություն աստվածային է» [38]:

«Ջահուկյանը հայագիտութեան լծի ծանրութիւնը զգացող և այդ լուծը արժանապատվութեամբ ու վայել առաջ տանող գիտնական է, հայ լեզվաբանութեանը համաշխարհային փառք ու հանճար բերող գիտնական» [38]:

«[Սորհրդային տարիների քաղաքական վերուվարումների մեջ] ավանդական քերականագիտութեանն ու Մխիթարյան դպրոցի հայագիտութեանը հայտարարվեցին որպես սխալաստիկ, կղերական, իսկ պատմահամեմատական հայագիտութեանը՝ բուրժուական վնասակար ուսմունքներ: Այս ծանր ժամանակաշրջաններում, եզակիների հետ, Գ. Ջահուկյանին էր վիճակված մի կողմից պաշտպան կանգնելու դասական հայագիտութեան սկզբունքներին, մյուս կողմից՝ ղեկավարելու հայերենագիտութեան մեջ լեզվաբանական նոր ուղղութիւններ ներդնելու, այն ժամանակակից համաշխարհային լեզվաբանութեան մակարդակի բարձրացնելու պայքարը» [38]:

«Բարեկիրթ անձնավորութիւն է թե՛ մտավոր, թե՛ արտաքին վարքագծով: Պարզ է ու հասարակ, մոլորութիւնների մեջ անգամ՝ անկեղծ ու անմիջական: Սկզբունքային է ամեն ինչում: Չի սիրում պարծենկոտ տգիտութիւնը և միամիտ խորամանկութիւնը: Ատում է քծնանքը: Քծնանքով Ջահուկյանի սիրտը շահելու հույսը տապ անապատում հյուսիսային զովութիւն ակնկալել է նշանակում: ...Ամեն ինչ, նույնիսկ բնութեան օրենքները նրա կենցաղում ստորադասված են և ծառայում են գիտական աշխատանքի շահերին» [38]:

«Գ. Ջահուկյանը եթե ոչ հիմնականում, ապա նաև գալիք սերունդների համար գրող գիտնական է, և նրա վաստակի իսկական գնահատանքը եկող սերունդները պետք է տան՝ այդ մասին ամբողջական ուսումնասիրութիւններ ստեղծելով» [38]:

[Էդուարդ Աղայան]

«Գիտնականի ապրած կյանքը ոչ թե ժամանակի տեղոլութամբ, այլ այդ ընթացքում ստեղծած գիտական վաստակի հունձքով է չափվում. իսկ Աղայանը հայագիտության առատ հունձքի վաստակով բեռնավորված գիտնական է» [35]:

«Հայերենի ծագման, մեսրոպյան այբուբենի ստեղծման պատմության, գրական հայերենի տարբեր փուլերի, սրանց ներքին կապի ու անցումների, սրանց ու հայ բարբառների փոխհարաբերության, հայերենի կառուցվածքի տարբեր կողմերի բնութագրումների՝ հայոց լեզվի պատմության ու հայերենի համեմատական քերականության բազմազան հարցերի մեջ չկա քիչ թե շատ ուշագրավ խնդիր, որի պարզաբանման մեջ իր գիտական ավանդը ներմուծած չլինի Էդ. Աղայանը» [35]:

«Արդի հայերենի բացատրական բառարանը» հայ բառարանագրության խոշորագույն նվաճումներից է: Օգտագործելով հայ բառարանագիտության հարուստ փորձը, նրանում կուտակված լեզվական փաստական նյութը, դրան ավելացնելով ժամանակակից հայերենի մեջ վերջին մոտ կես դարի ընթացքում տեղի ունեցած բառապաշարային փոփոխություններն ու կուտակումները, որոնք չէին ենթարկված բառարանային մշակման, պրոֆ. Աղայանը արդի հայերենի բառապաշարը ներկայացրել է իր իմաստային կառուցվածքի, քերականական անհրաժեշտ հատկանիշների, դարձվածքային միավորների գիտական ճշգրիտ ու փաստարկված համակարգմամբ ու նկարագրությամբ» [35]:

[Թադևոս Հակոբյան]

«Մեր օրերի հակազգային սառնաշուռն քամիներին ընդդիմադիր համբերատարությամբ, առանց հավուր պատշաճի փառաբանվելու մոլուցքի, Թադևոս Հակոբյանը դարձավ հայ դարավոր պատմագրական դպրոցի, մասնավորապես մեծանուն Ալիշանի գործի իսկական շարունակողը» [37]:

«Թաղևոս Հակոբյանը նման չէր Հայաստանի ու Հայերենի մասին իրենց խոսքի ու գրի ազիտացիոն պերճախոսությամբ հայրենասիրության էթանագին փառք ակնկալող գիտնականներին: Նրա ուսումնասիրությունները զերծ են առարկայազուրկ տեսական դատողություններից ու մոգոնումներից: Նա իր ուսումնասիրության առարկան և հիմնահարցը միշտ քննում է տեղագրական, հնագիտական, հուշարձանային, պատմական-արխիվային նյութերի վկայակոչմամբ և միայն սրանց հիման վրա արված վերլուծություններով: Եթե Պատմական և Արևմտյան Հայաստանին Հակոբյանը, ինչպես Ալիշանը, ծանոթ էր հեռվից, ապա այս դաժանորեն փոքրացված մի բուռ Հայաստանը նա գիտե՞ր քար առ քար, թուփ առ թուփ» [37]:

«[Նա] իր անունը անքակտելի կապերով կապեց Հայկական թագավորությունների ու մայրաքաղաքների պատմության, Հայոց աշխարհների ու գավառների, Հայկական լեռնաշխարհի լեռների ու լեռնաշղթաների, դաշտերի ու հովիտների, գետերի ու լճերի, բնակավայրերի ու կառույցների, վանքերի ու հուշարձանների հարյուրհազարավոր անմահ անունների հետ\* Համեստ գիտնականը վերակենդանացրեց այդ անունները, հասկացությունները, գաղափարները և դրեց հիշողությունը կորցնելու տագնապալի վտանգի մեջ գտնվող իր ժողովրդի գրասեղանին, ... Հայ ժողովրդին վերադարձրեց նրա կորսված Հայրենիքը՝ հոգևոր Հայաստանը» [37]:

### [Գրիգոր Գարեգինյան]

«Համբավավոր ուսուցիչ և հմայքով մարդ էր նա: Հայերենի բազմաձև ու բազմաբովանդակ նախադասության կառույցների ներդաշնակությունը հետազոտող Գարեգինյանն ինքն էլ արտաքինի ու ներքինի մի նուրբ ներդաշնակություն էր: Նրա արտաքինը անտեսանելիորեն ձուլված էր հուլթյանը: Թեև արտաքինապես բարեկիրթ ու առփինքնող, միշտ շիկ ու կոկ, բայց ամբողջությամբ հուլթյուն էր նա, միայն հուլթյուն: Եվ այդ հուլթյան մեջ նստած էր մարդը՝ բարի, ազնիվ, առաքինի մարդը: Հա-

մեստ էր ամոթխածության աստիճանի, մեծաՀոգի էր ու ներողամիտ, բայց երբ մեջտեղը գիտական սկզբունք, ոտնահարված ճշմարտություն կամ անպաշտպան ազնվություն կար, Գարեգինյանի խիզախ բռնկումը հասնում էր հանդգնության» [39]:

«Աշխարհն աղքատացավ ևս մի իսկական մարդով: Էլ ո՛վ մնաց... Մնում են քչերը: Իսկ այդ քչերն էլ երևի ստեղծված են հանուն այն բանի, որ Աստծո մահկանացուն մարդ կոչվելու համար իրեն շատ նվաստացած չզգա...» [39]:

#### [Պավել Շարաբխանյան]

«Մանկավարժ-ուսուցչապետ էր իր լայնախոհ իմացականությամբ, եռանդուն դաստավությամբ, խստապահանջ արդարամտությամբ» [46]:

#### [Գուրգեն Սևակ]

«Դժվար է գերազնահատել Գ. Սևակի ծառայությունը Հայերենի լեզվաշինության և տերմինաշինության գործում: Նա Հայերենի մաքրության ու անաղարտության ճանաչված նախանձախնդիրներից է» [28]:

#### [Լևոն Հախվերդյան]

«Լ. Հախվերդյանն «իր խոսքի արժեքը գիտցող, բարեխիղճ գիտնական է: Նա ուղղագրության հարցերը քննում է գիտության և ոչ կուսակցական քարոզչության դիրքերից» [48]:

#### [Ակակի Շանիձե]

«Ակակի Շանիձեն, լինելով ամենամեծ վրացագետ-քարթվելագետներից մեկը, միաժամանակ համաշխարհային լեզվաբանության ականավոր ղեմքերից էր, ինտերնացիոնալիստ-գիտնական, մասնավորապես Հայ ժողովրդի ու նրա լեզվի մեծաքանքար ուսումնասիրողը» [36]:



[Փ.Գ. Մեյթիխանյան]

«[«Աստվածաշնչի և Հայոց սուրբ անվանց բառարանի» յուրաքանչյուր անուն բառահոգվածը] քննվող անվան ծագումնաբանական, աղբյուրագիտական, բանասիրական, ինչպես նաև աստվածաբանական ու պատմամշակութային ավարտուն, ոչ միայն սովորական, այլև նույնիսկ հարցի գիտակաների համար շատ ու շատ հայտնություններով լի մի ուսումնասիրություն է» [21]:

«Ես լեզվաբան եմ, և այս բառարանի իմ ամենասիրելին նրա լեզուն է: Կարդացե՛ք աստվածերգության գրաբար թե միջին հայերեն, արևմտահայերեն թե արևելահայերեն բերված բնագրային տողերը, նրանցում չեք գտնի անհասկանալիության տարածված վախը, լեզվական օտարության կուսակցական քարոզչության Նեոի մտահղացումը: Գրական միասնական հայերենի հավերժ փառաբանումն է այս բառարանը» [21]:

«Սա անհավատներին հավատի, իսկ ուրացողներին դարձի բերող բառարան է» [21]:

[Ալեքսան Կիրակոսյան]

«Իր մարգարեական դարձած ձայնը ժամանակակից և գալիք սերունդներին հասանելի դարձնելու, նրանց դույզն-ինչ օգտակար լինելու մտայնությամբ է գրված «Մայրամուտի շեմին» հուշագրությունը» [52]:

## ՈՒՐԻՇՆԵՐԸ

### Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«Հ. Բարսեղյանը թե՛ որպես գիտնական ու մանկավարժ, թե՛ որպես մարդ ու քաղաքացի, մշտապես աչքի է ընկել շիտակությամբ, համարձակությամբ ու արդարամտությամբ և հատկապես բացառիկ պահանջկոտությամբ թե՛ իր և թե՛ այլոց նկատմամբ: Նրա մարդկային առաքինության այդ վեհ գծերը լավագույնս զգացել են նրա սաները, իսկ որդեգրած գիտական տեսակետը հետևողականորեն պաշտպանելու հատկությունը՝ գործընկերները: Տեղին է հիշատակել Բարսեղյանին նվիրած գրքերից մեկի վրա Պարույր Սևակի կատարած հետևյալ մակագրությունը. «Սասնա օրինավոր ծուռ ընկերոջս, Սասնա օրինավոր ծուռ Պարույրից» [96]:

«Հովհաննես Բարսեղյանի հետ երբևէ առնչվածները նրան ճանաչում են որպես սիրված, մեծ հմայքի տեր դասախոսի: ...Միշտ սիրված է ուսանողների կողմից, նախ և առաջ՝ բազմագիտակ դասախոսությունների ու նաև արդարամիտ կեցվածքի համար» [96]:

*Նորայր Պողոսյան*  
(բանաս. գ.թ., դոց.)

«Հովհ. Բարսեղյանի համար Երևանի պետական համալսարանը սրբազան կրթօջախի արժեք ուներ, թանկ, անգնահատելի, հարազատ օջախի չափ: Համալսարանի պատիվն ու հեղինակությունը նա համարում էր իրենը» [99]:

«Խստապահանջ, անզիջում էր նախ իր, նոր միայն գործընկերների և ուսանողների հանդեպ: Աչք չէր փակում աչքապահպան, ամենաթողության, թափթփվածության, ձևական-ցուցադրական հայրենասիրական նկրտումների հանդեպ. վարքագիծ-կենսագիրքորոշում, որն այսօր, ցավոք, հարգի չէ» [99]:

«Չափազանց ուշագրավ է այն անհերքելի իրողությունը, որ անկշռելի վաստակի տեր, համընդհանուր սեր և ակնածանք վայելող մեծահռչակ անձնավորության հոբելյանն անցած երկար ու ձիգ տարիների ընթացքում գեթ մի անգամ չի նշվել: Գուցե այդպես ստացվել է այն պատճառով, որ մարգարիտի փառքը փրփուրն է խլում» [99]:

*Գևորգ Զաքարյան*  
(ՀՀ վաստ. ուսուցիչ),

## Նրա աշխատությունների մասին

[«Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը  
և նրա հին ու նոր քննադատությունները»]

«Հեղինակը Աբեղյանի քերականական տեսության խորունկ մեկնությամբ և կենդանի լեզվի շատ փաստերով ընթերցողին է ներկայացնում ժամանակակից հայերենի քերականական պատկերը, որը, նրա կարծիքով, պետք է տեղ գտնի, վերականգնվի դասագրքերում» [78]:

*Ռաֆայել Իշխանյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

[«Հայերենի խոսքի մասերի  
տարբերակման տեսությունները»]

«Հ. Բարսեղյանի աշխատությունը թարմ հոսանք է հայ լեզվաբանության անդաստանում և շատ բան իր տեղը դնող, պարզող, հստակեցնող հոսանք: ... [Այն կարող է դասվել] Մ. Աբեղյանի քերականագիտական համակարգի քննությանը նվիրված լավագույն երկերի շարքում, և ամենալավն է իբրև դիպուկ, կարևորը ոչ կարևորից հստակորեն զանազանող և համակարգի ընդհանուր պատկերը ճշտությամբ ներկայացնող: ... Գիտական պաշտպանության տակ են առնվում Մ. Աբեղյանի տեսակետները՝ ժամանակին նրանց դեմ կատարված և մինչև այժմ անպատասխան մնացած հարձակումներից» [81]:

*Ռաֆայել Իշխանյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.),  
*Աշոտ Սուքիասյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

[«Հայերեն ուղղագրական-ուղղախոսական  
տերմինաբանական բառարան»]

«Նկատելի է, որ բառարանը, ամբողջութեամբ վերցուցած՝ բացառիկ արժեք կներկայացնէ հայ բառարանագրութեան համար: Նմանօրինակ բառարանի մը առկայութիւնը, հայ իրականութենէն ներս կենսական անհրաժեշտութիւն մըն էր... Բառարանը կու գայ գոցելու հայ բառարանագրութեան մէջ գոյութիւն ունեցող բաց մը՝ նոր որակ ու ներդրում կատարելով այդ մարզէն ներս» [79]:

«... Սրտագին կը շնորհաւորենք անուանի լեզուաբանը, որ իր կոթողային աշխատութեամբ տուաւ իր գիտնականի ներհուն ընդունակութեան, խորաթափանց միտքին, անխոնջ աշխատանքին բարձրագոյն ստուգանիչը եւ նաեւ մեկնակէտը լեզուագիտական իր մարզը աւելի բեզուն ու արդիւնաւէտ դարձնելու՝ յօգուտ հայագիտութեան» [79]:

*Պարոյր Աղպաշեան*  
(լիբան.-հայ գրող, հրագ.)

**[[Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու]]**

«[Այն] պետականորեն հաստատված փաստաթուղթ է, բազմազան օրենքներով՝ ամփոփված մի գրքի մեջ, հիանալի խմբագրված և սրբագրված» [94]:

*Վաչագան Սարգսյան*  
(խմբ.-հրատարակիչ)

**[[Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան]]**

«[Բառարանը] հայրենական գիտության վերջին ժամանակների խոշորագույն նվաճումն է: ...Նրանով վերականգնվում է մեր ժողովրդի պատմական հիշողությունը» [93]:

*Սամվել Մուրադյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

«Մեր սեղանին է դրված Հայաստան աշխարհի ու նրա հարակից շրջանների տեղանունների նախորդը չունեցող մի հիմնարար, գիտականորեն հագեցված մայր բառարան, որի հրատարակումը պատիվ կբերի ցանկացած ժողովրդի» [86]:

«Ուրախալի է, որ տրվում է մշակութային ժառանգությունը՝ գոյություն ունեցող, կամ անցյալում գոյություն ունեցած դպրոցների, ինչպես նաև այլ ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների, թերթերի, հանդեսների, ամսագրերի հրատարակության, բնակավայրում ծնված նշանավոր մարդկանց մասին հարուստ տեղեկույթ» [86]:

*Հրաչյա Գաբրիելյան*  
(աշխարհ. գ.դ., պրոֆ.)

«Հազիվ թե այսօր մի այլ աշխատության հրատարակությունն ալելի կարևոր լիներ հայագիտության համար, քան այս բառարանինը» [82]:

*Ռաֆայել Իշխանյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

«... Նրա հեղինակների անունները այսուհետև իրենց պատվավոր տեղը կունենան Մխիթար Սեբաստացու, Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի, հայ բառարանագրության մյուս երախտավորների շարքում» [82]:

*Արշակ Մադոյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

«Բնույթով հանրագիտական այդ հիմնարար բառարանը Հայկազյան բառագրքի, հայոց լեզվի արմատական բառարանի և մյուս աննախադեպ բառագրքերի հետ միասին ամբողջացնում է մեր անչափ հարուստ բառարանագրությունը» [85]:

«Կան հազարավոր անուն-հոգվածներ, որոնցից յուրաքանչյուրը ոչ թե տեղեկատու է, այլ սեղմ, ամբողջական ուսումնասիրություն...» [85]:

«Այդ, մեր կարծիքով, տեղանունների ժամանակակից բառարանագրական նոր մշակում է, որի նմանը չենք տեսնում նախորդ ժամանակների տեղանունների բառագրքերում ... Իսկ ինչքան բարդությունների հետ են կապված անունների տառագարձությունները, ստուգաբանությունները, հիմնական անուն-հոգվածների ընտրությունը, նույն կարգի տեղանունների բնագրերի համամասնության պահպանումը, տվյալների ընտրությունը» [85]:

«Բառարանը հայ մշակույթի նշանակալի երևույթներից է՝ կազմված հարստագույն, ծովածավալ նյութի հիման վրա, խիստ գիտական սկզբունքներով: ...Այն յուրատեսակ սերմացու է հետագա տեղանվանագիտական հետազոտությունների համար» [85]:

«Ստեղծվելով աղբյուրների հիման վրա, գրախոսվող բառարանը, մեր կարծիքով, ինքը դարձել է հայ ժողովրդի ու նրա հայրենիքի ընդհանուր պատմության հուսալի աղբյուրներից» [85]:

*Սուրեն Երեմյան*  
(ՀՀ ԳԱ ակադ.)

«...Անվանակարգային տերմինների ծավալով ու հարստությամբ, բառահոգվածի գիտական մշակվածության մակարդակով, գլխաբառի բազմակողմանի բնութագրությամբ, տեղանունների՝... աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսագիտական, լեզվաբանական, վիճակագրական և այլ տվյալների ճոխությամբ բազմահատոր սույն աշխատանքը աննախադեպ երևույթ է ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության մեջ» [82]:

*Աշոտ Սուքիասյան*  
(բանաս. գ.դ., պրոֆ.)

«Քաղաքակիրթ ժողովուրդներից քչերն ունեն նման աշխատություններ, եղածների ստեղծման վրա էլ աշխատել են մի շարք ինստիտուտներ ու գիտական կենտրոններ: [Նրանում] մեծ տեղ է տրված տարածաշրջանի էթնիկ կազմավորումների և անտիկ աշխարհի հզոր պետությունների հետ հայ ժողովրդի կապերին ու առնչություններին» [91]:

«[Բառարանը] սերունդներին է վերադարձնում պատմական հիշողությունը: ... Մեծ է նշանակությունը նաև թուրքերի և ադրբեջանցիների նենգ, ստահոգ, պատմության կեղծարարության քարոզչական արշավի դեմ տարվող պայքարում» [91]:

*Ալեքսան Կիրակոսյան*  
(քաղ. և պետ. գործիչ)



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից (հայ., ռուս.) .....	5, 7
Բանասիրական գիտությունների դ-ր, պրոֆ. Յ. Խ. Բարսեղյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը (հայ., ռուս.) ...	9, 11
Վ. Ա. Մաղալյան - Անվանի հայերենագետն ու վաստակաշատ համալսարանականը .....	13

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Յ.Խ. Բարսեղյանի աշխատանքների ժամանակագրական ցանկ

Մենագրություններ .....	23
Բառարաններ, տեղեկատուներ .....	26
Դասագրքեր .....	28
Նյութեր ժողովածուներում և այլ գրքերում .....	29
Հոդվածներ, գրախոսություններ (թերթերում և հանդեսներում) .....	34
Հարցազրույցներ, բանավեճեր .....	45
Խմբագրած աշխատանքներ .....	49

### Յ.Խ. Բարսեղյանի մասին

Գիտական աշխատանքների գրախոսություններ .....	51
Կյանքի և գործունեության մասին .....	58
Վերնագրերի այբբենական ցանկ (հայ., ռուս.) Յ.Խ. Բարսեղյանի աշխատանքները .....	61, 65
Յ.Խ. Բարսեղյանի մասին Գիտական աշխատանքների գրախոսություններ .....	63, 67
Կյանքի և գործունեության մասին .....	64, 68
Նկարագրված պարբերականների այբբենական ցանկ .....	69

## ՀԱՎԵԼՎԱԾ

### Քաղվածքներ բնագրերից

Յ.Խ. Բարսեղյանի մտքերից Հայրենիք, քաղաքականություն, մշակույթ, սեր .....	75
Լեզու, ուղղագրություն, լեզվաքաղաքականություն .....	79
Հովհ. Բարսեղյանն ուրիշների մասին .....	84
Ուրիշները Յ.Խ. Բարսեղյանի մասին .....	92

# СОДЕРЖАНИЕ

От составителя (арм., рус.) .....	5, 7
Основные даты жизни и деятельности д-ра филологических наук, проф. О.Х. Барсебяна (арм., рус.) .....	9, 11
В.С. Магальян - Известный арменовед и заслуженный университетский .....	13

## БИБЛИОГРАФИЯ

### Хронологический указатель трудов О. Х. Барсебяна

Монографии .....	23
Словари, справочники .....	26
Учебники .....	28
Материалы в сборниках и других книгах .....	29
Статьи, рецензии (в газетах и журналах) .....	34
Интервью, полемика .....	45
Редактированные им труды .....	49

### Об О. Х. Барсебяне

Рецензии научных трудов .....	51
О жизни и творчестве .....	58
Алфавитный указатель заглавий (арм., рус.)	
Труды О.Х. Барсебяна .....	61, 65
Об О. Х. Барсебяне	
Рецензии научных трудов .....	63, 67
О жизни и творчестве .....	64, 68
Алфавитный указатель периодики .....	69

## ПРИЛОЖЕНИЕ

### Цитаты из оригиналов

Из мыслей Ов. Барсебяна	
Родина, политика, культура, любовь .....	75
Язык, правописание, языковая политика .....	79
Ов. Барсебян о других .....	84
Другие об Ов. Барсебяне .....	92

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ստորագրված է տպագրության 21.06.2011 թ.:  
Չափսը՝ 60x84<sup>1/16</sup>: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 5.0 մամուլ,  
տպագր. 6.25 մամուլ= 5.8 պայմ. մամուլի:  
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 99:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1:

